

Հնչակեան Քսան Կախաղաններու 100-Ամեակը Նշուեցաւ Բարձր Մակարդակով Աւելի Քան 1400 Հայեր Ներկայ Եղան Հանդիսութեան



Տեսարան մը հանդիսասրահէն



Քոնկրէսական Ատամ Շիֆին կը յանձնուի «Ստեփան Սապահ-Գիւլեան» մրցանակը

Կիրակի, Յունիս 14-ին, Կլէնտէլի «Ալեքս» թատերասրահէն ներս, աւելի քան 1400 հայորդիներու ներկայութեան տեղի ունեցած, բարձր մակարդակի ու սպաւորիչ հանդիսութեան մը ընթացքին նշուեցաւ 1915 թուականի Յունիս 15-ին, Պոլսոյ Սուլթան Պայազիտ հրապարակին վրայ կախաղան բարձրացած Հնչակեան քսան հերոսներու նահատակութեան 100-ամեակը:

ՄԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինի կազմակերպութեամբ տեղի ունեցած այս միջոցառումին ներկայ էին ԱՄՆ Գոնկրէսի անդամ Ատամ Շիֆ,

Կլէնտէլի քաղաքապետ Արա Նաճարեան եւ քաղաքապետական Խորհուրդի անդամները, Հայաստանի Հանրապետութեան Լոս Անճելըսի հիւպատոս Վալերի Մկրտումեան, Հայ Առաքելական, Աւետարանական եւ Կաթողիկէ եկեղեցիներու առաջնորդները, Ռամկավար Ազատական Կուսակցութեան Ատենապետը, Իրանահայ եւ Պոլսահայ միութիւններու ներկայացուցիչները, ինչպէս նաեւ գաղութային այլ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Երեկոյին ներկայ կը գտնուէր, Հայաստանէն ժամանած ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութեան ատե-

նապետ՝ Յակոբ Տիգրանեանը եւ Կեդրոնական Վարչութեան այլ անդամներ, ինչպէս նաեւ՝ օրուայ գլխաւոր բանախօս, հայրենի հասարակական գործիչ Սարգիս Հացպանեան:

Օրուայ հանդիսավարուհի Ընկրուհի Ծովիկ Քէօրօղլեան նախ հրաւիրեց ներկաները յոտնկայս ունկնդրելու Ամերիկայի Միացեալ Նահանգներու, Հայաստանի Հանրապետութեան եւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան քայլերգները, կատարողութեամբ մեներգչուհի Անահիտ Ներսիսեանի, դաշնակի վրայ ընկերակցութեամբ Լեւոն Աբրահամեանի:

Ապա, ներկաները լուծեամբ յարգեցին Հայոց Յեղասպանութեան զոհ՝ 1.5 միլիոն հայերու եւ Հնչակեան քսաններու յիշատակը:

Ծովիկ Քէօրօղլեան անգլերէն ու հայերէն լեզուներով իր բացման խօսքին մէջ ներկայացուց Քսան Կախաղաններու պատմական ու ապա յայտարարեց ըսելով, «Հեռատես խիզախ եւ Յանձնառու, նշանաբանով Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը կը շարունակէ իր երթը, հայկական հողերուն վրայ եւ աշխարհ չորս կողմերուն: Իբրեւ առաջին քա-

Շար-ը էջ 6

ՊԱՅԱՆՁԱԳԻՐ՝ ՎԵՐԱՏԻՐԱՆԱԼՈՒ ՔՍԱՆՆԵՐՈՒ ԱԾԻՒՆՆԵՐՈՒՄ

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Քսան Գախաղանի ղեկավարներու կախաղան քարճարանալու հարիւր ամեակին առթիւ, կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը պահանջադրանքներ կայացուց Պոլսոյ ֆաղափապետութեան, պահանջելով տիրանալ Գախաղաններու անիւններուն եւ գանձնաբեր տեղերէն փոխադրել: Ստորեւ՝ պահանջագիրը:

Պարոն ֆաղափապետ,

1915 թուականի Յունիս 15-ին, Պոլսոյ Սուլթան Պայազիտ հրապարակին վրայ կախաղան քարճարան 20 հայորդիներ, որոնք Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան ղեկավարներն ու պատասխանատու անդամներն էին: Անոնք էին՝ «Փարամագ» անունով ծանօթ Մատթէոս Սարգիսեան, Յակոբ Պասմանեան, Գափրիէլ Քէլչիշեան, Սմբատ Գլընեան, Ռուբէն Կարապետեան, Պետրոս Թորոսեան, Արմենակ Համբարձումեան, Արքայազմ Մուրատեան, Արամ Աչբօյաչեան, Հրանդ Եկաւեան, Գարեգին Պողոսեան, Պողոս Պողոսեան, Մուրատ Զափարեան, Թովմաս Թովմասեան, Երեմիա Մանանտեան, Մկրտիչ Երեցեան, Գեղամ Վանիկեան, Երուանդ Թովուզեան, Յովհաննէս Տէր Եղիայեան, Գառնիկ Պոյանեան:

Անոնք մտնելով օրը քաղաքում են ընդհանուր փոսի մը մէջ՝ Էտիքնէ գափուի հայոց գերեզմանատան մէջ: Մենք, Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնս, կը ցանկանանք մեր ղեկավար ընկերներու անիւնները Պոլսէն արտերկիր տեղափոխել: Հետեւաբար, ձեզմէ կը պահանջենք մեզի տեղեկացնել այս պահանջը կատարելու անհրաժեշտ ֆայլերուն եւ անոնց հերթականութեան մասին:

98 Տարեկանին Կախճանեցաւ Ամերիկահայ Բարերար Քըրք Քըրքեան

98 տարեկանին Լոս Անճելըսի մէջ վախճանեցաւ ամերիկահայ միլիարատէր եւ բարերար Քըրք Քըրքեանը:

Անոր հիմնած «MGM Resorts» ընկերութիւնը, որ Ամերիկայի տարածքին ունի 62 հազար աշխատող, հաղորդագրութեամբ մը եկաւ իր յարգանքի տուրք մատուցելու «մեծ մարդու, մեծ գործարարի, նորարարի եւ մեծ առաջնորդի յիշատակին»:

Քըրքեան յայտնի է նաեւ հայութեան եւ Հայաստանին կատարած նուիրատուութիւններով: Ան յայտնի է առաւելագոյն իր կողմէ հիմնադրուած «Լինսի» հիմնադրամին կողմէ իրականացուցած բարեգործական ծրագիրներով: 1989-ին սկսեալ հիմնադրամը աւելի քան 1.1 միլիարդ տոլարի նուիրատուութիւններ կատարած է դպրոցներու, հիւանդանոցներու, գիտահետազոտական ծրագիրներ եւ այլ բարեգործական նպատակներու:



Ամերիկահայ բարերար Քըրք Քըրքեան

Հայրենիքին մատուցած բացառիկ ծառայութիւններու համար Քըրքեան արժանացած է ՀՀ բարձրագոյն՝ Ազգային Հերոսի կոչումին:

ՐԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ի՞նչ է Խոստացել Պոլտինը Ալիելին

ԹԱՄԱՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Պոլտինի այցը Պաքու, նրա մասնակցությունը Եւրոպական խաղերին, այդ այցի ընթացքում դարաբաղեան կարգաւորման վերաբերեալ հնարաւոր փակ բանակցութիւնները Պոլտինի եւ Ալիելի, ինչպէս նաեւ՝ Պոլտինի ու էրդոգանի միջեւ տարաբնույթ քննարկումներին առիթ են հանդիսացել:

Հնարաւոր է արդեօք, որ Անգարայի եւ Պաքուի հետ յարաբերութիւններ կառուցելու դիմաց Մոսկուան ստիպի Երեւանին ընդունել Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման մի այնպիսի տարբերակ, որը ձեռննորդինի Ատրպէյճանին: Ռուսաստանցի փորձագէտ, ԱՊՀ ինստիտուտի կովկասի բաժնի ղեկավար Վլադիմիր Եւսէեւը, համոզուած է, որ նման գործարքի Մոսկուան չի գնա:

Այդուամենայնիւ, ատրպէյճանցի դիւանագէտները մի քանի անգամ յայտարարել են, որ նախ պէտք է Ղարաբաղի խնդիրը կարգաւորել եւ նոր խօսել Եւրասիական Միութեանը Ատրպէյճանի անդամակցութեան մասին: Ռուսաստանցի փորձագէտը, մինչդեռ, ասում է, որ նման յայտարարութիւններով Պաքուն պարզապէս ցանկանում է արձագանգները լսել եւ ուզում է, որ մոռացուած դարաբաղեան խնդիրը նորից յայտնուի միջազգային հանրութեան ուշադրութեան կենտրոնում: «Ռուսաստանին այսօր պատերազմը Ղարաբաղում պէտք է, եւ Մոսկուան հնարաւոր ամէն ինչ անում է, որ Պաքուն նման քայլի չգնա», - ասել է Եւսէեւը՝ նշելով, որ ամենահաւանական սցենարը ստատուս քվոյի պահպանումն է:

«In.am»-ի հետ զրոյցում ռուսաստանցի ռազմական փորձագէտ Ալեքսանդր Սոբեանինն էլ կարծիք է յայտնել, թէ Պոլտինի հանդիպումների ընթացքում պարզապէս ներկայացուել է պաշտօնական Պաքուի տեսակէտը դարաբաղեան հակամարտութեան վերաբերեալ, իսկ Վլադիմիր Պոլտինը վերահաստատել է, որ հակամարտութիւնը ռազմական ճանապարհով կարգաւորուելու հնարաւորութիւն չունի: Սոբեանինն անդրադառնալով Պոլտինի Պաքու կատարած այցին՝ ասել է. «Յամենայնդէպս ոչ ոք չի հերքում, որ Ռուսաստանը Հայաստանի դաշնակիցն է, մենք ընդունել ենք Հայոց Յեղափոխութեան հանգամանքը, եւ մեր նախագահն էլ Ապրիլի 24-ին հենց Հայաստանում էր. դա շատ աւելի խօսուեալ փաստ է: Հայաստանում շատ անհավատներ ասում էին, որ Վլ. Պոլտինը չի ժամանի հենց ողբերգութեան հարիւրամեակին՝ գուցէ դա անի Ապրիլի 23-ին կամ 25-ին, բայց դա արդէն կայացած փաստ է: Յամենայնդէպս Հայաստանի համար Ռուսաստանի կողմից Յեղափոխութեան ճանաչումը շատ աւելի կարեւոր է, քան արեւմտեան մի շարք այլ երկրների կողմից ճանաչումը»:

Փորձագէտը պնդում է, որ Ռուսաստանի համար կոնֆլիկտը ռազմական ճանապարհով լուծման հնարաւորութիւն չկայ. «Ռուսաստանի համար պատերազմը արգելուած բան է, մենք մինչեւ 2008-ի

Օգոստոսի 8-ը ճանաչում էինք Վրաստանի տարածքային ամբողջականութիւնը, բայց ուղիղ ագրեսիայից յետոյ ամէն բան փոխուեց: Ամէն դէպքում պատերազմի վերակսումը Ռուսաստանի համար անթոյլատրելի հանգամանք է, որովհետեւ դու կարող ես ունենալ տարբեր կարծիք, լինել ընդհուպ թշնամական յարաբերութիւնների մէջ, բայց մարդկանց սպանելու իրաւունք չունենա»:

Ինչ վերաբերում է այն հարցին, որ Ատրպէյճանն ուզում է ընդլայնել Մինսկի խմբի ձեւաչափը, այնտեղ ներառել նաեւ Թուրքիային, գոցէ նաեւ Գերմանիային, մեր զրուցակիցն ասաց. «Այս հարցում քննարկելու բան էլ նոյնիսկ չկայ, Մինսկի խումբ կայ, գործում է: Ընդհանրապէս պատերազմի դէպքում Թուրքիան նոյնիսկ մատը մատին չի տալ, հնարաւոր է դիւանագիտական յայտարարութիւններ անի, բայց իրաւաբանօրէն նոյնիսկ միջամտելու հնարաւորութիւն չունի: Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է, որպէսզի ռազմավարական դաշնակցութիւն ունենայ Ատրպէյճանի հետ, պէտք է ՆԱՏՕ-ի անդամ բոլոր երկրների համաձայնութիւնը: Մենք քննարկելու բան չունենք, իրաւաբանօրէն գոյութիւն չունի Թուրքիայի եւ Ատրպէյճանի միջեւ ռազմական գործակցութիւն: Ռուսաստանն ունի գործակցութիւն եւ՝ Ատրպէյճանի, եւ՝ Թուրքիայի հետ, բայց ռազմավարական գործակցութիւն Հայաստանի հետ ունենք եւ հնարաւոր պատերազմի դէպքում ՀԱՊԿ-ի շրջանակներում Ռուսաստանի գինուած ուժերը կը միջամտեն», - նկատել է Սոբեանինը:

Իհարկէ, Ռուսաստան-Արեւմուտք լարուածութեան, բազմաթիւ խնդիրների առկայութեան պայմաններում դժուար է պատկերացնել, որ Ռուսաստանն այս փուլում կը ցանկանար մի նոր թէժ կէտ էլ Հարաւային Կովկասում ունենալ: Ղարաբաղեան պատերազմը կարող է վերածուել այնպիսի մի պրոցէսի, որում արդէն տարածաշրջանային լոկալ ռազմական գործողութիւնները կարող են դուրս գալ վերահսկողութիւնից:

Բացի այդ, Ռուսաստանի ո՞ր պահանջը կարող են չընդունել կողմերը: Դա, թերեւս, ռուսական խաղաղապահների տեղակայման հարցն է, եւ թէ՛ Ատրպէյճանի իշխանութիւնները տան նման համաձայնութիւն, ապա կարելի է ասել, որ Ռուսաստանն այլեւս այլ «փորցցաւ» չի ունենայ:

Արդեօք Ռուսաստանը կը ցանկանա՞ր վերջնական խաղաղութիւն՝ առանց ռուս խաղաղապահների տեղակայման: Հազիւ թէ: Սա նշանակում է, որ այս տարբերակը Պաքուում չէր կարող քննարկուել:

Մնում է հարցը, թէ ռազմական գործողութիւններ չսկսելու դիմաց ինչ է խոստացել Պոլտինը Ալիելին: Առաջիկայում Պաքուի հանդիպումների արդիւնքում Ատրպէյճանում տիրող տրամադրութիւններից եզրակացութիւններ անելու համար ուշագրաւ մեծըներ կարող են հնչել իշխանութիւնների եւ նրանց վերահսկողութեան տակ գտնուող լրատուամիջոցների կողմից:

«ՀԱՅԵՒԻ»

ՀՀԿ-ականները Հոսանքի Թանկացման Մէջ Մեղադրում Են Երկնային Ուժերին

ԱՐՄԱՆ ԳԱԼՈՑԵԱՆ

Հոսանքի թանկացման լուրն ի սկզբանէ հասարակութեան մէջ լուրջ դժգոհութիւններ է յարուցել, հիմա իշխանութիւններն այդ որոշումն արդարացնելու համար պատասխանատուութիւններուն ու մեղքը փորձում են գցել Աստուծոյ ու Սատանայի վրայ:

Նախորդ շաբաթ խորհրդարանական լսումների ժամանակ ՀԾԿՀ նախագահ Ռոբերտ Նազարեանը Աժում պատգամաւորներին փորձում էր համոզել, թէ «Այսօրուայ սակագների վրայ մենք գզալու ենք միայն այդ 37 միլիարդ դրամ պարտքը: Բայց դա ըստ վերլուծութիւնների, ՀՀԾ-ի հետ կապուած չէ, նրա գործունէութեան հետ որեւէ առնչութիւն չունի: Էներգետիկ հաշուեկշիռը չի պահպանուել մի տարի սակաւաշրութեան, յաջորդ տարի՝ սակաւաշրութեան ու ստոյնակայանի չաշխատելու պատճառով: Ես կարծում եմ՝ Աստուծոյ մատը այստեղ խառն է: Եթէ սակաւաշրութիւն է, ի՞նչ կարող ենք անել»:

Այդ օրը Աժ ՀՀԿ-ական պատգամաւորներից Արտակ Դաւիթեանը Ռ. Նազարեանի հետ թէ՛ ժ գաղափարական-աստուածաբանական վէճի էր բռնուել, թէ՛. «Դուք նշեցիք, որ Աստուծոյ մատն է խառը, տուեալ դէպքում, կարծում եմ, սատանան է խառնել»: Եւ վերջապէս, երէկ էլ Աժ նախագահ Գալուստ Սահակեանը հիմնաւորելով էլեկտրաէներգիայի սակագների սպասուող բարձրացումը, նշեց, թէ իշխանութիւններին դա ձեռննորդ չէ: Բայց միւս կողմից Գրիգորիէն իրեն յատուկ ոճով «մեկնեց». «Երկնային ուժ պիտի լինի, որ հոսանքը չթանկանայ, ու մենք այդ ուժը չենք գտել»:

Կարճ ասած, Սերժ Սարգսեանի իշխանութեանը չի յաջողուել երկնային ուժերին գտնել ու պարզել՝ վերջապէս, ո՞ւմ մատն է խառը: Բայց էլեկտրաէներգիայի սակագիւնը բարձրացնելու մասին որոշումն իրենք, այնուամենայնիւ, փաստացի կայացրել են ու ոչինչ, որ իրենք իրենց մի քիչ էլ ծիրծաղելի դրութեան մէջ կը դնեն՝ «Երկնային ուժերի» փնտռութեամբ: Կարեւորը՝ էլեկտրաէներգիայի թանկացումից յետոյ իրենք այնուամենայնիւ շահող դուրս կը գան: Նախ այն պատճառով, որ բաւարարելով ռուսական ընկերութեան յայտը՝ կը շահեն Մոսկուայի սիրտը, եւ յետոյ՝ էներգետիկ ոլորտում ՀՀԾ-ի միջոցով իրականացուող թալանից իշխանութիւնները իրենց փայն ունենան՝ նար է պատկերացնել այդ ոլորտում նման մեծամասշտաբ գործընթաց՝ առանց Սերժ Սարգսեանի իմացութեան ու թոյլտուութեան:

Ինչեւէ, մինչ իշխանութիւնները փորձում են երկնային ուժեր գտնել՝ էլեկտրաէներգիայի թանկացումը կանխելու համար, Աժ ԲՀԿ խմբակցութեան պատգամաւոր Միքայէլ Մելքումեանը «Չի» հետ զրոյցում աւելի ռեալ միջոցներ մատնանշեց. «Թանկացումը ինչ-որ տեղ պարտադրուած քայլ է, բայց՝ խնդիրը նախ թանկացման չափի մէջ է, եւ երկրորդ՝ կարծում եմ, կառավարութիւնը կարող էր խուսափել այդ թանկացումից հետեւեալ մեխանիզմով. էլեկտրաէներգիայի սակագնային մարժայի հաշուարկման մեթոդաբանութեան համաձայն, եթէ պետութեան կողմից սահմանուած չափաբանակներով էլեկտրաէներգետիկ հաշուեկշիռ կառուցուածքը

խաթարում է, այսինքն՝ ՀՀԾ-ը չի կարողանում էժան աղբւրներից էլեկտրաէներգիա ձեռք բերել ու վնասներ է կրում, դրանք պէտք է փոխհատուցուի: Բայց փոխհատուցումը իշխանութիւններն իրականացնում են սակագինը թանկացնելու միջոցով:

Ըստ Մելքումեանի, դիվերսիֆիկացման մասին ինքը խօսել է ՀԾԿՀ նախագահ Ռոբերտ Նազարեանի եւ յանձնաժողովի անդամների հետ, սակայն նրանք ասել են, թէ դա ոչ թէ յանձնաժողովի, այլ՝ կառավարութեան գործառոյթների մէջ է մտնում: «Պետութիւնն էլ իր վրայ պէտք է ուսկեր վերցնի. թող կանխատեսէին, որ ատոմակայանը նախատեսածից 88 օր աւելի երկար կը կանգնի վերանորոգման, կամ եթէ նախորդ տարի սակաւաշրութ է եղել, այս տարի ահագին անձրեւներ եկան ու այս տարուայ ջրառատութեամբ կարող էին փոխհատուցման ճանապարհ գտնել», - ասաց նա:

Մելքումեանը մէկ այլ ճանապարհ եւս մատնանշեց. «Մենք սպասում ենք 5,5 մլրդ կվտ ժամ էլեկտրաէներգիա, որից 2 մլրդը բնակչութիւնն է: Եթէ 7 դրամով թանկացնում են էլեկտրաէներգիան, ապա միայն աւելացուած արժէքի հարկի գծով 8-9 մլրդ դրամ աւելի գումար է մտնում պիւտձէ: Թող այդ գումարը ոչ թէ տանեն պիւտձէ, այլ դրանով փոխհատուցեն բոլորին: Սա էլ է լուծում, այնպէս չէ, որ պէտք է ամէն ինչը գցեն բնակչութեան ուսերին»: Թէ ինչու իշխանութիւնները չեն գնում նման քայլերի, այլ հարցը փորձում են լուծել սակագինը բարձրացնելով, այսինքն՝ բնակչութեան հաշուին:

«ՉՈՐՐՈՐԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՄՈՑԻՍԻԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՍԲԱԳԻՐ՝
SOPƏ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» ամսպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Բարեփոխումների Նպատակը Պետք է Լինի Հանրութեան Վստահութեան Ամրապնդումը»



ԵՆԽՍՎ Հայաստանի հարցով համագեկուցողներ ու հանդիպումը Սերժ Սարգսեանի հետ

Հայաստանում սահմանադրական բարեփոխումների հիմնական նպատակը պետք է լինի քաղաքական բազմակարծություն, Ազգային ժողովի առջև կառավարությունից պատասխանատվության ու վերջնական արդիւնքում՝ քաղաքական համակարգի նկատմամբ հասարակության վստահության ամրապնդումը: Անցած շաբաթ երեւան կատարած այցից յետոյ, այս մասին յայտարարել են Եւրոպայի խորհրդի նորհարանական վեհաժողովի (ԵՆԽՍՎ) Հայաստանի հարցով համագեկուցողներ Աքսել Ֆիշերն ու Ալան Միլլը: Ողջունելով համակարգային թերութիւնները սահմանադրական բարեփոխումների միջոցով շտկելու Հայաստանի իշխանութիւնների ցանկութիւնը՝ ԵՆԽՍՎ-ի մոնիթորինգի յանձնաժողովի համագեկուցողները միաժամանակ ընդգծում են, որ քաղաքական ուժերը տրամագծորէն հակառակ տեսակէտներ ունեն այս բարեփոխումների, յատկապէս կառավարման համակարգի փոփոխութեան՝ կիսանախագահականից խորհրդարանականի անցնելու շուրջ:

Իշխանութիւնների եւ ընդ-

դիմադիր ուժերի հետ մի քանի օր շարունակուած հանդիպումներից յետոյ եւրոպացի պատգամաւորներն արձանագրում են՝ Հայաստանում քաղաքական ու ընտրական գործընթացների նկատմամբ վստահութեան մակարդակը դեռ շատ ցածր է: Հաշուի առնելով դա՛ համագեկուցողները խորհուրդ են տալիս խուսափել բարդ ընտրական համակարգերից, պատճառաբանելով՝ դրանց նպատակները կարող են հեշտօրէն սխալ մեկնաբանուել: Ազդուամենայնիւ, յայտարարութեան մէջ չի նշուում՝ ընտրական որ համակարգն են եւրոպացի պատգամաւորները բարդ որակում, եւ կան արդեօք այս առումով փոփոխութեան նախագրեւորութիւնը ու մտահոգութիւնները:

Իրենց տարածած յայտարարութեան մէջ Ֆիշերն ու Միլլը նաեւ կոչ են անում Հայաստանի իշխանութիւններին միջազգային դիրտորդների հրաւիրել՝ առաջիկայ հանրաքուէին հետեւելու համար, ինչպէս նաեւ երաշխաւորել, որ այս հարցի շուրջ պատշաճ հասարակական խորհրդակցութիւններ եւ բանավէճեր անցկացուեն:

Ինչո՞վ էր Պայմանաւորուած Մոլվսե 3ակոբեանի Տեղափոխումը Հայաստան

Յունիսի 16-ին Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան պաշտպանութեան նախարար Մոլվսե Յակոբեանն ազատուել է զբաղեցրած պաշտօնից եւ տեղափոխուել Երեւան՝ նշանակուելով Ջինուած ուժերի Գլխաւոր շտաբի պետի տեղակալ: 168.ամ-ը ռազմական փորձազէտ Գազիկ Կարապետեանից հետաքրքրուեց՝ որքանո՞վ էր նպատակայրմար այս պահին ԼՂ պաշտպանութեան նախարարին պաշտօնից ազատելը եւ Երեւան տեղափոխելը՝ հաշուի առնելով, որ հիմա Պաքուծ ընթանում են Եւրոպական Օլիպիական խաղեր,՝ եւ հնարաւոր է՝ լարուած լինի սահմանում: Ի պատասխան մեր հարցի՝ ռազմական փորձագէտն ասաց, թէ իր կարծիքով՝ այդ տեղափոխութիւնն առանց քննարկման չի կատարուել, Ղարաբաղի ղեկավարն այս հարցը յստակ քննարկել է ինչ-որ շրջանակներում եւ երեւի նպատակայրմար է գտել տեղափոխել:

Հարցին՝ այս փոփոխութիւնը կարո՞ղ է ազդել ԼՂ Ջինուած ուժերի մարտունակութեան վրայ, Գ. Կարապետեանը պատասխանեց, թէ կարծում է՝ ազդեցութիւնը շատ քիչ կը լինի. «Սկզբնական



ՀՀ Ջինուած ուժերի Գլխաւոր շտաբի պետի տեղակալ նշանակուած Մոլվսե 3ակոբեան

շրջանում, բոլոր դէպքերում, նոր նշանակուած մարդիկ կը լինեն, իսկ նոր նշանակուած մարդիկ աշխատում են իրենց նկատած թերութիւնները վերացնել: Նոր աչքը միշտ նոր բան է տեսնում, նոր աչքը միշտ տեսնում է որոշ շեղումներ, որոշ հանգամանքներ, որոնք պէտք է շտկել, եւ կարծում եմ՝ նոր մարզն առաջին հերթին՝ շտկումներ կը մտցնի, եւ Ջինուած ուժերի մարտունակութիւնը, չեմ կարծում, որ կարող է անկում ապրել»:

Շարք էջ 4

Ի՞նչ Իմաստ Ունի Սփիւռքի Նախարարութիւնը Կուսակցականացնելը

ԵՐԵՒԱՆ, «ՀԱՅԵԼԻ»: Մամուլում յամառօրէն տեղեկութիւններ են շրջանաւառում «սկզբունքային» դաշնակցականների ակնկալիքների մասին: Ասում են, Օգոստոսին դաշնակցութիւնը մաս կը կազմի խորհրդարանական կողմից իրաջին, ու դրա դիմաց դաշնակցական ընկերների սպասելիքները բաւական «իւղղոտ» են:

ՀՅԴ-ն դարձեալ պահանջում է կրթութեան նախարարութիւնը, սոցալնախարարութիւնը, այսինքն՝ այն նախարարութիւնները, դաշնակցականները «կայացել» էին ժամանակին: Բայց այս ամէնի մէջ, իհարկէ, ամենահետաքրքրականն այն է, որ դաշնակցութիւնը հիմա էլ ֆիքսուել է սփիւռքի նախարարի վրայ:

Ինչ վերաբերում է սփիւռքի նախարարութիւնը դաշնակցականներին տալուն, ապա այստեղ աւելի խորքային հարց կայ: Հայկական սփիւռքը միատարր չէ, բազմակուսակցական, տարբեր գաղափարներ կիսող խմբեր են՝ սփուռած ամբողջ աշխարհով: Ի՞նչ իմաստ ունի մի նախարարութիւն կուսակցականացնել, որին մեղմ ասած, չեն ընդունի Սփիւռքի շատ ու շատ օջախներ:

Բացի այդ, Հայաստանում գործող դաշնակցութիւնը բաւական լուրջ վստահութեան խնդիր ունի «դրսի» դաշնակցականների մօտ, իսկ եթէ մի կուսակցութեան հայաստանեան գործիչներին չընդունողներին նախարարութիւն են վստահելու ՀՀ իշխանութիւնները, դա նշանակում է, որ գործող իշխանութիւնը կորցնելու է դրսի «դաշնակցականների» վստահութիւնը, իսկ ներսում այդ նախարարութիւնը շատ արագ տապալելու է ցանկացած ծրագիր:

Իսկ թէ ինչու են «դրսի» դաշնակցականները «ներսի» դաշնակցականներից հիասթափուել, կարծում ենք, գաղտնիք չի: Ինչպէս Հայաստանի հասարակութիւնն է տեսնում բազմամեայ կուսակցութեան ներկայացուցիչների՝ իշխանութիւններից «փայ» մտնելու քաղաքականութիւնը, այնպէս էլ նրանց օտարերկրեայ «ընկերներն» են տեղեկացուած:

Յաջող դ հանգամանքը. յայտնի է սփիւռքի երեք կուսակցութիւնների՝ դաշնակցութեան, հնչակեանների ու ռամկավարների հակասութիւնները: Նրանց՝ մի սեղանի շուրջ հաւաքելը ու մի հաշտ ու համերաշխ երեկոյ անցկացնելն է կոմեդիայի ֆիլմ յիշեցնում, ուր մնաց՝ դաշնակցութիւնը կարողանայ բոլոր կուսակցութիւններին իրար գլուխ հաւաքել ու ազգի համար կարեւոր խնդիրներ լուծել: Իսկ եթէ սրան էլ աւելացնենք Հայաստանից արտագաղթածների մեղմ ասած՝ բացասական վերաբերմունքը դաշնակցութեան հանդէպ, ապա կարելի է պատկերացնել, թէ ինչ արձագանք կը ստանայ Սփիւռքի դաշնակցական նախարարի նշանակումը Հայաստանի սահմաններից դուրս:

Այնպէս որ, սփիւռքի նախարարութիւնը դաշնակցականներին տալու որոշումը, թերեւս, ամենաաբսուրդային որոշումը կը լինի ու լի տարբեր վստանգներով՝ սփիւռքը պառակտելուց սկսած՝ մինչեւ Հայաստանի իշխանութիւնների վրայ վերջնականապէս «խաչ քաշելու» դրդելը:

Տարօրինակ իրադարձութիւններ Մոսկուայում

Շաբաթ օրը, պարզում է մասնաւոր այցով Մոսկուա է մեկնել Սերժ Սարգսեանը, պարզում է՝ մեծահարուստ հայերից մէկի որդու հարսանիքին:

Դրանից մի օր առաջ յայտարարուեց, որ մասնաւոր այցով Մոսկուա է մեկնել Յովիկ Աբրահամեանը, եւ մամուլում հրապարակուած եղաւ, որ նա իբր ՌԴ վարչապետ Մեդվեդեւի հետ քննարկելու է Հայաստանի կներգեստիկ խնդիրները:

Սակայն տեղեկութիւն չկայ՝ եղել է արդեօք հանդիպում, եւ այդ պարագայում հարց է առաջանում՝ ինչու պէտք է մասնաւոր այց կատարուէր, եւ ոչ թէ պաշտօնական:

Ընդհանրապէս, Հայաստանի ու Ռուսաստանի վարչապետների յարաբերութիւնների թեման բաւական հետաքրքիր է: Յովիկ Աբրահամեանն օրինակ անցեալ տարի յայտարարել էր, թէ Մեդվեդեւը ժամանելու է Հայաստան, սակայն այցն այդպէս էլ տեղի չէր ունեցել: Նման այլ «միջադէպեր» էլ են արձանագրուել:

Մոսկուայի հարսանիքին մասնակցել է նաեւ ռուսաստանցի միլիարատէր Սամուէլ Կարապետեանը, ում անունը տեւական ժամանակ շոշափուած էր ՀէԾ-ը գնելու համատեքստում: Նրա եղբայրը՝ Աժ պատգամաւոր Կարէն Կարապետեանը երէկ եւս մէկ անգամ յայտարարել է, որ Սամուէլ Կարա-

պետեանը ՀէԾ-ը գնելու մտադրութիւն չունի: Աւելի վաղ, նա բաւական թափանցիկ ակնարկներ էր արել Յովիկ Աբրահամեանի ուղղութեամբ եւ քննադատել նրա կառավարութեան գործունէութիւնը:

Այլ տեղեկութիւն տարածուեց, որ Սամուէլ Կարապետեանի՝ ՌԴ տարբեր քաղաքներում գտնուող առեւտրի կենտրոններում միաժամանակ ռումբի ահազանգ է եղել, մարդկանց տարհանել են:

Ի դէպ, վաղը Հանրային ծառայութիւնները կարգաւորող յանձնաժողովը պատրաստուած է թանկացնել էլեկտրականից դրսի զինը 6,93 դրամով: Մասնագէտները նշում են, որ սա աւելի է խորացնելու ճգնաժամը Հայաստանի կներգեստիկ համակարգում:

Ըստ ամենայնի, Մոսկուայում ոչ մի խնդիր էլ չի լուծուել, եւ երեւի հերթական անգամ Հայաստանի ղեկավարներին ասել են՝ գնացէք ձեր հարցերը ինքներդ լուծէք: Եթէ իհարկէ այնտեղ որեւէ պետական նշանակութեան հարց է դրուել, եւ ոչ թէ ասենք «մասնաւոր»: Զուր է, որ Հայաստանի ղեկավարների այցերը գնալով աւելի ու աւելի մասնաւոր են դառնում: ՀՀ բարձրաստիճան պաշտօնեաներից մէկի խոստովանութեամբ, Մոսկուայում արձանագրել են այս հանգամանքը եւ հակուած չեն քննարկել ՀՀ ղեկավարների մասնաւոր հարցերը:

ԼՈՒՐԵՐ

Կառվ Քիլդու. «Յայաստանի Յետ Յարաբերութիւնների Բարելաւումը Թուրքիայի Շահերից Է Բխում»

NEWS.am-ը գգալի կրճատումներով ընթերցողի ուշադրութեանն է ներկայացրել Շուէդիայի նախկին վարչապետ, ԱԳ նախկին նախարար Կառվ Քիլդուի՝ «Project Syndicate» պարբերականում հրատարակուած յօդուածը:

Խորհրդարանական ընտրութիւններում մեծամասնութիւնը պահպանել ձգտող իշխող «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութեան (ԱԶԿ) ձախողումից յետոյ Թուրքիան դէպի անյայտ քաղաքական տարածութիւն է շարժուում: Ընտրութիւնը, որը Թուրքիան կանի նոր կառավարութիւն ձեւաւորելիս, ոչ միայն որոշիչ նշանակութիւն կ'ունենայ ապագայում ժողովրդավարութիւն ձեւաւորելու համար: Յաջորդ կառավարութիւնը կարող է նաեւ որոշիչ դեր ունենալ խաղաղութեան գործընթացներում, որոնք կենսական կարեւորութիւն ունեն ակելի լայն Մերձաւոր Արեւելքում կայանութիւնը վերականգնելու համար:

Թուրքիայի համար առաջնահերթ նշանակութիւն ունի քրդական բնակչութեան հետ շարունակուող խաղաղութեան գործընթացը: Քրդական հարցի համապարփակ կարգաւորումն առանցքային նշանակութիւն կ'ունենայ երկրում կայունութեան հաստատման եւ Եւրոմիութեանն անդամակցութեան ձգտման հարցում:

Ժողովուրդների դեմոկրատական կուսակցութեան (հիմնականում քրդական) յաջողութիւնը, որն ընտրութիւնների արդիւնքում 13% ձայն ստացաւ, պէտք է բարձրացնի քրդերի վստահութիւնը եւ դիւրացնի խաղաղութեան գործընթացի ուղին: Սակայն ծայրահեղ աջ «Ազգայնական Շարժում» կուսակցութիւնը նույնպէս ընտրութիւններում գգալի յաջողութիւն արձանագրեց՝ 16% ձայն ստանալով, ինչը, հաւանաբար, մեծապէս պայմանաւորուած է քրդերի հանդէպ նախաձեռնութիւնների դէմ ժողովրդի դիրքորոշումով:

Թուրքիայի նոր կառավարութեան համար պէտք է բարձր առաջնահերթութիւն ունենայ իր դողանի սկսած խաղաղութեան գործընթացի ակարտը: Իսկ իր դողանը պէտք է հասկանայ, որ իր ժառանգութիւնը կարող է կախուած լինել այն հանգամանքից, այդ գործընթացը յաջողութիւն ունենայ, թէ՞ ոչ:

Խաղաքարտի վրայ դրուած

Մոսկուայում Թուրքիայի Դեսպանատան Ուղղութեամբ Կրակ Բացած Միրզոյեան Ազատ Է Արձակել

Մոսկուայի քաղաքային դատարանն Արթուր Միրզոյեանին ազատ արձակելու որոշում է կայացրել: Այս մասին «Մոսկուա» լրատուական գործակալութեանը յայտնել է նրա փաստաբան Գէւորգի Շատիրեանը:

«Այսօր Մոսկուայի քաղաքային դատարանում վերաքննիչ բողոքի քննման ժամանակ ես եւ իմ պաշտպանելը ներում շնորհելու միջնորդութիւն ենք ներկայացրել: Դատարանը բաւարարել է միջնորդութիւնը, եւ Միրզոյեանը



Շուէդիայի նախկին վարչապետ, ԱԳ նախկին նախարար Կառվ Քիլդու

երկրորդ խաղաղութեան գործընթացը Կիպրոսի միաւորման նոր փորձն է, որը բաժանուած է 1963 թուականի սահմանադրական կարգի փլուզումից եւ 1974 թուականին Թուրքիայի ներխուժումից յետոյ: Իրականում տարօրինակ է, որ ԵՄ անդամ երկրի մայրաքաղաքը բաժանուած է մեռած գօտիով, որտեղ տասնամեակներ շարունակ պայտուակ են ՄԱԿ-ի խաղաղարար ուժերը: Կիպրոսի երկարատեւ բաժանումն արգելակում է ինչպէս ԵՄ-ին անդամակցութեան շուրջ Թուրքիայի բանակցութիւնները, այնպէս էլ ԵՄ-ի եւ ՆԱՏՕ-ի՝ ակելի ու ակելի անհրաժեշտ համագործակցութիւնը:

Խաղաղութեան երրորդ գործընթացը վերաբերում է Հայաստանի հետ Թուրքիայի յարաբերութիւններին, որոնք, բարելաւման դէպքում, կարող են նպաստել Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ հակամարտութեան խաղաղ կարգաւորման գործընթացին: Հայաստանի հետ սառեցուած հակամարտութիւնը պահպանելը Թուրքիայի կամ տարածաշրջանի որեւէ այլ պետութեան երկարաժամկէտ շահերից չի բխում: Շարունակուող շրջափակումն ու ռազմական բախումներն ինչ-որ պահի կարող են հանգեցնել Հարաւային Կովկասում բռնի անկարգութիւնների՝ Թուրքիայի համար բացասական հետեւանքներով: Յաջորդ կառավարութիւնը պէտք է վերականգնի Յիւրիխում ընդունուած մօտեցումը, եւ Հայաստանի ղեկավարութիւնը պէտք է նույնն անի:

ազատուել է պատժից»,- նշել է փաստաբանը:

Ապրիլի 3-ին Մոսկուայի դատարանը Միրզոյեանին դատապարտել էր 2 տարուայ ազատազրկման:

Անցած Օգոստոսի 18-ին Միրզոյեանը որսորդական հրացանով կրակ էր բացել Մոսկուայում Թուրքիայի դեսպանատան ուղղութեամբ: Միրզոյեանը իր արարքը բացատրել էր նրանով, որ Քնսապում տեղի ունեցած դէպքերի հետեւում կանգնած է Թուրքիան, որը նաեւ ցեղասպանութիւն է իրականացրել հայերի նկատմամբ:

Ահմէտ Սեւեր. «Գիւլը Գնաց Երեւան՝ Հակառակ Արտգործնախարարութեան, Գլխաւոր Շտաբի Եւ Էրդողանի Կամքի»

Թուրքիայի 11-րդ նախագահ Աբդուլահ Գիւլի խորհրդական Ահմէտ Սեւերը գիրք է գրել «12 տարի» վերնագրով, որտեղ ներկայացրել է Գիւլի պաշտօնավարած տարիները:

Սեւերը գրքում անդրադարձ է կատարել նաեւ Գիւլի երեւանեան այցին ու հայ-թուրքական արձանագրութիւններին: CNN Turk-ի «Ամէն ինչ» հաղորդմանը հիւրընկալուելիս Սեւերը որոշ դրուագներ է պատմել 2008 թ-ի Գիւլի հայաստանեան այցի նախօրէից: Ըստ նրա՝ Գիւլի այցելութեանը դէմ են եղել թուրքական իշխանութեան բոլոր կարեւոր օղակները՝ այն ժամանակուայ վարչապետ էրդողանը, արտգործնախարարութիւնը, Թուրքիայի զինուած ուժերի գլխաւոր շտաբը:

«Ընդունելութիւններից մէկում, այն ժամանակուայ վարչապետ էրդողանը մօտեցաւ նախագահ Գիւլի գլխաւոր օգնականին ու ցոյց տալով գլխաւոր շտաբի պետ Իլքեր Բաշքուին, ասաց, նա էլ չի ուզում, որ դու Հայաստան գնաս: Չնայած որ Գիւլը միայնակ էր մնացել, այնուամենայնիւ գնաց», - ըստ «Ակօսի», հաղորդմանն ասել է Սեւերը՝ իօսելով Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի հրաւերով Հայաստան-Թուրքիա ֆուտպօլային խաղը դիտելու համար՝ Գիւլի Երեւան այցելութեան մասին:

«Այս գործընթացը բացեց դէպի արձանագրութիւններ տանող ճանապարհ», - նշել է նա: Ըստ Սեւերի Գիւլի համար կարեւորա-



Թուրքիայի նախկին նախագահ Աբդուլահ Գիւլ

գոյն խնդիրներ են եղել քրդական, հայկական եւ կիպրական հարցերը:

«Նախագահը կարծում էր, որ հայկական, քրդական, կիպրական հարցերը ամենակարեւորն են: Նա մտածում էր, որ այս հարցերը գնալով վերածուած են գանգրենայի, ու կարծում էր, որ հարցի լուծումով ճանապարհ կը բացուի, եւ որ իր՝ ֆուտբոլային դիւանագիտութեան շրջանակում այցելութիւնը, կը բացի այդ գործընթացները: Շատերը խորհուրդ տուեցին, որպէսզի նա հետ կանգնի Երեւան այցելութեան մտքից: Արտգործնախարարութիւնը չէր ցանկանում, որ նա գնար: Նրանք մտահոգուած էին, որ դա կարող էր վնասել անվտանգութեանն ու Ատրպէյճանի հետ յարաբերութիւններին: Բայց միեւնոյն է Գիւլն ասաց՝ Ես պիտի գնամ», - պատմել է Սեւերը:

Ղարաբաղեան Հակամարտութեան Թեման Շօշափուել Է Պուտին-Ալիեւ Հանդիպման Ժամանակ

Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան թեման շօշափուել է Ռուսաստանի եւ Ատրպէյճանի նախագահներ Վլադիմիր Պուտինի ու Իլհամ Ալիեւի հանդիպման ժամանակ: Այս մասին Յունիսի 15-ին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ յայտարարել է ՌԴ նախագահի մամուլի իօսնակ Դմիտրի Պեսկովը:

«Գլխաւորապէս քննարկուել

են ուս-ատրպէյճանական յարաբերութիւնները: Ղարաբաղեան թեմատիկային նույնպէս անդրադարձել են», - մէջբերում է Պեսկովի խօսքը «ՌԻԱ Նովոստի»-ն:

Յիշեցնենք, որ Պուտինն ու Ալիեւը հանդիպել էին Յունիսի 13-ին: Պուտինը Պաքու էր մեկնել Եւրոպական խաղերի բացման արտողութեանը մասնակցելու համար:

Ինչո՞վ էր Պայմանաւորուած

Շարունակուած էջ 3-էն

Ռազմական փորձագէտի գնահատմամբ՝ այս փոփոխութիւնը կարող է նույնիսկ դրական ազդեցութիւն ունենալ որոշ առումներով. «Ես չեմ կարծում, որ մարտականութեան անկում կը լինի, եւ չեմ կարծում, որ առաջ-խաղացում չի լինի, հաստատ ինչ-որ տեղ նոր լուծումներ կը գտնեն տարբեր խնդրայարոցը հարցերի համար: Իմ կարծիքով՝ ակելի արդիւնաւէտ աշխատանքներ կը լինեն հիմա»:

Հարցին՝ ըստ Ձեզ՝ ինչո՞վ էր պայմանաւորուած այս տեղափոխութիւնը՝ Մովսէս Յակոբեանի ներկայութեան անհրաժեշտութիւնը ՀՀ Ձիւնուած ուժերում կա՞ր, թէ՞ Ղարաբաղում ինքն արդէն անելիք չունէր, ու նոր մարդու կարիք էր զգացուած, Գ. Կարապետեանը պատասխանեց, որ չպէտք է տարանջատել Հայաստանը եւ Ղարաբաղը. «Մեր թշնամիները միշտ աշխատել են այդ ուղղութեամբ, որ բաժանեն Հայաստանը, տարբեր

անուններով կոչեն ու ինչ-որ տեղ իրար դէմ հանեն, ու որոշ առումով նրանց մօտ ստացուել է: Պէտք է շտարանջատենք ու չմտածենք, որ Ղարաբաղի պաշտպանութեան նախարար եկաւ Հայաստան, Հայաստանի նախարարը գնաց Ղարաբաղ, այլ Հայաստանի քաղաքացին, բնակիչն այսինչ պաշտօնից ազատուեց, նշանակուեց այսինչ պաշտօնի»:

Մեր հարցին՝ այնուամենայնիւ ինչո՞վ է պայմանաւորուած այս փոփոխութիւնը, ռազմական փորձագէտն այսպէս պատասխանեց. «Պաշտօններից ազատուելը նշանակելը սովորական գործընթաց է, եւ ժամանակ առ ժամանակ այդ փոփոխութիւնները լինում են, դա չի կարող այդպէս մնալ՝ նշանակուեց այսինչ մարդն այսինչ պաշտօնին ու գնաց մինչեւ վերջ: Յմահ պաշտօններ չեն դրանք: Մովսէսը բաւականին մեծ մարտական փորձ ունի, եւ կարծում եմ՝ այդ մարտական փորձն ուղղակի անհրաժեշտ էր բերել մեր Ձիւնուած ուժեր»:

ՄԱՍԻՍ
 ԱՄԵՆԱԿՍԱՅԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

Հնչակեան Քսաններու Նահատակութեան Նուիրուած Գիտաժողով Երեւանի Մէջ



Երկուշաբթի 15 Յունիսին Հայաստանի Հանրապետութեան «Գիտութիւնների Ազգային Ակադեմիա»-ի նախագահութեան նիստերու դահլիճին մէջ տեղի ունեցաւ գիտաժողով նուիրուած՝ Հնչակեան Քսաններու նահատակութեան 100-րդ տարելեցին: Գիտաժողովը կազմակերպուած էր ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութեան կողմէ եւ կը վայելէր բարձր հովանաւորութիւնը՝ ՀՀ Սփիւռքի նախարարութեան եւ ՀՀ «Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի» պատմութեան ինստիտուտին (հիմնարկ): Գիտաժողովին բացումը կատարեց Դոկտ. Աշոտ Մելքոնեան (ՀՀ ԳԱԱ պատմութեան հիմնարկի տնօրէն): Ան իր խօսքով ըսաւ «Այս գիտաժողովի հիմնական նպատակը Հնչակեան կախաղաններու հիմնական պատճառը բացայայտելն էր: Ինչպէս գիտէք Թուրքիա միշտ կը փորձէ առաջ քաշել, որ Հայ ժողովուրդի դէմ գործադրուած ցեղասպանութիւնը հետեւանք է Հայերու կողմէ պատրաստուող դաւաճանութեան եւ այդ մէկը անհիմն է: Պատմական հիմնադրոյթները կ'ըսեն, որ Թուրքիոյ բոլոր արարքները, ատոնց շարքին նաեւ Հնչակեան Քսաններու կախաղան հանուելը ամբողջութեամբ փոխկապակցուած են Թուրքիոյ բանթուրանական նկրտումներուն հետ: Թուրքիա նախապէս պետականօրէն պատրաստած էր Հայոց ցեղասպանութիւնը եւ նման գիտաժողովներ չաւելեալ լոյս կը սփռեն պատմական այդ փաստերուն վրայ»:

Ապա ելոյթով հանդէս եկաւ ՀՀ սփիւռքի նախարար Տիկն. Հրանոյշ Յակոբեան: Տիկին Յակոբեան մատնանշեց, որ Քսաններու նահատակութիւնը ծրագրուած էր Թուրքիոյ կողմէ եւ այն ծրագրուած էր պետական մակարդակով: Տիկին նախարարը ըսաւ՝ «Հայ դատը պետք է չնահանջի, եւ հայ ժողովուրդը պէտք է միասնական կերպով շարունակի իր պայքարը յանուն արդարութեան: Այս հարցում իր ուրոյն տեղն ունի Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը, որը 100 տարի առաջ կանգնած է եղել հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի ակունքներում եւ այսօր էլ սփիւռքի իր կառուցներով օժանդակում է Հայոց ցեղասպանութեան ճանաչմանը»: Տիկն. Յակոբեան իր խօսքի աւարտին նաեւ մատնանշեց, որ Հայ ժողովուրդը այսօր ուժեղ է եւ միասնակամ եւ անոր դիտարկումով Հայոց ցեղասպանութեան ճանաչման խնդիրը միջազգային հանրութեան օրակարգին վրայ է եւ նոյն

առումով ճանաչման երթը անկասելի է հակառակ անոր, որ Թուրքիա կը շարունակէ իր ժխտողական քաղաքականութիւնը: Ապա ներկայացուեցաւ «Քսանի Լուսաբաց»ը խորագիրը կրող ֆիլմը, որ պատմական փաստերով պատրաստուած եւ Քսաններու նահատակութեան խորհուրդը վեր առնող վաւերագրական տեսաֆիլմ մըն է, եւ որ առաջին անգամ կը ցուցադրուէր հանրութեան:

Ապա հերթաբար ելոյթներով հանդէս եկան ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութեան անդամ՝ Ընկ. Եղիկ ձէրէճեան (Քսաններու Քաղաքական Գնահատականը), Թուրք պատմաբան եւ քաղաքական գործիչ՝ Քատիր Աքին (Կոտրուած Շղջ Մաշիկ Օղակները Միացնող՝ Փարամագ), գրող հրապարակախօս՝ Գրիգոր Զանիկեան (Քսաններու Դատաւարութիւնը), պատմական գիտութիւններու թեկնածու՝ Գեղամ Յովհաննիսեան (ՄԴՀԿ-Իթիթի համ Յարաբերութիւնները Առաջին Աշխարհամարտի Սկիզբը) եւ պատմական գիտութիւններու թեկնածու Մանուկ Ստեփանեան (Անմահ Քսաններու Սիրանքը):

Ելոյթները կը յատկանշէին պատմական նոր տուեալներ լոյսին բերելու եւ Քսաններու նահատակութեան օրերուն Թուրքիոյ մէջ տիրող ընդհանուր քաղաքական իրավիճակին մասին յաւելեալ գիտական փաստարկներ ներկայացնելու մօտեցումներով: Նշենք նաեւ, որ ելոյթներու աւարտին տեղի ունեցաւ քննարկում:

Ընկ. Եղիկ ձէրէճեան Կեդրոնական Վարչութեան անունով գիտաժողովին փակումը կատարելով յայտնեց, որ սոցն գիտաժողովը կը համարուի յաջողած: Ան նաեւ ըսաւ, որ գիտաժողովի ընթացքին ելոյթ ունեցողները յաւելեալ տեղեկութիւններ ներկայացնելով փորձեցին տարբեր տեսանկիւններէ քննարկել Քսաններու եւ նահատակութեան խորհուրդը եւ անոնց նահատակութեան տուն տուող հիմնախնդիրները: Ընկ. ձէրէճեան յոյս յայտնեց, որ հայրենի պատմագիտական շրջանակները յաւելեալ հետաքրքրութիւն ցոյց կուտան Քսաններու նահատակութեան վերաբերեալ եւ մանրամասնօրէն քննութեան կը դրուին անկիւնադարձային համարուող դէպքին բոլոր մանրամասնութիւնները, որովհետեւ իր ըսելով Քսաններու թեման աւարտած չէ եւ այդ առումով հայրենի գիտական շրջանակները յաւելեալ պարզաբանումներ կատարելու յանձնառութեան առջեւ են:

Սոցիալ Դեմոկրատ Կուսակ-

Քսաններու Ոգեկոչումի Հաւաք Պոլսոյ Մէջ



Պոլսոյ Նոր Զարթօնք կազմակերպութիւնը Երկուշաբթի օր հաւաք մը կազմակերպեց Պոլսոյ Էտիքմէզափուր գերեզմանատան մէջ, ոգեկոչելու համար Քսաններու յիշատակը: Կազմակերպութեան յայտարարութեան մէջ նշուած է, որ Քսանները իրենց կեանքը տուին յանուն արդարութեան պայքարին եւ «նոյնիսկ կախաղանները չյաջողեցան տապալել անոնց կամքը»: «Փարամագի պայքարը մաս կը կազմէ միջազգային յեղափոխական պայքարին», նշած էին Նոր Զարթօնքի երիտասարդները:

Հաւաքին առթիւ, կազմակերպիչներուն ուղղուած էր ողջոյնի խօսք, ՄԴՀԿ Լիբանանի շրջանի Վարիչ Մարմինի կողմէ: «Սրտանց կը շնորհակարանք բերող Քսաններու նահատակութեան, յղթանակի եւ վերածնունդի օրուան առթիւ: Արդէն երբորդ տարին է, որ միասնաբար կ'ոգեկոչենք 20 հայ յեղափոխականներու նահատակութեան յիշատակը: Այս գեղեցիկ աւանդութեան հիմքը դուք դրիք, զանոնք

վերադարձնելով դէպի իրենց հարազատ ժողովուրդը, միեւնոյն ատեն Փարամագն ու իր ընկերները դարձուցիք ժողովուրդներու բարեկամութեան եւ ճշտուած ազգերու ազատագրական պայքարի փայլուն աստղեր: Այս տարուայ յիշատակումը ունի մէկ այլ յատկութիւն, այն կը կատարուի իրենց անյայտ շիրիմներուն կողքին: Ճիշդ է, որ անոնց յատկ թաղուած տեղերը չենք գիտեր, սակայն իրենց գաղափարները՝ ազատութիւնը, արդարութիւնը, ժողովուրդներու հաւասարութիւնը կ'ապրին մեր սրտերուն մէջ: Ճիշդ է, որ անոնք հայեր էին, սակայն անոնց պայքարին նպատակը ամբողջ մարդկութեան պայծառ ապագան ու երջանկութիւնն էր: Ճիշդ այս պատճառով է, որ Փարամագ ոչ միայն իր ժողովուրդին հարազատ զաւակը մնաց, այլ դարձաւ մեր տարածաշրջանի բոլոր ազատատենչ ժողովուրդներու պայքարի հերոս խորհրդանիշը: Յաւերժ յարգանք անոնց անթառամ յիշատակին, պայքարին, գաղափարին», նշուած էր ողջոյնի պատգամին մէջ:



Ուրուկուէյի Գախկին Գախազահի Գերկայութեան Յունիսի 15ին Արճենիա Հրապարակին վրայ Սոնթեվիտոյի մէջ յարգեցին Քսաններու յիշատակը

Ուրուկուէյի Գախկին Գախազահ Խոսէ Մուխիբան գլխաւորեց ծաղկեպսակի գետեղումը խաչքարին առջեւ, ապա մասնակցեցաւ աղանձներու ազատ արձակման արարողութեան: Անուն առ անուն յիշուեցան Քսաններու անունները: Հաւաքին ներկայ էին Կաթողիկէ եկեղեցւոյ առաջնորդ հայր Անթոնիօ Քէչէճեանը, Արժանթիւնի մէջ Հայաստանի դեսպանատան ներկայացուցիչը, Հայաստանի հիւպատոսի դուստր Ալիսիա Աբրահամեանը եւ Պաշտպանութեան Նախարարութեան ներկայացուցիչները:

Հիմնական ձեռնարկը տեղի պիտի ունենայ Յունիսի 21-ին Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան ատենապետ Ընկեր Յակոբ

խորհուրդին, Թուրքիոյ այդ օրերու քաղաքական համայնապատկերին եւ մեր ժողովուրդի ապրած ծանրագոյն ողբիսականին վրայ: Թղթակից

Հնչակեան Քսան Կախաղաններու 100-Ամեակը

Շարունակուած էջ 1-էն

ղաքկան եւ յեղափոխական կուսակցութիւնը, ՄԳ-ՀԿ իր 127 տարուայ գոյութեան ընթացքին տուած է բազմաթիւ նահատակներ, որոնք պայքարած են ու ծառայած ի շահ հայութեան եւ ի շահ հայրենիքին»:

Եզրակացնելով հանդիսավարը ըսաւ,-«Այսօր՝ վստահ ենք, որ քսան անմահներուն հոգիները քիչ մը աւելի հանգիստ կը ննջեն, ի տես այն փաստին, որ անցնող Ապրիլ 24-ին, հայ ժողովուրդը աշխարհի չորս ծագերուն միասնաբար ոգեկոչեց Յեղասպանութեան մեր զոհերու 100-րդ տարելիցը ու ցոյց տուաւ աշխարհին, որ «ոչինչ չի մոռացուել, ոչ ոք չի մոռացուել»:

Հայ Ամերիկեան Խորհուրդի (ՀԱԽ) խօսքը անգլերէնով փոխանցեց վահան Խոտանեան: Ան յատ-

նախ յիշատակեց Քսաններու շառուիղէն ընտանիքի անդամներ, որոնք ներկայ էին սրահէն ներս: Ապա ներկայացուց քաղաքական պաշտօնական հիւրերը: Ան յայտարարեց որ Հնչակեան մեծ մտաւոր-



Յովնան Արք. Տէրտէրեան

րական Ստեփան Սապահ-Գիւլեանի անունով հաստատուած առաջին մրցանակը պիտի յանձնուի գոնկորէսական Ատամ Շիֆին: Նախ ցուցադրուեցան հատուածներ այն ժապաւէնէն, ուր Ատամ Շիֆ, Ապրիլ 24-ի առթիւ, Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչ Տան մէջ կը կարդար Հայ նահատակներու անունները, որոնց շարքին նաեւ Քսաններուն անունները:

Գոնկորէսականը Ատամ Շիֆ յոտնկայ ծափահարութիւններով բեմ բարձրացաւ, ստանալու համար մրցանակը: Ան իր շնորհակալական խօսքին մէջ ըսաւ, որ քսան

զալիքը՝ վաղուան արշալոյսի ճարտարապետները դառնալու գիտակցութիւնը կ'արթնցնէ մեր մէջ»:

«Հայու ազատատենչ ոգիին մարմնացումն են քսան քաջամարտիկ հայորդիք, ովքեր հաւատքի



Օրուայ գլխաւոր բանախօսն Սարգիս Հացպանեան

ոգով ու հայրենական տեսիլքով կամաւորաբար մահուան հետ հաշտութիւն են կնքած, որպէսզի խոնարհին մեր նախնեաց սրբութեանց առջեւ», իր խօսքին մէջ շեշտեց սրբազան հայրը:

Օրուայ գլխաւոր բանախօսն էր նախկին թրքահայտակ, Արցախեան պատերազմի ազատամարտիկ, 2008 թուականի համաժողովրդական շարժումի մասնակից եւ ապա քաղաքական բանտարկեալ, հասարակական գործիչ եւ հրապարակախօս Սարգիս Հացպանեան:

Բանախօսը իր ելոյթին մէջ նախ ներկայացուց Քսաններու գաղափարախօսութիւնը եւ դերը, ոչ միայն հայոց պատմութեան նաեւ, այլ փոքրամասնութիւններու իրաւունքներու պաշտպանութեան գծով: Ան անդրադարձաւ Թուրքիոյ մէջ վերջին տարիներուն տեղի ունեցող Քսաններու տարելիցի միջոցառումներուն, անոնց մասին հրապարակուող գրականութեան եւ վաւերագրական ժապաւէններուն: Ան վստահեցուց որ պիտի գայ օրը, երբ նոյն ինքն Սուլթան Պայպրիտ հրապարակին վրայ, ուր անոնք կախաղան բարձրացած էին, պիտի կանգնուի անոնց յուշարձանը:

Բանախօսը անդրադարձաւ նաեւ այսօրուայ Հայաստանի հանրապետութեան դիմագրաւած տագնապներուն: Խօսելով արտագաղթի մասին ան յայտարարեց,- «Ժողովուրդը Հայաստանէն չէ որ կը փախչի, այլ կը փախչի իշխանութիւնը գաւթած օլիկարխներէն»:

ՄԳ-ՀԿ Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմինի ատենապետ Գաբրիէլ Մոլոյեան հրաւիրուեցաւ բեմ, հանգամանօրէն ներկայացնելու կուսակցութեան կեդրոնական վարչութեան Ատենապետ Ընկ. Յակոբ Տիգրանեանը: Ընկեր Մոլոյեան իր կարգին ոգեկոչեց Քսաններու նահատակութեան իմաստը ու կոչ ըրաւ նոր սերունդին՝ քալելու անոնց ուղիքէն: Ան շնորհակալութիւն յայտնեց օրուայ գլխաւոր բանախօս Սարգիս Հացպանեանին եւ բոլոր խօսք առնողներուն:

Ներկայացնելէ ետք Ընկ. Տիգրանեանի կենսագրական հակիրճ գծերը հրաւիրեց զինք տալու իր պատգամը:

«100 Տարիներ առաջ այս օրերուն Պոլսոյ Սուլթան Պայպրիտ հրապարակին վրայ կախա-

ղան կը բարձրացուէին Հնչակեան կուսակցութեան ամէնէն նուիրեալ գործիչները: Հայ ժողովուրդի բնաջնջման ճիւղաղային ծրագիրը մտայղացող եւ իրականացնող իթթիհատի պարագլուխները վստահ



էին, որ կախաղան բարձրացնելով մեր 20 հերոսները անոնք վերացուցած կ'ըլլային իրենց կեանքին սպառնացող անմիջական վտանգը: Սակայն ինչպէս գիտենք, անոնք վերջ ի վերջոյ պիտի չկարողանային խուսափիլ հայ վրիժառուներու արդար դատաստանէն», ըսաւ կուսակցութեան ատենապետը:

Շարունակելով Ընկ Տիգրանեան



Գաբրիէլ Մոլոյեան

եան ըսաւ,- «Գիտենք, նաեւ, որ մեր նահատակներուն բացած ուղին շարունակուեցաւ եւ ուժանալով ոչ միայն զոհողութիւններու, այլ նաեւ ուխտի վերանորոգման ճանապարհ դարձաւ: Եւ այսօր երբ Մայր կուսակցութիւնը իր տարբեր կառոյցներով, պիւնտքի եւ Հայրենիքի մէջ տարածուած մարմիններով կը նշէ Փարամազի եւ իր ընկերներուն նահատակութեան 100րդ տարելիցը կուզանք չիշեցնելու, որ քսաններու նահատակութիւնը եղաւ ու կը մնայ մեզի համար նոր արիւն ներարկող պատմական աւանդ»:

Ընկեր Տիգրանեան յայտարարեց որ, շուտով կուսակցութիւնը թուրքիոյ պատկան մարմիններուն պաշտօնական պահանջագիր պիտի ներկայացնենք, նախ յայտնաբերելու եւ ապա յանձնելու Հնչակեան քսան հերոսներուն աճիւնները: «Քսաններու վերադարձը եւ անոնց ազգային թաղումը Եռաբլուրի մէջ մեզի համար բարոյական եւ սկզբունքային խնդիր է... Հետեւաբար կը վստահեցնենք, որ վճռական ենք ու պիտի հետեւողական ըլլանք մինչեւ որ, Քսանները վերադառնան եւ հանգիստ ննջեն



Մովիկ Քեօրօղլեան

կապէս ըսաւ.-«Անցնող տասնամեակներուն Քսանները եղան ներշնչման աղբիւր հազարաւոր հայերու եւ ոչ հայերու, որոնք կը հաւատալի բոլոր ժողովուրդներու բարօրութեան: Այսօր, Հայաստանի Հանրապետութիւնը ապրող փաստն է Հնչակեան քսաններու եւ այլ մտաւորականներու հետապնդած նպատակներուն: Անոնց պայքարը՝ պէտք է եւ պիտի շարունակուի: Հայ Ամերիկեան Խորհուրդը պիտի զօրացնէ կապերը թուրք այն մտաւորականներուն հետ, որոնք կ'ընդունին Հայոց Յեղասպանութեան փաստը եւ կողմնակից են



Սեւակ Խաչատուրեան

Հնչակեան նահատակները, որոնք մահացան հարիւր տարիներ առաջ, անկեան կարեւորութիւնը, թէ ինչու համար կը պայքարէին եւ ունեցան քաջութիւնը դիմադարձելու մարդասպան բռնապետութեան: Ան նաեւ յայտարարեց, որ հպարտ է Գոնկորէսէն ներս ներկայացնելով ընտրաշրջանի հայ բնակիչները եւ խոստացաւ կրկնապատկել իր ջանքերը՝ Հայկական Յեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ:

Բեմ հրաւիրուեցաւ Արեւմտեան Ամերիկայի Թեմի Առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեան: Սրբազան հայրը իր սրտի խօսքին մէջ ըսաւ,- «Հայոց Յեղասպանութեան 100-ամեակի ոգեկոչման հանդիսութիւններու ծիրէն ներս, քսան կախաղաններու անունը կրող յուշահանդէսը մեզ կը տանի դէպի անցեալը եւ գալիքը: Անցեալը ներկային մէջ կ'արձագանքէ եւ կը լուսաւորէ իւրաքանչիւրի կեանքը նահատակութեան ոգիով վստահ Յիսուսի եւ վստահ հայրենեաց, իսկ



Վահան Խոտանեան

խաղաղ գոյակցութեան: Պէտք է շարունակել պայքարը, մինչեւ որ թրքական կառավարութիւնը ինք եւս միանայ այն ուժերուն, որոնք հաշտուած են իրենց երկրի պատմութեան հետ եւ ընդունած՝ իրենց նախորդներու գործած մեղքերը»:

Ելոյթ ունեցաւ ՀԱԽ-ի ատենապետ Սեւակ Խաչատուրեան: Ան

ԸՆԿ. ՅԱԿՈԲ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ ԽՕՍՔԸ ՔՍԱՆ ԱՆՄԱՐՆԵՐՈՒՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ



Յարգելի Ներկաներ, Սիրելի Ընկերներ

100 Տարիներ առաջ այս օրերուն Պոլսոյ Սուլթան Պայլազիտ հրապարակին վրայ կախողան կը բարձրացուէին Հնչակեան կուսակցութեան ամէնէն նուիրեալ գործիչները: Հայ ժողովուրդի բնաջնջման ճիւղադաշին ծրագիրը մտայղացող եւ իրականացնող իթթիհատի պարագլուխները վստահ էին, որ կախողան բարձրացնելով մեր 20 հերոսները անոնք վերացուցած կ'ըլլային իրենց կեանքին սպառնացող անմիջական վտանգը: Սակայն ինչպէս գիտենք, անոնք վերջ ի վերջոյ պիտի չկարողանային խուսափիլ հայ վրիժառուներու արդար դատաստանէն:

Գիտենք, նաեւ, որ մեր նահատակներուն բացած ուղին շարունակուեցաւ եւ ուժանայլով ոչ միայն զոհողութիւններու, այլ նաեւ ուխտի վերանորոգման ճանապարհ դարձաւ:

Եւ այսօր երբ Մայր կուսակցութիւնը իր տարբեր կառույցներով, սփիւռքի եւ Հայրենիքի մէջ տարածուած մարմիններով կը նշէ Փարամազի եւ իր ընկերներուն նահատակութեան 100րդ տարելիցը կուզանք յիշեցնելու, որ քսաններու նահատակութիւնը եղաւ ու կը մնայ մեզի համար նոր արիւն ներարկող պատմական աւանդ:

Քսաններու փոխարէն քսան հազարներով:

Տօքթ. Պէննէի այս մարգարէական խօսքերը լոկ խօսքեր չմնացին: Վկայ այն փաստը, որ մենք այսօր կանք, կը գործենք, կը պայքարինք ու պիտի շարունակենք պայքարիլ այնքան ատեն, որ մեր ժողովուրդը չէ հասած իր վերջնական նպատակներուն:

Վերջերս, Հնչակեան կուսակցութիւնը իր կեդրոնական վարչութեան գրասենեակը Սփիւռքէն փոխադրեց Հայաստան եւ այդպիսով պաշտօնապէս դարձաւ Հայաստանակեդրոն կուսակցութիւն: Մեր յաջորդ նպատակը կը մնայ Քսան նահատակներու աճիւններու փոխադրումը Ազատ Անկախ Հայաստան ու գետեղումը Եռաբլուրի Ազգային գերեզմանատան մէջ:

Արդ, այսօր այս բեմէն՝ Յանուն Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան կու գամ յայտարարելու, որ մենք շտապով, Թուրքիոյ պատկան մարմիններուն պաշտօնական պահանջադիր պիտի ներկայացնենք, նախ յայտնաբերելու եւ ապա մեզի յանձնելու Հնչակեան

քսան հերոսներուն աճիւնները:

Քսաններու վերադարձը եւ անոնց ազգային թաղումը Եռաբլուրի մէջ մեզի համար բարոյական եւ սկզբունքային խնդիր է... Հետեւաբար կը վստահեցնենք, որ վճռական ենք ու պիտի հետեւողական ըլլանք մինչեւ, որ Քսանները վերադառնան եւ հանգիստ ննջեն իրենց երազած Հոն արեւելքի հորիզոնին վրայ հիմնուած Ազատ Ու Անկախ Հայաստանի մէջ:

Անցնող ամիսներուն, մեր ժողովուրդը աշխարհով մէկ նշեց Հայոց Յեղասպանութեան 100րդ տարելիցը: Մենք մէկ մարդուն ման ոտքի ելլելով պահանջեցինք արդարութեան վերականգնում: Սակայն, մեր համազգային այս ճիգերը պիտի ըլլան թերի եթէ պահանջատիրութեան գործընթացը շարունակէ մնալ այս նոյն հարթութեան վրայ: Մօտիկ անցեալին կը խօսէինք ու տակաւին կը խօսինք Յեղասպանութեան ճանաչման մասին, բայց այսօր պարտաւոր ենք անցնիլ ճանաչումէն անդին եւ բուռն թափով լծուիլ մեր պահանջներու իրաւական թղթածրարի պատրաստման գործին:

Յարգելի ներկաներ, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան համար առաջնային խնդիրներն են,

Առաջին՝ Հայաստանի Հանրապետութեան հզօրացումն ու կայունութիւնը: Այս առումով պէտք է անպայման ընդգծել, որ մեզի համար Հայաստանի մէջ այսօր տիրող ընդհանուր իրավիճակը անընդունելի է: Եւ որպէս սոցիալ դեմոկրատական սկզբունքներուն դաւանող կուսակցութիւն մեզի համար կարեւոր է ընկերային արդարութեան հաստատումը: Բնականաբար այդ գործընթացը երկար եւ շարունակական ճիգերով կարելի է իրականացնել: Այստեղ նոյնպէս դրական շեշտով պէտք է կարեւորել սպասուած սահմանադրական բարեփոխումներու գործընթացը: Պայմանաւ, որ այդ փոփոխութիւններուն հիմքը ըլլայ ընկերային արդարութեան հաստատումը, ՀՀ քաղաքացիի իրաւունքները պաշտպանութիւնը եւ Հայաստանի անապահով խաւերուն հանդէպ ցոյց տրուելիք հոգատարութիւնը: Բացի այդ, նոյնքան կարեւոր է մենատիրական մօտեցումներուն, Օլիկարխիայի եւ կաշառակերութեան դէմ պայքարը: Այս կարեւոր քայլերը իրականացնելով է, որ միայն կարելի

պիտի ըլլայ կասեցնել Հայաստանը տագնապալարող արտագաղթը:

Երկրորդ՝ Հայոց Յեղասպանութեան փաստի ճանաչման առընթեր կատարուելիք աշխատանքներուն ընթացքը: Այս առումով, ինչպէս արդէն նշեցի, բոլորս պէտք է միահամուռ ճիգերով պատրաստենք իրաւական թղթածրարը, որովհետեւ Հայոց Յեղասպանութեան ճանաչման հանգրուանէն անդին մենք պարտաւոր ենք աւելի լուրջ, աւելի հիմնաւոր, աւելի յստակ մարտավարութեամբ հանդէս գալ: Այստեղ թոյլ տուէք ողջունել Հայաստանի մէջ կազմուած Հայոց Յեղասպանութեան 100րդ տարելիցի պետական յանձնաժողովի կատարած աշխատանքները, յոյս ունենալով, որ արդէն մշտական դառնալիք այդ մարմինը հաստատուն քայլերով կը շարունակէ իր գործունէութիւնը համազգային զանազան հարցերու շուրջ: Նոյն ծիրին մէջ պէտք է նաեւ կարեւորել պետական յանձնաժողովի նախաձեռնութեամբ պատրաստուած համահայկական հուշակագիրը, հաւատալով, որ հոն տեղ գտած դրոյթները տեղ կը գտնեն աշխարհով մէկ տարածուած հայութեան պատասխանատու մարմիններու հիմնական օրակարգերուն մէջ: Գալով Հայ-թրքական հիմնախնդրին, պէտք է նոր կամուրջներ հաստատել թրքական այն կողմերուն հետ, որոնք ոչ միայն կ'ընդունին Հայոց Յեղասպանութեան փաստը այլ նաեւ պատրաստ են մէկ քայլ առաջ երթալով իսօիլ հաւանական համագործակցութեան մասին: Սակայն այս բոլորը պէտք է ըլլան մտածուած եւ ամենակարեւորը համահայկական պարունակի մը մէջ: Թուրքիոյ իշխանութիւններուն ներկայացուելիք ցանկացած պահանջ պէտք է ըլլայ նպատակային: Այսինքն մեր պահանջատիրութիւնը պէտք է սահմանափակուի միայն եկեղեցիներ կամ անհատական կալուածներ պահանջելով այլ մեր աշխատանքները պէտք է ըլլան համահայկական ընդհանուր ձեւաչափերով եւ մօտեցումներով:

Երրորդ՝ Արցախի հանրապետութեան ամրապնդումը: Այդ աշխատանքը պիտի տարուի երկու ուղղութիւններով: Նախ Արցախի սահմանի ապահովումն ու Արցախցի հերոսական ժողովուրդի անվտանգութեան պահպանումը եւ երկրորդ Արցախի հանրապետութեան միջազգային ճանաչման գործընթացներու շարունակումը: Պէտք է նաեւ նշել, որ Արցախեան հիմնախնդրի կարգաւորման որեւէ գործընթաց պէտք է իբրեւ հիմք ունենայ Արցախի ժողովուրդին ազատ ինքնորոշման իրաւունքը: Արցախը մեր յաղթանակներ

ուն պահէն է ու մեր ժողովուրդի անվտանգութեան խորհրդանիշը եւ այդ առումով մենք պատրաստ պէտք է ըլլանք ցանկացած զոհողութեան:

Չորրորդ՝ շարունակել ամրապնդել Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները: Այս առումով պէտք է աշխատանք տանիլ մէջտեղ բերելու նոր գործնական եւ արդիական ծրագիրներ: Ինչպէս նաեւ սատարել, որ հայութեան երկու հատուածներու միջեւ փոխադարձ վստահութեան մթնոլորտ ստեղծուի եւ Հայաստանի մէջ հիմքը դրուի սփիւռքէն ներգաղթած հայրենակիցներու միախառնման (ինթէկրացման) գործընթացին: Ի վերջոյ Հայաստան-Սփիւռք միասնութիւնը պէտք է մնայ սոսկ յօգուտաւն չաչտաւորութիւն: Այս առումով, յատկապէս Սփիւռքահայ երիտասարդութեան ներգրաւումը այսօրուան Հայաստանի զարգացման ընդհանուր գործին մէջ կը մնայ դանդաղ եւ թերի:

Այս բոլորով հանդերձ, մենք կը մնանք հաստատակամ եւ հաւատացող հայրենիքի պայծառ ապագային, ի տես մեր արի, խելացի, նորարար եւ հայրենիքին հանդէպ մեծ սեր ու հաւատք ունեցող նոր սերունդին: Մեր դարը միայն արդիականութեան դարը չէ: Մեր դարը մարդու ժի, յաւելեալ ներուժի ու մարդկային նոր տեսակի դարն է: Իսկ այսօրուայ նոր սերունդը մարդկային այդ նոր տեսակի ու ներուժի ամենավառ ներկայացուցիչն է:

Աւարտին, յանուն Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութեան կու գամ ողջունելու ձեզմէ իւրաքանչիւրին ներկայութիւնը այստեղ:

Մենք բոլորս Օսմանեան թուրքի եաթաղանին յաղթանակած հերոսներուն հետնորդներն են:

Մեր կուսակցութեան ճանապարհը եղած է պայքարի եւ նահատակութեան ճանապարհ: Ու այսօր եւս մենք այդ ուղիով կը պահենք մեր սրտերուն մէջ:

Մեր կամքը, հաւատամքը եւ մեր երակներէն վազող արիւնը պատրաստ են գործելու յանուն մեր երկրին, մեր Հայաստանին, որ մեր սիրտն է ու բոլոր ժամանակներու վեհագոյն արժէքը:

Այդպէս էր երէկ: Այդպէս է այսօր ու այդպէս այլ պիտի ըլլայ վաղը:

Ողջոյն անոնք, որոնք կը հաւատան մեր մեծ իտէալներուն Մայր Հայաստանի, անպարտելի Հայաստանի եւ Հզօր Հայաստանի բոլոր ճանապարհներուն վրայ:

Կեցցէ՜, Հայ ժողովուրդը:
Կեցցէ՜, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը:

Հնչակեան Քսան Կախաղաններու 100-Ամեակը

Մարուակոււած էջ6-էն

իրենց երազած՝ Հոն արեւելքի հորիզոնին վրայ հիմնուած Ազատ Ու Անկախ Հայաստանի մէջ», շեշտեց ընկերը: (Ընկ. Տիգրանեանի ելոյթը տեսնել առանձին):
Երեկոյի ընթացքին գործադրուեցաւ տպաւորիչ գեղարուեստական յայտագիր մը, ազգային ու հայրենասիրական երգերով, ասմունքներով ու պարերով ճոխացած:
Մէջընդմէջ ելոյթներ ունեցան «Սիփան» երգչախումբը, գե-

ղարուեստական ղեկավարութեամբ Հենրիկ Անասեանի, Նոր Սերունդ Մշակութային Միութեան պարախումբը, ասմունքող Նունէ Աւետիսեանը, երգիչներ Առնօ Մկրտչեանը, Սալի Մայիլեանը եւ Յակոբ Յակոբեանը:
Խանդավառ մթնոլորտի մէջ հնչեցին «Կուռնկը», «Կեցցէ Ձէյթունը», «Ջարթի Լառն», «Ատանան», «Ողջոյն Քեզ Հնչակը», «Հզօր Հայաստանը», հանդիսութիւնը փակելով «Տուր Ձեռքդ Ընկեր» Հնչակեան քայլերգով:

ՆԱԽԱԳԱՅ ԶԱՍԹՈՐԹՈՇ ՊԵՏՔ Է ԶԱՐՑԱՔՆՆՈՒԻ ՆԱԵԻ ԹՐՔԱԿԱՆ ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹԵԱՆ ՍԵՂԱԴՐԱՆՔՆԵՐՈՒ ԶԱՍԱՐ

ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ

Անցեալ շաբաթ Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու տան նախկին նախագահ Տենիս Հասթըրթին մեղադրանք առաջադրուեցաւ դաշնակցային դատախանայներու կողմէ:

1) Հետաքննութիւններու դաշնակցային պիւրոյին (FBI) ստելու համար, թէ ինչու տարբեր դրամատուներէ մօտ 1.7 միլիոն տոլար հանած է վերջին չորս տարուան ընթացքին:

2) Դրամատուներու կողմէ մեծ եւ կանխիկ գործարքներու համար պահանջուող հաշուետուութիւններէն խուսափելու պատճառով:

Այս մեղադրանքներէն իւրաքանչիւրով անոր կը սպառնայ առաւելագոյն հինգ տարուան ազատազրկում եւ 250 հազար տոլարի տուգանք:

Ըստ ներկայացուած մեղադրանքին, Հասթըրթը 2010 թուականին գաղտնի հանդիպում ունեցած է իր նախկին ուսանողներէն մէկուն հետ եւ համաձայնած է անոր վճարել 3.5 միլիոն տոլար, որպէսզի ան լուծութիւն պահանջէ իր «անցեալի վատ արարքին» համար, երբ ան ըմբռնարտի մարզիչ էր Իլինոյիսի Եորթուիլ դպրոցին մէջ, 1965-1981 թուականներուն: 73-ամեայ Հասթըրթը այդ հանդիպումէն սկսեալ անոր վճարած է 1.7 միլիոն տոլար՝ սկիզբը 50 հազարական տոլար հանելով միաժամանակ քանի մը դրամատուներէ, իսկ յետագային դրամատան պաշտօնակներու կասկածանքին պատճառով կրճատելով դանոնք մինչեւ 10 հազարական տոլարի՝ դրամատանային հաշուետուութեան պահանջներէն խուսափելու համար:

2014 թուականի Դեկտեմբերին, երբ FBI-ը անոր հարցուցած էր, թէ ինչու այդպիսի մեծ գումարներ վերցուցած է դրամատուներէն, Հասթըրթը «էպպէս սխալ, կեղծ եւ խաբուսիկ յայտարարութիւններ» ըրած է՝ ըստ դաշնակցային դատախանայներու: Ըստ տարբեր լրատուական աղբիւրներու, Հասթըրթը այս գումարները վճարած է իր նախկին ուսանողին՝ տասնամեակներ առաջ անոր նկատմամբ թոյլ տրուած սեռական ոտնձգութիւնները թաքցնելու նպատակով:

Հասթըրթի հասցէին կատարուած ամբաստանութիւնները յատկապէս կը հետաքրքրեն ամերիկահայ համայնքը, քանի որ անցեալին ան մեղադրուած էր, որ մեծ չափերու հասնող կաշառքներ ստացած է թրքական կառոյցներէն Ներկայացուցիչներու տան նախագահի պաշտօնին եղած ժամանակ, 1999-2007 թուականներուն, Հայոց Յեղասպանութեան բանաձեւերը տապալելու համար: Այս մեղադրանքները երբեք լիարժէքօրէն չեն հետաքննուած Միացեալ Նահանգներու կառավարութեան կողմէ: Քոնկրետէն հեռանալէն ետք Հասթըրթը աշխատեցաւ Տիքըթայն Ծափիրոյի մօտ, Ուաշինկթընի մէջ իբրեւ լոպիստ թուրքիոյ եւ այլ յաճախորդներու համար:

Քոնկրետական Հասթըրթը իր քաղաքական ասպարէզի սկիզբը զարմանալիօրէն մեծապէս սատարած էր Հայոց Յեղասպանութեան ճանաչման: 1984 թ. Ապրիլ 19-ին

Ներկայացուցիչներու տան մէջ ան էլոյթ ունեցաւ ի նպաստ Քոնկրետի ներկայացուցած Յեղասպանութեան ճանաչման բանաձեւի: 1996 թ. Յունիս 5-ին ան կողմ քուէարկեց օրէնքի մը փոփոխութեան, որմով պիտի կասեցուէր թուրքիոյ տրամադրուող ամերիկեան օգնութիւնը, քանի ղեռ այդ երկիրը չէ ճանչցած Հայոց Յեղասպանութիւնը: Բացի այդ, 2000 թ. Օգոստոսին խօսնակ Հասթըրթը հանդիպեցաւ Կլենտէյլի հայ համայնքի ղեկավարներու հետ՝ խոստանալով Հայոց Յեղասպանութեան բանաձեւը դնել քուէարկութեան՝ հակառակ նախագահ Քլինթընի խիստ առարկութեան:

Սակայն, 2000 թ. Հոկտեմբեր 19-ին, Յեղասպանութեան բանաձեւի քուէարկութենէն վայրկեաններ առաջ, Հասթըրթը օրինագիծը հանեց քննարկումէն՝ արդարանալով, որ նախագահ Քլինթըն իրեն նամակ ուղարկած է՝ «ազգային անվտանգութեան լուրջ մտահոգութիւններ» բարձրացնելով: Ինչպէ՞ս է, որ Ներկայացուցիչներու տան հանրապետական նախագահը, որ գրեթէ բոլոր հարցերուն մէջ կտրականապէս դէմ էր դեմոկրատ նախագահին եւ կ'աջակցէր անոր պաշտօնազրկման (իմփիչ-մընթին), յանկարծ որոշեց համաձայնիլ անոր հետ Հայոց Յեղասպանութեան բանաձեւը մերժելուն վերաբերեալ: Չորս օր ետք թրքական «Սապահ» թերթը հաղորդեց, որ Հասթըրթը համաձայնած էր խափանել բանաձեւը, եթէ նախագահ Քլինթընը իրեն գրաւոր խնդրագիր ներկայացնէ:

Կրնա՞յ գոյութիւն ունենալ աւելի ծախող պատճառ, որ մղէ նախագահ Հասթըրթը յանկարծ փոխելու իր վերաբերումը Հայոց Յեղասպանութեան հարցին նկատմամբ:

«Վենիթի ֆէյըր» ամսագիրը 2005 թ. իր սեպտեմբերեան համարին մէջ բացայայտեց, որ FBI-ի նախկին թարգմանչուհի Սիպլէյ Էտմոնտս զննած էր գաղտնաբար ձայնագրուած թրքական հեռախօսագանգերը, որոնք կը հաստատէին, որ Հայոց Յեղասպանութեան բանաձեւի ընդունումը կանխելու համար նախագահ Հասթըրթը գանձած է առնուազն 500 հազար տոլար: FBI-ը գաղտնալսած է թուրք գրուցակիցները, որոնք պարծեցած են, թէ ինչպէս՝ «Հասթըրթի նախընտրական քարոզարշաւին ժամանակ կազմակերպած է տասնեակ հազարաւոր տոլարներու վճարումները փոքր չեքերով», որովհետեւ 200 տոլարէն պակաս նուիրատուութիւններու համար յայտարարագրեր չէին պահանջուեր: Ի դէպ, «Վենիթի ֆէյըր»-ի կողմէ նախագահ Հասթըրթի 1996-2002 թթ. դաշնակցային փաստաթուղթերու քննութիւնը ցոյց տուած է, որ նախընտրական քարոզարշաւի ժամանակ ան ստացած է մօտ 500 հազար տոլարի չլայտարարագրուած վճարումներ:

Ապշեցուցիչ է, որ էտմոնտսի լուրջ մեղադրանքները հետաքննելու փոխարէն՝ FBI-ը պաշտօնէն հեռացուց զինք, իսկ Միացեալ Նահանգներու կառավարութիւնը անոր թոյլ չտուաւ վկայութիւն տալու ոչ Քոնկրետի եւ ոչ ալ դատարանի մէջ՝ «պետական գաղտնաբերում»:

Շաբ.բ էջ 18

Լաս Վեկասի Մէջ Կազմուեցաւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան Մասնաճիւղը



Լաս Վեկասի հայ գաղութը տօնեց Նոր Սերունդ Մշակութային Միութեան հիմնադրութիւնը: Այս առթիւ, Յունիս 12-ին Լաս Վեկասի Հայ Առաքելական եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ ճաշկերոյթ մը, որ միասնաբար կազմակերպած էին ՄԴ Հնչակեան կուսակցութեան Լաս Վեկասի Հայ Բժշկեան մասնաճիւղը եւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան նորաստեղծ վարչութիւնը:

Ճաշկերոյթին ներկայ եղող պաշտօնական հիւրերու շարքին էին Հայաստանի Հանրապետութեան Պատուոյ Հիւպատոս Էնտի Արմէնեան, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Կեդրոնական վարչութեան ատենապետ Յակոբ Տիգրանեան, Եկեղեցւոյ հովիւ Տէր Նարեկ Աւագ Քահանայ Մաթարեան, հայրենի հասարակական գործիչ Սարգիս Հացպանեան, ՄԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմինի ատենապետ Գաբրիէլ Մոլոյեան եւ վարիչ Մարմինի այլ անդամներ:

Տէր հօր աղօթքէն ու սեղաններու օրհնութենէն ետք, օրուայ հանդիսավար՝ ՄԴՀԿ վարիչ Մարմինի անդամ Կէրի Մինանեան բացման խօսքէն կատարելով բարի գալուստ մաղթեց հիւրերու եւ բոլոր ներկաներուն:

Պատուոյ Հիւպատոս Պր. Էնտի Արմէնեան խօսեցաւ օրըստօրէ մեծացող ու զարգացող Լաս Վեկասի հայ գաղութի մասին ու շնորհաւորեց Նոր Սերունդի կազմութիւնը շրջանէն ներս:

ՄԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմինի ատենապետ Գաբրիէլ Մոլոյեան իր կարգին շնորհաւորական խօսքեր ուղղեց նորակազմ միութեան:

ՄԴՀԿ «Հայկ Բժշկեան» մասնաճիւղի ատենապետ եւ Լաս Վեկասի երկարամեայ բնակի ձորձ Յակոբեան պատմականը ըրաւ գաղութի վերջին տարիներուն ապրած վերելքին ու շնորհակալութիւն յայտնեց բոլոր այն միաւորներուն, որոնք նպաստեցին Նոր Սերունդ Մշակութային Միութեան կազմութեան:

Յայտնի երգիչ Կարէն Յակոբեան իր ազգային ու հայրենասիրական երգերով խանդավառեց ներկաները՝ մինչեւ ուշ երեկոյ:

ԿԱՅԾ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ Կազմակերպութեամբ՝

Հայոց Յեղասպանութեան 100-Ամեակի առիթով՝ "Եւրոպական ֆիլմի ցուցադրութիւն"

Տեղի կ'ունենայ Կիրակի՝ 21 Յունիս, 2015, Կէսօրէ ետք ժամը 5:30-ին

Փասատիմայի Կարօ Սողանալեան Սրահէն Գերս՝ 1060 N Allen Ave. Pasadena, CA 91104

Massis Weekly

Volume 35, No. 23

Saturday, June 20, 2015

100th Anniversary of 20 Armenian Martyrs Commemorated In Los Angeles

GLENDALE — More than 1400 attendees crowded the historic Alex Theater on Sunday, June 14 to mark the 100th anniversary of the Armenian Nation's 20 Hunchakian Martyrs.

Zovig Koroghlian, the evening's Mistress of Ceremonies, presented Vahan Khodanian, who delivered the Armenian Council of America's (ACA) message, paying homage to the 20 heroic Martyrs who fought for democracy, liberty and equality for all mankind. ACA Chairman Sevak Khatchadorian, introduced the descendants of the 20 Martyrs, along with local elected officials who took part in the event. A short video montage of Rep. Adam Schiff (D- Burbank) reading the name's of the Genocide victims on the House floor, including those of the 20 Armenian Martyrs was displayed. Immediately following the video, Khatchadorian presented Congressman Schiff with the "Stephan Sapah-Gulian Integrity Award" for his continued leadership towards championing causes important to the Armenian American Community.

Congressman Schiff, after re-



ceiving a standing ovation, expressed his deep gratitude for the prestigious award. "The Twenty Hunchakian Martyrs who died a century ago, understood the importance of what they were fighting for, had the courage to take on a corrupt and murderous dictatorship, and that their ideals will go on and help the birth of a great nation," said Schiff. He also stated that he is proud to represent his Armenian-American constituents in Congress, and promised to double his

efforts for the recognition of the Armenian Genocide.

Other speakers included Social Democrat Hunchakian Party Central Committee Chairman Hagop Dikranian, political activist from the Republic of Armenia Sarkis Hatspanian, His Eminence Archbishop Hovnan Derderian Primate of the Western Diocese of the Armenian Church and Chairman of the Social Democrat Hunchakian Party Executive Committee Western USA Region Gabriel Moloyan.

An artistic program of Armenian national and patriotic songs and poems were performed with the participation of the "Sipan" Choir conducted by Maestro Henrik Annasian, Nor Serout Cultural Association's dance troupe, well known poetry reciter Nouné Avedissian and talented singers Salpi Mayilian, Arno Mkrtychyan and Harut Hagopian who elated the audience with inspiring and emotional songs and poems of remembrance, struggle and triumph for the Armenian nation.

100th Anniversary of Twenty Martyrs Commemorated in Istanbul



ISTANBUL, TURKEY – Armenians and non-Armenians in Istanbul commemorated the 100th anniversary of the martyrdom of the Social Democrat Hunchakian Party's 20 Martyrs who were executed on the early morning of June 15, 1915 in Beyazit Square during the Armenian Genocide. The commemoration, organized by the Nor Zartonk initiative was held at the Edirnekapi Armenian Martyr's Cemetery on June 15, 2015.

The history of the 20 Armenian martyrs is distinctly connected with the fate of the Armenian people in 1915. With the restoration of Ottoman constitution in 1908, The Hunchakian Party became one of the main representatives of the Armenian community in the Ottoman Empire. The Hunchakian Party came to understand the Young Turk policies and ideology that adopted a form of Turkish nationalism which was xenophobic and exclusionary in its thinking. These policies threatened to undo the tattered fabric of a multi-ethnic and multi-religious society, once again harm-

ing the Armenian populace. The Young Turks seized complete power in a coup d'etat in January 1913. On September 7th of that same year, the 7th General Convention of the Social Democrat Hunchakian Party adjourned with an aim to thwart this new dictatorship by any means necessary, and restore democracy.

The Young Turk dictatorship learned of this aim through the betrayal of a fellow Armenian. Unfortunately, one may argue the betrayal did not only result in the arrest of hundreds of Hunchakian leaders and intellectuals and the execution of these twenty courageous men, but also facilitated the weakening of the leadership of the Armenians at the cusp of the Armenian Genocide.

"The state has not changed at all since those days. Paramaz and his friends suffered the same fate as Hrant Dink did, and the process of rewarding the murderers of Armenians goes on," a Nor Zartonk Sayat Tekir representative said, adding that attacks on the Armenian cultural heritage continue nowadays.

Kirk Kerkorian Dies in Los Angeles at Age 98

LOS ANGELES — Kirk Kerkorian, the son of poor Armenian immigrants who used his gambler's instincts to become a multibillionaire Las Vegas casino tycoon, Hollywood mogul, airline owner and auto industry investor, died at age 98, according to media reports on Tuesday.

Kerkorian, who was the largest shareholder in MGM Resorts International, died on Monday night in Los Angeles following a brief illness, the Las Vegas Review-Journal said.

Kerkorian had little formal education and dropped out of school at age 16.

In his youth he was known as "Rifle Right Kerkorian" for his punching power as a small-time boxer and he would become an enduring American business heavyweight with a knack for placing winning bets in the corporate world.

In May, Forbes magazine estimated Kerkorian's wealth at \$4.2 billion after taking a hit on his investments in 2008, when the magazine said he was worth \$16 billion.

Three different times – in 1969, 1973 and 1993 – Kerkorian built the world's biggest hotel in Las Vegas, the desert gambling capital where he first made his fortune in the 1950s and 1960s. On his way to becoming a casino magnate, he befriended Rat Pack stars Frank Sinatra, Dean Martin and other Las Vegas headliners.

He owned some of the biggest and best-known hotels and casinos in Las Vegas – at one time possessing more than half the hotel rooms on the



famous Las Vegas strip. He also was instrumental in turning Las Vegas into a family destination rather than merely a naughty pleasure spot for adults.

Kerkorian bought and sold the venerable MGM film studio three times, acquired the United Artists studio and tried to buy Columbia Pictures. Even as a studio chief, he would stand in line to buy movie tickets at a theater with everyone else rather than attend private screenings.

He began buying property in Las Vegas in 1962 after selling his charter airline, which he later repurchased, and was on his way to becoming a Las Vegas power player.

"When you're a self-made man you start very early in life," Kerkorian once told the Las Vegas Review-Journal. "... You get a drive that's a little different, maybe a little stronger, than somebody who inherited."

Continued on page 4

4 Armenians Among Georgia Flood Victims



TBILISI — Four members of an Armenian family in Tbilisi are among at least 12 people killed in flooding that wreaked havoc on Georgia's capital at the weekend, Armenia's government said on Monday.

A senior official at the Armenian Ministry of Local Government and Emergency Situations, Hovannes Khangeldian, said the bodies of the four women, all of them Georgian nationals, were discovered on Monday morning. "The precise circumstances of their death are not yet clear," he told RFE/RL's Armenian service (Azatutyun.am).

Three of the victims were identified as Zhanna Yeghiazarova, Svetlana Yeghiazarova and Liana Yeghiazarova.

About a dozen Georgians remained missing one day after deadly floods swept away dozens of buildings and cars and devastated Tbilisi's zoo. Georgia observed a day of mourning for the 12 people already confirmed dead as search and rescue operations continued.

Prime Minister Hovik Abrahamian expressed Armenia's readiness to help Georgia deal with the consequences of the calamity when he phoned his Georgian counterpart Irakli Gharibashvili

on Sunday. Armenian Minister of Emergency Situations Armen Yeritsian reaffirmed this offer in a phone call with his Georgian opposite number.

Khangeldian, who runs the National Center for Crisis Management at Yeritsian's ministry, said the Armenian side specifically offered to send rescue teams to Tbilisi. "[The Georgian authorities] have replied that there is no need for any assistance yet," the official said.

The floods also allowed tigers, lions, wolves, and other animals to escape from Tbilisi's zoo. Some of the animals were killed by the floodwaters, some were shot by police, and others were captured and returned to their cages. Authorities asked city residents to stay indoors until all the animals are rounded up.

According to a spokesman for Yerevan's Mayor Taron Markarian, four employees of the Armenian capital's zoo were dispatched to Tbilisi to help their Georgian colleagues track down and save the missing animals. He said they will also communicate to relevant Georgian authorities Markarian's proposal to temporarily shelter surviving animals at Yerevan's recently renovated zoo.

World Council of Churches Adopts Statement on Armenian Genocide



YEREVAN — During the centenary year of the Armenian genocide by the Ottoman Empire, the executive committee of the World Council of Churches (WCC) has held its meetings in Armenia to honor the martyrs and victims of the genocide. We visit the genocide memorial to remember them and to pray in the name of the risen

Lord Jesus Christ. And we celebrate the life of the Armenian nation and the witness of the Armenian church.

The executive committee recalls the Minute on the 100th Anniversary of the Armenian Genocide adopted by the WCC 10th Assembly in 2013 in Busan. This important action by the 10th Assembly followed many other

Russian Soldier in Gyumri Held Over Killing Of Comrade



GYUMRI — The dead body of Ivan Novikov, a 19-year-old Russian army conscript, was found with several stab wounds in the northwestern Armenian city of Gyumri, which hosts the bulk of about 5,000 troops stationed at the 102nd Russian military base.

Colonel Aleksei Polyukhovich, a deputy commander of the Russian base, told reporters at the scene that another Russian soldier has been detained in connection with the killing. "He is now giving testimony," Polyukhovich said, refusing to reveal his identity. Later in the day, Russian media identified the suspect as Ivan Boskhomdzhev. The Interfax news agency quoted a Russian military spokesman as saying that he has already confessed to the murder.

According to initial information, an argument broke among three servicemen of the military base, in which

one of them was killed and another one was hospitalized. The third serviceman was handed over to law-enforcement bodies.

Investigation has been launched by Armenian law-enforcement bodies. A criminal case has been filed under Article 104 of the Criminal Code of Armenia.

The incident has taken place less than half a year ago after a seven-member family of the Avetissyans was brutally murdered in Gyumri. The Russian soldier of the Gyumri military, 19-year-old private Valeri Permyakov was charged with the murders.

In January several protests were held in Gyumri, with Armenian citizens demanding that the Russia authorities transfer Permyakov to the Armenian side. However, so far Russia has refused to do that, insisting that Permyakov be prosecuted and tried under Russian laws.

occasions on which the WCC Commission of the Churches on International Affairs (CCIA) had called for recognition of the Armenian genocide by the United Nations (UN) and by member states, dating back to the 1979 session of the UN Human Rights Commission. The WCC has played a key role over many years in accompanying the Armenian church in speaking out and working for recognition of the genocide, and for appropriate responses to the genocide's continuing impacts on the Armenian people.

A minute adopted at the 6th Assembly of the WCC held in 1983 in Vancouver acknowledged that "The silence of the world community and deliberate efforts to deny even historical facts have been consistent sources of anguish and growing despair to the Armenian people, the Armenian churches and many others." While some continue their efforts to deny or minimize these historical events, the executive committee is greatly encouraged by His Holiness Pope Francis' public recognition on 12 April 2015 of the mass killing of an estimated 1.5 million Armenians as genocide. We stress that there is a duty on the international community to remember the victims of genocide, in order to heal these historical wounds and to guard against similar atrocities in the future.

The WCC, with its many member churches, has participated in several events marking the centenary, including the official commemoration of the 100th Anniversary of the Armenian

Genocide and canonization of the martyrs in Yerevan, Armenia, on 21-25 April. The WCC and its member churches will continue to participate in the ongoing centennial commemorations this year by the Armenian diaspora, including with the Armenian Church Holy See of Cilicia in Antelias, Lebanon, on 18-19 July. The Executive Committee thanks the many member churches and ecumenical partners around the world that have observed or will observe this ongoing centenary in their own contexts, and that have spoken in recognition of the genocide and in commemoration of its victims. Through these commemorations, we acknowledge that these tragic events occurred, and that they must be named by their right name.

The Armenian genocide was accompanied in the same historical and political context by genocidal acts against other—mostly Christian—communities of Aramean, Chaldean, Syrian, Assyrian and Greek descent, which have blighted history at the beginning of the 20th century.

Denial, impunity and the failure to remember such events encourage their repetition. Those who deny or attack the life and dignity of a sister or brother undermine and destroy the humanity of both the victim and themselves. These centennial commemorations should mark the passing of the time when governments remain reluctant to name what occurred one hundred years ago as genocide. We urge all governments to abandon this reluctance.

International Conference Dedicated to the 100th Year Anniversary of the Martyrdom of the 20 Hunchakian Held in Yerevan



YEREVAN -- On June 15, the RA Ministry of Diaspora, the Institute of History of the National Academy of Sciences of the Republic of Armenia (NAS RA) and the Central Committee of the Social Democrat Hunchakian Party (SDHP) held an international conference dedicated to the 100th year anniversary of the martyrdom of the 20 members of the SDHP at the sessions hall of the chairmanship of the NAS RA.

The conference began with opening remarks by Director of the Institute of History of the NAS RA, academician of the NAS RA Ashot Melkonyan.

RA Minister of Diaspora Hranush Hakobyan greeted the participants of the conference and mentioned the following: "The international conference being held today at the National Academy of Sciences of the free and independent Armenia is a worthy tribute to the 20 young people who were hung a

century ago. The slogan "I Remember and Demand" also refers to them. Those 20 young people wanted to make the voices of Armenians for freedom heard in all four corners of the globe, and the voice of the Armenians for justice became a prayer for millions of people around the world as respect to the innocent victims. Today, all Armenians share the pain and memories, and we are witnessing the unprecedented awakening and consolidation of the nation and are seeing how Armenians are persistently moving forward until they reach the final solution to the Armenian Cause. This conference serves as an opportunity to commemorate our martyrs, pay homage to the 20 members of the Hunchakian Party and reflect on the achievements made by the 128-year-old political party. The 20 heroes of the Hunchakian Party sacrificed their lives for Armenia's independence, and the fact that they said "Long Live Armenia" as they were

being hung is symbolic."

President of the NAS RA Radik Martirosyan expressed his greetings to the participants of the conference, after which the participants watched the film "The Dawn for the Twenty".

In his speech entitled "The Political Evaluation of the Twenty", Lebanese-Armenian political figure, historian and former Member of the Parliament of Lebanon Yeghig Jerejian reflected on the history and past activities of the Social Democrat Hunchakian Party.

Turkish political figure and historian Kadir Akin talked about the heroic deeds of Paramaz (Mateos Sarkisian) in his speech entitled



After the speeches, the speakers actively engaged in debates and answered questions concerning the gathered.

What's symbolic is that June 15th



"Paramaz: The Person Who Linked the Loops of the Broken Chain".

Among other speakers were writer, publicist and translator Grigor Janikyan, as well as candidates of historical sciences Gegham Hovhannisyan and Manuk Stepanyan.

also marks National Flag Day in Armenia. Perhaps it wasn't by chance that the day coincided with the day of remembrance of the 20 martyred members of the Social Democrat Hunchakian Party as the guarantee for turning their dream into a reality.

MP Garo Paylan Vows To Fight Against Genocide Denial

ISTANBUL — One of the three ethnic Armenians elected to Turkey's new parliament has reportedly pledged to challenge Ankara's long-standing denial of the 1915 Armenian genocide in the Ottoman Empire.

In an interview with the Ermenihaber.am news website published on Wednesday, Garo Paylan also suggested Turkish recognition of the genocide is critical for the normalization of Turkey's relations with Armenia.

Paylan, 42, won a parliament seat on the ticket of the pro-Kurdish People's Democratic Party (HDP) widely credited with the ruling AK Party's worse-than-expected showing in Sunday's election. The HDP is the only major Turkish party to have recognized the Armenian Genocide.

Paylan stated to Agos daily that the HDP's victory had come as a result of 4 years of hard work, and said, "We



MP Garo Paylan Commemorating the Martyrdom of Paramaz at Sultan Beyazid square in 2013

founded the HDP in 2011. During the 2-year foundation period, all identities and all democratic groups me together. Our party includes all identities, and we stand for equality. We are also aware that this has not been tried in politics in Turkey before. Ours is a discourse of radical democracy with no ifs and buts."

Paylan, who has previously run an Armenian school in Istanbul, said he will fight against "denialist policies" both as an HDP deputy and in his personal capacity. "The Armenian genocide happened here but it is often viewed in the context of Armenia-Turkey relations," he told the Turkish-language publication based in Yerevan. "Armenia-Turkey relations form only a part but not the basis of this issue."

It will be extremely difficult, Paylan went on, to normalize those relations until the Turkish society comes to terms with the country's bloody past. "First and foremost, the crime of genocide must be acknowledged in Turkey, Armenian identity should be resolved and animosity towards Armenia should end," he said.

Therefore, he said, Armenia and its worldwide Diaspora should focus on Turkey in their decades-long pursuit of greater international recognition of the genocide. "I call on all Armenian parties to wage that struggle here," he said. "Every Armenian coming to Turkey has an impact."

The two other ethnic Armenian members of Turkey's newly elected parliament are Markar Esayan of the ruling AKP and Selina Dogan of the main opposition Republican People's Party (CHP).

Paylan described Dogan as a "close friend" with whom he is ready

to cooperate in the parliament. But he was far more skeptical about Esayan, a journalist with the pro-government newspaper "Yeni Safak," citing the latter's staunch support for Turkish President Recep Tayyip Erdogan's government.

"It's not having 3 Armenian MPs in Parliament matters, it's what they will say and do. My party will stand out with its policy based on equality. The AKP also has Kurdish MPs but we have not witnessed an egalitarian approach from them. All the other parties need to show more effort on this matter. It was this discourse that brought us success, I wish other parties can see that so that politics in Turkey can change." Paylan said to Agos.

Paylan, who has also engaged in entrepreneurial activity in the past, described the 2007 assassination of Turkish-Armenian editor Hrant Dink as the catalyst for his civic and political activities. Dink was one of the first members of Turkey's small Armenian community to openly speak about the 1915 genocide and call for its recognition by the Turkish state.

"In Turkey, saying that 'I am Armenian' is a kind of political statement," Paylan told Ermenihaber.am. "If you are interested in Armenians, if you are interested in your own identity, it means that you are also interested in politics."

Nor Serount Cultural Association Established in Las Vegas



LAS VEGAS -- The Armenian American community of greater Las Vegas region celebrated the inauguration of the Nor Serount (New Generation) Cultural Association Las Vegas region at a Dinner Gala on June 12, organized jointly by the Social Democrat Hunchakian Party's Las Vegas "Hayk Bzhishkyan" branch and the Nor Serount (New Generation) Cultural Association of Las Vegas, at the Hall of the Armenian Apostolic Church of Las Vegas.

Among the dignitaries were, Honorary Council of the Republic of Armenia Andy Armenian, Social Democrat Hunchakian Party Central Committee Chairman Hagop Dikranian, Arch. Priest Rev. Fr. Nareg Matarian, political activist from the Republic of Armenia Sarkis Hatspanian, Chairman of the Social Democrat Hunchakian Party Executive Committee Western USA Region Gabriel Moloyan along with other members of the SDHP Western USA Region Executive Committee.

Rev. Fr. Nareg Matarian opened the Gala with a prayer and blessing, encouraging all to keep a relationship with their spiritual side through the Armenian Church and continue Arme-

nian cultural and artistic traditions in the generations to come.

The Master of Ceremonies of the night, SDHP Executive Committee member Garry Sinanian, welcomed and thanked everyone for participating in inaugural event of the Nor Serount (New Generation) Cultural Association.

Honorary Council of the Republic of Armenia Andy Armenian spoke of the growing Armenian Community in Las Vegas, and congratulated the Nor Serount Cultural Association for its establishment in Las Vegas. SDHP Executive Committee Chair, Gabriel Moloyan echoed the previous speakers and congratulated a newly established organization.

Social Democrat Hunchakian Party's Las Vegas "Hayk Bzhishkyan" branch Mr. George Hagopian reflected on the progression of the Armenian American community in the Las Vegas region and the need for Armenian American organizations that helped initiate the founding of the Nor Serount Cultural Association of Las Vegas.

Distinguished Armenian singer Karen Hagopian brought great joy to all attendees through his performances of Armenian national and patriotic songs.

Christian Bale, Oscar Isaac to Star in Kirk Kerkorian Armenian Genocide Movie




HOLLYWOOD—Christian Bale and Oscar Isaac will co-star in an epic about the Armenian genocide film, called "The Promise." The funding of the film is by billionaire Kirk Kerkorian, according to a report by Showbizz*411

Terry George, of "Hotel Rwanda" fame, would direct the film, who has

stated, "I think the best way to describe it is a WWI love story, in the style of Dr. Zhivago and Reds, set against the backdrop of the Armenian genocide." Mike Medavoy will be lead producer. Bale and Isaac will be part of a romantic triangle with a yet-to-be announced actress.

The movie will be shot in Spain.

Hammer Museum Presents Screening of "Without Gorky"



LOS ANGELES — In commemoration of the 100th anniversary of the Armenian Genocide, Hammer Museum has dedicated 2015 to an exploration of multiple facets of Armenian culture, history, and landscape through film in a series called "I Am Armenian".

Next in the series is the screening of "Without Gorky" on June 23rd. "Without Gorky" explores the artistic and personal legacy of artist Arshile Gorky (1904–1948) through inter-

views with family members, archival photographs, and the artist's own work. A discussion with Kim S. Theriault, author of Rethinking Arshile Gorky, and filmmaker Carla Garapedian follows the screening.

All Hammer public programs are free and made possible by a major gift from the Dream Fund at UCLA.

Hammer Museum is located at 10899 Wilshire Blvd. Los Angeles, CA 90024

Plácido Domingo and Haigazian University Hit a High Note!

Two Operas, One Extraordinary Evening

GLENDALE -- Haigazian University is celebrating its 60th Anniversary on October 3rd with a black-tie Gala fundraiser and a performance by Grammy award-winning tenor and conductor Plácido Domingo in the title role of Woody Allen's production of Puccini's "Gianni Schicchi." The Dorothy Chandler Pavilion in Los Angeles will play host to the evening's celebration which will be co-chaired by Harry Nadjarian and Tina Segel.

Speaking of the upcoming celebration, Mr. Domingo expressed words of welcome and nostalgia. "My mother, who was a wonderful singer, studied with an Armenian vocal teacher, so I have had a lifelong admiration for the Armenian Community's rich tradition of music and performing arts. I am proud to welcome you to [the] LA Opera and I look forward to a wonderful celebration with you in our home."

The evening will begin with a champagne and Lebanese mezze pre-reception for Haigazian guests, followed by two stunning performances by the incomparable Domingo—first, on stage, to sing the title role in Woody Allen's production of the near-century old opera, "Gianni Schicchi" after which he will take to the podium and conduct Franco Zeffirelli's production of Leoncavallo's "Pagliacci."



Following the performances, the evening will continue in the prestigious Grand Hall where guests of the Anniversary Celebration will dine and mingle during the Gala Supper.

Honorary Committee members include Governor George Deukmejian, Baroness Caroline Cox, Vartan Grigorian, and Joyce Philibosian Stein. More special guests to be announced.

Haigazian University may be half a world away in Beirut, Lebanon, but its influence and purpose is felt globally. With many of its founding roots planted in the United States, the University has been preserving Armenian culture and preparing future educators in the Diaspora for nearly 60 years. This upcoming Anniversary is a celebration of both the School and all for which it stands.

Kirk Kerkorian Dies in Los Angeles at Age 98

Continued from page 1

Kerkorian was born in Fresno, Calif., in 1917 to Armenian-born parents. The family moved to Los Angeles in 1922 and at age 9, Kerkorian sold newspapers on street corners. He dropped out of school in the eighth

grade and became an amateur boxer.

From his humble beginnings, Kerkorian became one of the world's richest men. Tracinda Corp., Kerkorian's privately held investment company named for his daughters, Tracy and Linda, is MGM's largest shareholder with an 18.6 percent stake.

ԱՐԱՄ ՍԵՓԵԹՃԵԱՆԻ ԳՐՔԵՐԻ ԻՐ ԳԻՐՔԵՐՈՒՄՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՌԻՐՈՎ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Ամէն անգամ, երբ գրքի ներկայացման-չնորհանդէսի եմ ներկայ գտնուում հոգեպէս ուրախանում եմ, որ մեր գրականութեան գանձարանը հարատւանում է նորօրեայ լուծուցով, մի օղակ եւս զօղուում է այն դպրութեան ոսկեայ շղթային, որի յաւերժ դպրապետն ու ճարտարապետն է Սուրբ Մեսրոպ Մաշտոցը, եւ այսպէս հաւատարիմ մեր ռասվիրայ մեծաց՝ ստեղծագործական աննկուն ոգին շարունակում է մեր նորօրեայ արարողների մօտ:

Ահա շնորհանդէսի ուրախութեան շարժառիթը, որը տեղի ունեցաւ Յունիս 2, 2015 թ., երեքշաբթի երեկոյան Պրոպանքի Հայոց Առաջնորդարանի «Զօրայեան» թանգարանի դահլիճում Առաջնորդ Տէր Յովնան Արք. Տէրտէրեանի բարձր հովանաւորութեամբ եւ թէքէեան Մշակութային Միութեան կազմակերպութեամբ: Դահլիճը յագեցած էր հոծ թուղի ներկայութիւնը վայելող դպրասէր ու մշակութասէր հասարակութեամբ, որին ներկայ էին գտնուելու Տէր Վաչէ Արք. Յովսէփեանը, տէր Չաւէ Արզումանեան եւ տէր Մանուկ Մարգարեան աւագ քահանայ հայրերը:

Մտաւորական միջնորդութեամբ, մեծարանքի երեկոյ Նուիրուած Լիբանանահայ համալսարանի մտաւորական-գրող՝ Արամ Սեփեթճեանի վերջերս լույս տեսած երկու հատոր գրքերի՝ «Գրական հանդիպումներ» եւ «Ձայներ լուռութեան մէջ»: Երեկոն գուցադիպում էր նաեւ հեղինակի 80 ամեայ ծննդեան տարեդարձին եւ գրական ստեղծագործական 60 ամեակին:

Հանդէսի մեկնարկումը կատարեց թէքէեան Մշակութային Միութեան մասնաճիւղի տեսնապետ՝ Վաչէ Սեմերճեանը: Նա իր բարիկալտեան խօսքի մէջ դրուատանքով յիշատակեց մեծարեալի անցեալի ուղին ճիգ ու ջանքերով իմաստաւորութեամբ՝ ստեղծագործական կեանքով, ապա բեմ հրաւիրեց հայոց լեզուի եւ պատմութեան ուսուցիչ՝ Հրաչ Սեփեթճեանին ղեկավարելու երեկոյի հանդիսութիւնը:

Նա սրտագին արտայայտութեամբ ողջունեց դահլիճի ներկայութիւնը երեկոյի նպատակի բացատրութեամբ եւ ըստ յայտարարի բեմ հրաւիրեց առաջին արտայայտւողին եւ ներկայացնելով սօքթ. Արշակ Գազանճեանին՝ «Մասիս» շաբաթաթերթի իմբազրապետ եւ մեծարեալի վաղեմի մտերիմ բարեկամը: Տօքթորը իր ջերմ ու սրտագին եւ հակիրճ խօսքին մէջ ողջունեց մեծարեալի անխնայ ստեղծագործական կեանքն ու նուիրութեամբ կատարեց յեղափոխութեան պահանջատիրութեան ոլորտներում գրական աշխատանքները, յիշեց Լիբանանեան կեանքում իրենց շարունակող սերտ բարեկամութիւնը, աշխատակցումը մամուլի բնագաւառում եւ...

Հրաւիրուեց մտաւորական, դասախօս դոկտ. Մարգարեան Մարկոսեանը ներկայացնելով՝ «Գրական հանդիպումներ» հատորը: Դոկտորը ընթերցեց իր վերլուծական գրութիւնը, որը պատրաստուած էր բարեխօսութեան տարբեր ասպեկտներով դիտարկելով: Գնահատելի աշխատանք հեղինակի մտահորիզոնը, ճաշակը եւ արուեստը պատշաճօրէն ներկայացրած: Բեմ հրաւիրուեց ակադեմիկոս, դոկտ. Պրոֆ. Արտեմ Սարգսեանը, մեծարելի անձնավորութիւն իր օգտաշատ ծառայութիւններով: Նա իր սեղմ ու ամփոփ, բայց

ընդգրկուն եւ իմաստալից ողջոյնի եւ սրտի խօսքում ուրախութիւն յայտնեց մօտիկից ճանաչողութիւնը մեծարեալի հետ եւ զնահատեց Սեփեթճեանի գեղարուեստական գրելաոճը Արեւմտահայերէսի հարստացման ի խնդիր:

Հանդիսութեան գեղարուեստական բաժնում հիանալիօրէն ելոյթ ունեցան՝ նախ Լիլիթ Խոճայեանը քանոնի վրայ նուագեց երկու հայկական նուագներ, յետոյ Սալբի եւ Սօսի Քերքոնեանները սրինգով եւ տաւիղով նուագեցին հայկական եւ արտասահմանեան նուագներ: Նրանց վարպետօրէն ներկայացուած գործերը արժանացան բոլոր ծափերի:

Մի այլ միջոցում հայոց լեզուի ուսուցիչ՝ Յովհաննէս Սրկ. Գումրուեան տպաւորիչ առողջանութեամբ եւ ապրումով ընթերցեց՝ «Ձայներ լուռութեան մէջ» գրքի յառաջաբանագրութիւնը արժանանալով զնահատանքի: Խորիմաստ նւերից հրամցում է պատառիկ առ ի տեղեկութիւն հատորի բովանդակութեան՝

«Այժմ անցեալս աղմկող այս էջերը կրկին կ'ալեկոծեն ներաշխարհս... եւ արդարութիւն կը պահանջեն: Էջեր, որոնք թերթ առ թերթ կը խուժեն դէպի յիշողութեանս աւազանը իբրեւ պատկեր եւ յուշ-բանդակ, կամ ցանուցի եղած խոհերու յօղուածներ, որոնց մէկտեղումով ահաւասիկ կը կազմուին էջերը սոյն հատորին, իբրեւ խաչ-բուռ նուիրական»:

Այս գիրքը ներկայացրեց բոլորիս ծանօթ, սիրուած ու յարգուած հրապարակագիր, բանախօս եւ դասախօս պրոֆ. Օշին Քէշիշեանը: Նա իր դիրտարկումը՝ «Ձայներ լուռութեան մէջ» գրքի մասին շեշտեց կարեւորութիւնը ի մասնաւորի ցեղապանութեամբ հայրութեան պատճառած ահաւոր վնասներն ու անփոխարինելի կորուստները գրականութեան եւ մշակութային տեսակէտից:

Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանը իր կարճ ելոյթով գովաբանեց մեծարեալին գրականութեան բերած ծառայութեան համար եւ առ այդ նրան յանձնեց Մաշտոց Քոլէջի «Ոսկեդար» գնահատագիր-վկայագիրը:

Մեր խոստումնալից երիտասարդ հանդիսավարը՝ արժանաւոր որդին մեծարեալի, բեմ հրաւիրեց հօրը արտայայտուելու համար: Նկատուում էր յուզումնախառն տրամադրութիւն, գոհունակութեան հոգեվիճակ մեծարեալի մօտ ունկդիրն լինելով բոլոր գովաբանական, սիրոյ եւ յարգանքի արտայայտութիւններին, նա սրտագին շնորհակալութիւններ յայտնեց բոլորին՝ երեկոյի կազմակերպողներին, ելոյթ ունեցողներին, ներկայ գտնուող հարազատ ընկերբարեկամների ջերմ ու յարգալից, անկեղծ ու անխառն արտայայտութիւնների համար, նա առաւել ամուր եւ խրախուսութեամբ զգաց իրեն շարունակելու իր նուիրութեամբ:

Առաջնորդ Սրբազան Հայրը իր փակման կուռ խօսքի մէջ դրուատանքով անդադարձաւ մեծարեալի գրական ստեղծագործական կեանքին մաղթելով յարատւութիւն, նաեւ զնահատեց կազմակերպիչ վարչութիւնը, ապա Սրբազան Հօր պահանջից աղօթքով իր աւարտին հասաւ հանդիսութիւնը: Այնուհետեւ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

Ամուռանալի եւ յիշարժան երեկոյի տպաւորութեամբ թողեցի սրահը՝ մտքումս մտորելով ուրախալի ստեղծագործական կամքը, ձգտումը եւ նուիրութեամբ:

ՄՐՏԻ ԽՕՍԲ՝ ՈՒՂՂՈՒԱԾ ԱՐԱՄ ՍԵՓԵԹՃԵԱՆԻ ԻՐ ԳԻՐՔԵՐՈՒՄՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՌԻՐՈՎ

ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Ամնացորդ ջերմութեամբ կ'ողջունեմ Արամ Սեփեթճեանը, նախ եւ առաջ, իր ծննդեան յոբելեանական 80-րդ տարեդարձի բարեբաստիկ առիթով եւ կը մաղթեմ իրեն քաջառողջութիւն, արեւաշատութիւն եւ երջանկութիւն:

Նոյնպէս, կ'ողջունեմ Արամ Սեփեթճեանը, Հայոց Յեղասպանութեան հարիւրամեայ տարելիցին ձօնած «Ձայներ Լուռութեան մէջ» եւ «Գրական հանդիպումներ» 2014 թ. լույս ընծայած իր գոյգ հատորներուն կապակցութեամբ, որոնց գնահատումը կատարուեցաւ սպառիչ եղանակով:

Կ'ողջունեմ նաեւ օրուան նախաձեռնութիւնը ընձեռող թէքէեան Մշակութային Միութիւնը, որ կու գար կազմակերպելու հայ գիրի ու գրականութեան սպասարկուներէն, Լիբանանահայ գրող-մտաւորական Արամ Սեփեթճեանի, վերջերս հրատարած հեղինակութիւններուն քննարկման այս երեկոն:

Արամ Սեփեթճեանի ապրած չորս քսանամեակներէ բաղկացած տարիներու երեք չորրորդի ծրարումին մէջ կ'ընդգրկուի մեր բարեկամութիւնը, որ մտերմաբար կը շարունակուի մինչեւ օրս:

Այդ երկար տարիներու հոլովոյթի մէջ ողջունած էի իր ազգային, գրական, մշակութային, հայրենասիրական, պահանջատիրական եւ սպասուող ազգային նոր գարթօնքի ընդհանրական բնոյթի գաղափարախօսական մտորումները, որոնք կը յուզէին գիրք միշտ եւ ըստ առիթի, արտայայտութիւն կը գտնէին մամուլին յանձնած իր յօղուածներուն մէջ, յօղուածներ՝ որոնք, ի վերջոյ, պիտի գային գեղարուեստական համալուծումով մը ամփոփուելու «Ձայներ Լուռութեան մէջ» եւ «Գրական հանդիպումներ» խորագրեալ պատկառելի հատորներու էջերուն մէջ:

Բնաւորութեամբ համեստ, յարգալի, անկեղծ, հաղորդական եւ բծախնդի վարքագծի տէր Արամ Սեփեթճեան, միշտ նոյն այդ նկարագրի գիծերը ջերմութեամբ կը պահէր եւ գրական ստեղծագոր-

ծութիւններուն եւ ազգային-գաղափարախօսական բովանդակութեամբ հեղինակութիւններուն մէջ, ինչ որ կը տպաւորէր իր ընթերցողները:

Սեփեթճեան ըսելիք ունէր: Կ'ապրէր իր ըսելիքը, գոր կը վերածէր պատգամի: Իր մէջ գերիշխող էր լաւատեսութիւնը, անխտրական ոգին, հետեւողական կամքը, որոնք կ'ոգեւորէին գինք: «Խորհուրդ Ապրիլեան» մտորումներուն մէջ առաջնահերթ համարով տեղ գտած մեր ազգի առջեւ ցցուած մարտահրաւերները, ինչպէս՝ հայ ինքնութեան, լեզուի կատարելագործութեան, ազգային աւանդութիւններու, հոգե-մտաւոր արժէքներու եւ գիր ու գրականութեան անվթար պահպանման եւ զարգացման հրամայական որպէս:

Հայ մշակոյթի Յեղասպանութեան ճանաչումը, բռնադրաւուած հողերու վերադարձը հայ ժողովուրդին, թափուած արեան հատուցման հրամայականները եւ հասնող նոր սերունդներուն առողջ դաստիարակութեան կարիքը՝ իր գերագոյն հաւատամքը կազմած էին միշտ, որոնք կրնային արդիւնաւորուել հայ ժողովուրդի միասնութեամբ եւ միասրտութեամբ:

Ազգովին միասնակամութիւնը եւ բռնձքաւորումը այն միակ լուսաւոր ճանապարհն է, որ կրնայ առաջնորդել դէպի հայ Սփիւռքի կազմակերպումը: Ազգովին միասնութիւնն ու բռնձքաւորումը այն միակ հաստատ ճանապարհն է, որ կրնայ ուղղել դէպի Հայրենի կառուցներու զօրացումը, արտագաղթի կասեցումը, հայրենի թուաքանակի աճը եւ ժողովրդավարական կարգերու կոթողումը:

Այդ նոյն ճանապարհն էր, որ կրնայ առաջնորդել հայը իր դարաւոր ձգտումներու նուիրագործման «տէր կանգնելով իր մեծ թէ փոքր Լոյսի տաճարներուն ու խորաններուն», զօրաշարժի ենթարկելով իր նիւթական թէ իմացական կարողութիւնները... «Եւ իր վերջին հասցէն դարձնելով երեւանը», ինչպէս պիտի ըսէր Սեփեթճեան: Չկա՛ր այլ ընտրանք: Վարձքը կատար՝ սիրելի գրէգըբայր:

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----

Country: -----

Tel : ----- Email: -----

«ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԴԱԺԱՆ Է...»



ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ԶԷՊԷՃԵԱՆ

Ապրիլ 28, 2015: Քաթարէն աշխատանքային այցելութեամբ կը մեկնիմ թոքիօ: Առաջին անգամն է, որ ձապոն պիտի այցելեմ: Բնականաբար կը հետեւինք ձապոնի ճարտարարուեստական յառաջ-խաղացքին եւ գիտենք, որ այդ երկիրը իր արտադրութիւններով ողողած է աշխարհի շուկան, բայց նաեւ կարողացած է մ պատմութեան ընթացքին անոր սիրագործութիւններուն մասին: Անոր անցեալի նուաճողական եւ որոշ համեմատութեամբ նաեւ «բռնատիրական» ախորժակները լեցուցած են պատմութեան էջերը: Բայց նաեւ փոքր տարիքնէս միշտ ալ մեծ պատասառին վրայ դիտած ենք պատերազմական ժապաւններուն մէջ ճապոնական սիրագործութիւնները: Այսպիսով ներկայի ու անցեալի անոր «նուաճողական» իրավիճակները, տարբեր բովանդակութիւններով, ձապոնի նկատմամբ որոշ տրամադրութիւն ստեղծած են մտապատկերիս մէջ:

Քաթարէն մինչեւ թոքիօ թուիչքը պիտի տեւէր մօտաւորապէս տասը ժամ: Երկար թուիչքներու ընթացքին ընդհանրապէս պէտք է ձեւով մը զբաղուի, զի չզգալու համար, թէ կը գտնուիս «օդը»՝ դատարկութեան մէջ, եւ թէ տարբեր տրամադրութիւններ եւ հոգեվիճակներ կը ծագին ճամբորդողին ներաշխարհին մէջ:

Այդ երկար թուիչքին ընթացքին, չեմ գիտեր զուգարկութեամբ թէ բախտով, յիսունէ աւելի ժապաւններու շարքէն ընտրեցի հատ մը, որուն նիւթը կը վերաբերէր Համաշխարհային Բ. պատերազմին ընթացքի ճապոնական մեկուսացման բանտի մը մէջ ամերիկացի բանտարկեալներու կեանքին:

Ժապաւնը կը նկարագրէր ամերիկացի ողիմպիականի մարզիկ եւ ախոյեան Լուիս Զամբերինի կեանքը: Ան համաշխարհային մրցանակներ եւ մրցանիշեր հաստատելէ ետք կը զինուորագրուի ամերիկեան բանակին մէջ եւ Համաշխարհային Բ. պատերազմին գերի կը բռնուի ճապոնցիներուն կողմէ:

Ժապաւնը մէկ կողմէ կը նկարագրէ ամերիկացի գերեզմանատեղիներու տաժանակիր կեանքը, իսկ միւս կողմէ կը կեդրոնանայ Լուիսի պարագային եւ ճապոնցի բանտապահին հետ, որ բռնակալ մըն էր, անոր յարաբերութեան վրայ:

Ժապաւնը լեցուն էր Լուիսի կրած գրկանքներով ու անոր նկատմամբ եղած վիրաւորանքներով,

Լուիսի ներաշխարհի վերիվայրուները. կը ներկայացուի բանտապահին դաժան ու բիրտ վերաբերումը Լուիսի նկատմամբ՝ ճգմելու համար անոր ապրելու ձգտումն ու կամքը (քանի որ բանտապահը գիտէր, թէ Լուիս ախոյեան էր): Կան նաեւ Լուիսի վիրաւորուած ու վրիժառուի նայուածքները եւ մտորումները բանտապետին նկատմամբ. «Օր մը քեզ պիտի սպաննեն»:

Ժապաւնը լրիւ դիտեցի, եւ ինչպէս որոշ ժապաւններ, այս ալ իր ազդեցութիւն ունեցաւ ներաշխարհիս վրայ, ու մէջս սկսած ծագիլ մտմտուք մը. «Ես արդեօք ո՞ւր կ'երթամ»:

«Մեզի համար շատ կարեւոր է հաւաքական կեանք հասկացողութիւնը»: Ժիւնն է խօսողը՝ ձապոնի մեր ընկերութեան գործադիր տնօրէնը: «Մեր պատմութիւնը լեցուն է արիւնով ու դաժանութեամբ, եւ այլեւս չենք ուզեր այդ մէկը կրկնել: Կ'ուզենք նոր կեանք մը կերտել որպէս երկիր եւ հաւաքականութիւն»:

ձապոնի մէջ իմ քանի մը օրերու այցելութեանս ընթացքին ես վայելեցի այս «նոր կեանք»-ը: ձապոնցիք կրցած էին տեսնել, թէ իրենց պատմութիւնը «դաժան» եղած էր եւ «սխալներով» լեցուն: Ուստի՝ որպէս երկիր եւ հաւաքականութիւն, տենդագին կերպով լծուած են այդ «դաժան»-ը ու «սխալ»-ը սրբազրելու: Մէկ կողմէ կ'ապրիս ձապոնի յառաջխաղացքը, բայց նաեւ մարդկային կենցաղը, մարդոց նկատմամբ ճապոնցիներուն ունեցած յարգանքը ու տրուած արժէքին կարեւորութիւնը: Անոնք «դաժան»-ը եւ «սխալ»-ը սրբազրելով ստեղծած են նոր դաստիարակութիւն, որուն վրայ հիմնած են իրենց հաւաքական կեանքերը եւ այս՝ նոր գրաւականով: Անոնց հաւաքական այս կեանքերն են, որ այսօր յառաջ-խաղացքի մէջ են:

«Հայկական գաղութը կը հաշուէ մօտաւորապէս հարիւր հայ»: Դոկտ. Կրանտ Պօղոսեանն է խօսողը՝ Հայաստանի դեսպանը ձապոնի մէջ: «Չունինք գաղութի դրուածք, այնպէս որ դեսպանատունը նաեւ դարձած է հայութիւնը քով-քովի բերող հաւաքավայր»: Դոկտ. Պօղոսեան քսանհինգ տարիներէ ի վեր կ'ապրի թոքիօ: Եկած է որպէս համալսարանի դասախօս եւ ամպիոնի վարիչ, կը տիրապետէ ճապոներէն լեզուին: Ներկայիս Հայաստանի դեսպան նշանակուած է: Ցեղասպանութեան հարիւրամեակի առթիւ հրատարակած է գրքոյկներ ճապոներէն լեզուով՝ տեղացի ժողովուրդին ներկայացնե-

լու համար հայուն արհաւիրքը: «ձապոնցի ժողովուրդը ապրած է եւ գիտէ ցաւը, այնպէս որ կրնայ հասկնալ հայուն ենթարկուած Ցեղասպանութեան արհաւիրութիւնը», շարունակեց դոկտ. Պօղոսեան:

Այդ ցեղասպանութեան արհաւիրութիւնը եւ անոր հետեւանքները կը տեւեն մինչեւ այսօր: Սփիւռքը եւ հայուն կոտորակուած ու աշխարհով մէկ տարածուած իրավիճակն է: Ռազմիկ Պալեանը իրանէն անցած է Անգլիա եւ ներկայիս կ'ապրի թոքիօ: «Կը փորձենք ամէն ձեւով հայ մնալ», Ռազմիկն է խօսողը: «Տունը հայերէն կը խօսինք, որպէսզի գաւազներս վարժուին եւ սորվին: Ուրիշ գաղութներու նման կազմակերպուած չենք, որպէսզի կարենայինք 100-ամեակին առիթով պատշաճ կերպով նախաձեռնութիւններ կատարել», ըսաւ ան: Բայց Ռազմիկ ունէր «հպարտութիւն» մը, զոր բաժնեց ինծի հետ: «Տղաս, որ տեղական դպրոց կը յաճախէ, իր դասապահերու մէկուն որպէս նիւթ ներկայացուց Հայոց ցեղասպանութիւնը», եզրափակեց Ռազմիկ:

Հայ ամէն տեղ իր «ցաւը» կը դրսեւորէ որպէս յիշեցում, բայց նաեւ պահանջատիրութիւն:

Ապրիլ 30-ին ձապոնի վարչապետ Շինդօ Ապէ Միացեալ Նահանգներու ծերակոյտին առջեւ արտասանած իր խօսքին մէջ ըսաւ. «Մեր պատմութիւնը դաժան է: Կարելի չէ ժամանակին ընթացքը փոխել եւ վերադառնալ բռնութեան օրերուն ու չընել ինչ որ եղած է: Ես իմ յարգանքս եւ ցաւակցութիւններս կը յայտնեմ ամերիկացի ժողովուրդին եւ անոր բոլոր նահատակներուն, որոնք ինկան Համաշխարհային Բ. պատերազմին ընթացքին...»: Ու տակաւին, վարչապետը «համեմտութիւնը» ունեցաւ իսուելու պատմութեան ընթացքին իր երկրին «սխալներուն» մասին՝ տարածաշրջանի երկիրներուն նկատմամբ: «Մեր արարքները միայն դժբախտութիւն բերին ասիական երկիրներու ժողո-

վուրդներուն»: Եւ անպայմանօրէն կը սկսիս հարց տալ: Ե՞րբ պիտի գայ այն օրը, որ թուրքիան ալ «յանդգնութիւն»-ը եւ «համեստութիւն»-ը պիտի ունենայ՝ յար եւ նման ձապոնի, ընդունելու, թէ իրենց պատմութիւնն ալ «դաժան» է, եւ թէ իրենք ալ «միայն դժբախտութիւն բերին տարածաշրջանի երկիրներուն եւ ժողովուրդներուն»: Եւ դժբախտութիւնը մարդկային նահատակներն են, հողային կլանումը ու աւելին...

Բայց կը վերադառնամ օդանաւին մէջ դիտած ժապաւնիս: Համաշխարհային պատերազմը կ'աւարտի, ձապոն կը յանձնուի, ու գերիները ազատ կ'արձակուին: Այս պայմաններուն մէջ Լուիս պէտք էր ընտրութիւն կատարէր:

Լուիս չսպաննեց ճապոնցի բռնապետը, այլ որոշեց իր «վրէժ»-ը լուծել «նոր կեանքեր» կերտելով: Ան իր կեանքը նուիրեց հոգեւոր եւ մարդասիրական առաքելութեան՝ նոր կեանքեր եւ հաւաքականութիւններ ստեղծելով...:

Եւ հայուն պատմութեան փորձն ալ այդպէս էր: Ցեղասպանութեանէն ետք «նոր»-ը շինելով է, որ հայը վերապրեցաւ եւ ոչ թէ սպաննելով, այլ «նոր»-ն է, որ հայուն կու տայ ուժը եւ վճռակամութիւնը շարունակելու իր «աւանդ»-ը քիչ մը ամէն տեղ եւ մինչեւ թոքիօ: Այդ «նոր»-ին ուժով է, որ Ռազմիկին գաւազը ու բոլոր հայ մանուկները պիտի շարունակեն ներկայացնել Ցեղասպանութեան արհաւիրութիւնը՝ յիշելով եւ պահանջելով...:

Իսկ այսօր: Հայը պիտի շարունակէ իր երթը հարիւրամեակէն անդին, պիտի շարունակէ «նոր» կեանքեր կերտել ամէն տեղ, որովհետեւ «նոր» կեանքեր կերտելով է, որ հայը պիտի կրնայ զօրաւոր կերպով յիշել, յիշեցնել, պահանջել ու տակաւին պահանջատէր ըլլալ թէ՛ թուրքիոյ «պատմութիւնը դաժան» է, պէտք է «սրբազրուի», բայց նաեւ «նոր»-ը հատուցուի...:

COMING SOON
1001 nights
Authentic Middle Eastern Mediterranean Lebanese Cuisine
WORLD-CLASS HOOKAH LOUNGE ENTERTAINMENT PLEASANT INDOOR OUTDOOR SEATING
1829 S. Brand Blvd., Glendale, CA 91204 | 818.552.1001

ՀԱՅՐԵՆԱՏԻՐՈՒԹԻՒՆ ՎԵՐԱՆԱՅԵԼ, ՎԱԻԵՐԱՑՆԵԼ, ՎԵՐԱԿԵՐՑԵԼ

ՎԱՀԷ ՄԵՍՐՈՊԵԱՆ

Հայկական սփիւռքում՝ մասնաւորապէս Լոս Անճելոսում, իմպիւլս տալիս հայ համայնքում գործունէ են տասնեակ միութիւններ՝ հասարակական կազմակերպութիւններ, հայրենակցական միութիւններ եւ այլն: Բոլոր այդ կազմակերպութիւնները կամ միութիւնները պարբերաբար կազմակերպում են հաւաքներ, խնճոցներ, տօնակատարութիւններ...

Եթէ դիտարկենք զուտ հայապահպանման տեսակետից, դրանք այնքան էլ չուսալի չեն եւ հաւատ չեն ներշնչում, որովհետեւ այդ հաւաքների ժամանակ հանդիսատեսների, մասնակիցների ճնշող մեծամասնութիւնը յիստեն անց տարիք ունեցող մարդիկ են, որոնց մի մասն էլ հայերէնին լաւ չի տիրապետում եւ գրել կարողան էլ մոռացել է: Դրան յաւելած՝ յաճախ հանդիսութիւններն էլ անց են կացւում անգլերէն լեզուով: Եւ մեր յարգարժան հայրենակիցներից ոմանք խոստովանում են, որ իրենց երեխաները, աւելի շատ թոռները միմեանց միջեւ խօսելիս յարաբերում են անգլերէն լեզուով: Հայ դպրոցականներն ու ուսանողները միմեանց հետ խօսելիս յարաբերում են անգլերէն լեզուով: Կարծում եմ, որ բոլորը նկատած կը լինէք:

Հազուադէպ է, երբ երիտասարդներ են մասնակցում այդ հաւաքներին: Նրանց համար Հայկական Հարցը, ցեղասպանութիւնը, պահանջատիրութիւնը, պատմութիւնը հազուադէպ կիրառուող խօսակցութիւններ են:

Յարգելի ընթերցողն այս սորդերը կարդալիս հաւանաբար կը կշտամբի ինձ՝ յիշեցնելով «Արդարութեան քայլարշաւը»: Ճիշտ էք ընթերցող, դա չտեսնուած, աննախադէպ քայլարշաւ էր Լոս Անճելոսի պատմութեան ընթացքում, որին մասնակցեցինք շուրջ 160000 մարդով: Բայց ինչո՞ւ ենք մենք՝ հայերս այսպէս ազգովի համախմբում միայն օրհասական պահերին...

Անպայման պէտք է «դանակը ոսկորին հասնի» կամ 100 ամեայ ոգեկոչում լինի, որ համախմբուենք: Հարիւրաւոր հաւաքներ են լինում, որ գովազդում կամ հրաւերներ են անում, բայց 200 տեղանոց դահլիճում 20, 30 մարդ է հաւաքւում: Կարծում եմ, որ մէկս միւսին չի յարգում: Ինչ որ մէկին մեծարելու, ինչ որ մէկի գրքի շնորհանգիւսն, ինչ որ հաւաքի ժամանակ գալիս են միայն մերձաւորները: Շատերն արհամարում են եւ զանազան պատճառաբանութիւններով արդարացնում իրենց բացակայութիւնը:

Մասնակցութիւնը հարցի մի կողմն է: Դա պայմանաւորուած է կուսակցական պատկանելիութեամբ կամ տուեալ միութեան, կազմակերպութեան անդամ լինելու իրողութեամբ: Սակայն այդ հաւաքների ժամանակ բոլորը խօսում են միաբանութիւնից, համախմբութիւնից, բայց եւ խոչընդոտում, հակաքրոզութիւն են տանում այն կազմակերպութիւնների նկատմամբ, որոնք իրենց կազմակերպութեան նկատմամբ աւելի կամ պակաս միջոցառումներ են իրականացնում: Եւ դրանք էլ իրենց մտաւորական են կարծում, ովքեր տարբեր հաւաք-

ներում «կուրծք են թափ տալիս» իրենց կեղծ հայրենասիրութիւնը ցուցադրելու համար: Խօսում են հայ ազգի անունից (չհասկանալով, որ դրա իրաւունքը չունեն), կոչ անում համախմբութեան, միաբանութեան...

Հաւաքների բազմամարդու-թիւնը պայմանաւորուած է միայն տուեալ հաւաքին համայնքում ճանաչուած մարդկանց ներկայութեամբ:

Սակայն հաւաքները մարդկանց համար նաեւ տեսակցութեան գնալ է՝ ընկերներին, ծանօթներին բարեկամներին այնտեղ տեսնելու յոյսով:

Իսկ ի՞նչ են տալիս մեզ այդ հաւաքները, աւելի ճիշտ, ի՞նչ պէտք է տան:

Ամէն մի հաւաքի ժամանակ մի ինչ որ նախաձեռնութեանը, որը կարող է յայտնի լինել շատերին (որոնք ուղղուած են հայապահպանմանը, հայկական տարբեր հարցերի լուծմանը եւ այլն), պէտք է օժանդակել, սակայն դիտարկումները ցոյց են տալիս, որ օժանդակութիւնը կախուած է այն հանգամանքից, թէ որ կուսակցութիւնը կամ որ կազմակերպութիւնն է հանդէս եկել նախաձեռնութեամբ եւ արդէն չի կարելորու-ում, որ դրանք համահայկական են, հայկական հարցեր են լուծում, Հայ Դատի խնդիրն են առաջ տանում:

Ցեղասպանութեան ոգեկոչման 100 ամեակից յետոյ այլեւս անհրաժեշտութիւն չկայ աշխարհի երկրներին համոզելու, որ նրանք ցեղասպանութեան ճանաչման ու դատաւարման բանաձեւեր ընդունեն: Արդէն 26 երկիր, ԱՄՆ 44 նահանգ, միջազգային հեղինակաւոր կազմակերպութիւններ, տարբեր երկրների նահանգներ, շրջաններ, քաղաքներ նմանատիպ բանաձեւեր ընդունել են: Այժմ հերթական քայլը մեր պահանջատիրութեանը հետամուտ լինելն է: Ցեղասպանութեան 100 ամեակի ոգեկոչմանը ընդհանուր մեր շուրթերին էր «Յիշում եմ, պահանջում եմ» կարգախօսը: Բայց այս կարգախօսը կարծես թէ ամբողջական չէ եւ յստակ չէ ով ինչ է պահանջում: Տրաբանութիւնը յուշում է, որ պարտաւոր ենք պահանջել մեր հողերը՝ ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրօ Ուիլսոնի իրաւարար վճռով մեզ յատուցուած իրաւունքները: Իրաւաբանական տեսակէտից այն, ինչ կարող ենք պահանջել: Եւ այս պահանջատիրութեան համար առաջարկում եմ ընտրել այս յօդուածի վերնագիրը՝ «Վերանայել, վաւերացնել, վերակերտել» Հայրենասիրութեան իրաւունքը: Այսինքն՝ Սեւրի Դաշնագիրը ստորագրած պետութիւնները (եւ ոչ միայն) պէտք է ընդունեն Հայոց հայրենասիրութեան իրաւունքը, վերանայեն այդ պայմանագիրը, վաւերացնեն իրենց խորհրդարաններում, որոշում կայացնեն յանուն արդարութեան եւ հնարաւորութիւն ընձեռնեն հայութեանը վերակերտելու մեր պատմական Հայաստանը 162000 կմ տարածքի վրայ:

Միջազգային ատեաններում շատ են խօսում Քրդական պետութեան ստեղծման շուրջ: Լատիւրաւար վճռի՝ Քրդաստան պետութեան հիւսիսային սահման-

ները Արեւմտեան Հայաստանի հարաւային սահմաններն են: Ուրեմն, եթէ ստեղծուած է Քրդաստան պետութիւն, գոլգոթեաբար պէտք է վերականգնուեն նաեւ Արեւմտեան Հայաստան Պետութեան սահմանները: Արեւմտեան Հայաստանի վերակերտումը օրակարգային հարց է այլեւս միջազգային ատեաններում, մի շարք երկրների կառավարութիւններում ու խորհրդարաններում:

Մեր պահանջատիրութեան հարցում արդիւնաւէտութիւնը հայրենասիրութեան քրոզութեան տարածումն է: Շատերը չեն պատկերացնում դրա իրագործումն ու կատարման սկզբունքները: Բացատրական աշխատանք պէտք է կատարել ամենուրեք: Պահանջատիրութիւնը մեր քաղաքական պայքարի ամենագլխաւոր թեման պէտք է դառնայ: Գլխաւոր խնդիրն էլ՝ իրաւարար վճռի իրականացումը:

Հայկական բոլոր համայնքներում՝ աշխարհի բոլոր ծայրերում, բոլոր տեսակի միջոցառումների ժամանակ պէտք է խօսուի Ուիլսոնեան իրաւարար վճռի՝ Արեւմտեան Հայաստանի վերականգնման եւ միասնական Հայաստան պետութեան մասին: Բոլոր միջոցառումների կազմակերպիչները պէտք է կազմեն համապատասխան պահանջատիրական գրութիւններ, նամակներ, ուղղուած ԱՄՆ նախագահին, սենատին, կոնգրեսին, Սեւրի պայմանագիրը ստորագրած պետութիւնների ղեկավարներին ու խորհրդարաններին, ՄԱԿ-ին, ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհրդին, պահանջելով ի կատար ածել 1920թ. Նոյեմբերի 22-ի ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրօ Ուիլսոնի իրաւարար վճռը: Այս գործընթացով մենք կը միջազգայնացնենք իրաւարար վճիռը, կայստէականացնենք հարցի լուծումը եւ կը ստիպենք կառավարութիւններին, միջազգային կազմակերպութիւններին լրջօրէն մտածել մեր ազգի հայրենասիրութեան իրաւունքի շուրջը: Հարիւրաւոր պահանջատիրական նամակներ գրելով «կարթնացնենք» նրանց եւ կը ստիպենք յաճախակի խօսել մեր իրաւունքների մասին՝ մեր ազգի գլխաւոր նպատակի՝ Միացեալ Հայաստանի վերակերտման համար: Պահանջատիրական այդ նամակները պէտք է նրանց զրասեղանների ամենօրեայ «հիւրը» լինի:

Բոլոր պետութիւնները պէտք է վերանայեն իրենց պայմանագրային պարտաւորութիւնները, վաւերացնեն Սեւրի Դաշնագիրը եւ միջոցներ ձեռք առնեն դրա իրականացման համար:

Ընդհանուր գնալով Սեւրի Դաշնագրի 95 եւ 100 ամեակներին, մեր պահանջատիրական նամակների «հեղեղ» ներքոյ այդ պետութիւնների ղեկավարները, խորհրդարանները կը սկսեն

քննարկել հարցը, կը միջազգայնանայ այն եւ մեր խնդիրները՝ Հայկական Հարցը կը դառնայ քաղաքական ատեաններում օրակարգային հարց: Ինչպէս Ցեղասպանութեան 100-ամեակը ոգեկոչեցինք, նոյն համախմբուածութեամբ պէտք է պայքարենք մեր պահանջատիրութեան համար: Մեր Ազգային Հարցին՝ մեր պահանջատիրութեանը ոչ ոք չի անդրադառնայ, եթէ մենք դրա մասին չխօսենք, չազդարարենք: Օր ու գիշեր քաղաքական գործիչները դրա մասին պէտք է մտածեն: Այժմ մեր «Արդարութեան քայլարշաւը» մեր պահանջատիրական նամակներն ու գրութիւնները պէտք է լինեն: Իսկ ապրիլսանչորսեան քայլարշաւները պէտք է փոխարինենք Նոյեմբերի 22-ի (Իրաւարար վճռի ստորագրման օրը) պահանջատիրական քայլարշաւով: Մեր մարտավարութիւնը փոխուած է, ուրեմն քայլարշաւի օրն էլ պէտք է տեղափոխենք: Եւ աւելին՝ քայլարշաւները նպատակարար մար է անցկացնել Ուաշինգտոնում՝ Սպիտակ Տան եւ Ներկայացուցիչների Տան (Կոնգրեսի) դիմաց, որպէսզի մեր պահանջատիրութեան հարցը անմիջական հասցեով տեղ հասնի:

Բոլոր այն կազմակերպութիւնները, որոնք կոչուած են զբաղուելու մեր պահանջատիրական հարցերով, իրենց գործողութիւններում պէտք է բացառեն միւս կազմակերպութիւնների հասցեին վատաբանական, նախանձախնդիր, արհամարական, վիրաւորական արտայայտութիւններից: Եթէ կոչուած ենք մեր խնդիրներն առաջ տանելու հայ ազգի բարբօրութեան, ապագայի հզօրացման ուղիով, պէտք է միմեանք հանդէպ հանդուրժող լինենք, յարգենք մէկս միւսին: Իսկ թէ ով ինչ ուղիով կ'ընթանայ, ինչ մարտավարութիւն կ'ընտրի այդ խնդիրների իրականացման ճանապարհին, ժամանակը ցոյց կը տայ, քաղաքագէտները, ժողովուրդն իր ճշգրիտ գնահատականները կը տայ:

Մեր՝ հայութեան գործն արդար է: Մենք պէտք է պայքարենք, կերտենք մեր Միասնական Հայաստանը, վերադարձնենք Մասիսը՝ մեր խորհրդանիշը, մեր պայքանական հողերը, մշակութային կոթողները, քաղաքները, գիւղերը...

Իսկ մենք՝ հայերս միմեանց հետ ամէն մի հանդիպման աւարտին պէտք է վստահ, համոզուած ասենք. «Ուիլսոնեան Հայաստանը մեր Հայաստանն է եկող տարի հանդիպում ենք (Վանում կարստում, Կարինում...)»: Պարտադիր չէ, որ դա եկող տարի չլինի, այլ 5, 10 տարի յետոյ: Մենք կը սպասենք, կը պայքարենք, համոզուած լինելով, որ դա անպայման իրականութիւն է դառնալու: Օն առաջ, հայե'ր...XXI դարը մերն է լինելու:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Գնահատելով «Մասիս» շաբաթաթերթի Քսաններու նահատակութեան 100րդ տարելիցի առթիւ նուիրուած համարի բովանդակութիւնը, Տէր եւ Տիկ. Վարդան Լեւանեան 150 տոլար կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթի ֆոնտին:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Գնահատելով «Մասիս» շաբաթաթերթի Քսաններու նահատակութեան 100րդ տարելիցի առթիւ նուիրուած համարի բովանդակութիւնը, Տիկ. Ռիթա Պալեան 100 տոլար կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթի ֆոնտին:

ՔԱՒՈՐ ԱՊՐԱՄԸ (Աբրահամ)

Ռ. ԿՈՐԻԻՆ

Մեր շրջապատում շատերը նրան քաւոր Ապրամ կամ քաւոր էին անուանում՝ պըն. Աբրահամ անունի փոխարէն, մեր ազգականները, մեր փողոցի դրացիները եւ խանութպաններն եւս քաւոր էին կոչում, մեծ ու պզտիկ քաւոր էին ասում, քաւոր բառը նրա ինքնութիւնը յայտնող անունն էր դարձել, անբաժանելի մասնիկը, քաւոր մականունը տեղը գիջել էր գոյականի: Բոլորն էլ յարգանքով էին վերաբերւում նրա հետ, չպատահեց մի դէպք, որ մէկը իր հետ կոռէր, թթու-վիրաւորական խօսք ասէր կամ նրան բամբասէր: Նրա անյիշաչար, բարեսիրտ եւ վեհանքն բնաւորութիւնը իրեն արժանի էր դարձնում յարգանքի, եթէ նոյնիսկ թիւրիմացութիւն էր առաջանում, առաջին հոգին ինքն էր, որ ներողամիտ էր գտնւում եւ աշխատում էր խռովութիւն եւ բարդոյթ չստեղծուի, հաշտ ու խաղաղ շփումները շարունակուեն:

Այս հարագատութիւնը մէկ կամ երկու տարուայ պատմութիւն էր, այլ՝ երկար տարիների արդիւնք էր, փորձով եւ արարքով էր երեւան եկել էութիւնը: Նա մեր շէնքի մէջ էր ապրում իր ծերացած մօր հետ: Էն սկիզբները մեր շէնքը շէնքի հաշուի չէր, այլ հատուցութեամբով կողք-կողքի սենեակներ: Բակի ներքեւում հայրս երկու սենեակներ էր սարքել տուել ոչ բաղնիս ոչ էլ յարմար խոհանոց: Սենեակներից մէկը քաւորն էր նստում, միւսն էլ մեր հարագատներից փոխն ի փոխ ապրում եւ հեռանում էին կամ հայրենադարձութեան նպատակով կա՛մ առաւել յարմար բնակարան տեղափոխուելով: Ապրում էինք սովորական կեանքով առօրեայի գոյապրուստի մտահոգութիւններով:

Էն օրերին, 1953-ական թուականներին մեր նման ընտանիքներում բաղնիսը շատ տարածուած չէր, գուգարանից օգտուում էինք նաեւ որպէս բաղնիս ջուրը տաքացնելով, մեծերը դոսի բաղնիսներից էին օգտուում, իսկ ամուսն եղանակին մայրիկը մանր երեխաներիս լողացնում էր բակի անկիւնում գտնւող գուգարանում, իսկ ձմեռները՝ տան մէջ դրուած մեծ կոնքի(տաշտ) մէջ: Խոզովակաշարով ջուր չէր անցնում տները, խմելու ջուրը դոսից էինք դոցլերով գնում, իսկ այլ գործածութիւններ չհամար նախապէս ջրով լցուած ջրամբարից էինք օգտուում, դժուարութիւններով կեանք մեր ծնողների համար, այդ բոլորից անտեղեակ երեխաներս անհոգ մեր առօրեայ կեանքն էինք ապրում թուովալով:

Մեր փողոցի սկզբնաւորութեան ձախ անկիւնում, մի ջրհոր կար 25 մետր խորութեամբ, Յակոբ անունով մէկը իր ընկեր՝ Գաբրիէլի հետ այդտեղից պարանիս դոցլ կապած ջուր էին հանում եւ ծախում, ծանր եւ յոգնեցուցիչ աշխատանք: Ջուր գնելու համար մարդիկ շարք էին կանգնում ջրամաններով: Լուացքի եւ բակի ծաղկանոցի համար ջրամբար ունէինք շէնքի տակը գետնի մէջ փորուած եւ պատերը ցեմենտով սուսղած: Դոսից առնով ջուրը գալիս եւ լցւում էր մեր ջրամբարը, անշուշտ դա կատարուում էր հերթականօրէն, քանի որ դրացիները եւս նոյն վիճակն էին ներկայացնում:

Էն օրերին նախքան որ տարածքը բնակելի դառնայ, հայրս, մօտակայքում, վաղուց կառուցուած մի տուն կար, ովագիս ամառի շրջապատում, ընդարձակ բակով, որը վարձել էինք, մեր ընտանիքը եւ Եղիշ հօրեղբօրս ընտանիքը Բեհլաթբազարի տեղափոխուցինք այս տունը, որի դիմացը վերից վար մինչեւ Քու Սանգի (լեռան անուն) անասնաման տափարկ տարածութիւն էր դաշտային բոյսերով, փուշ ու տատասկով ծածկուած, ուր երեխաներս գնում էինք մորերս եւ մողէզ բռնելու, նրա միջից գետ էր անցնում ափերը սաղլիկ(կարճ), ձմանը անձրեւների եւ ձնհալի ժամանակ վարարած ջուրը յորդում էր ափերից: Յետագային գետի կողքերը քարէ պատերով ամրացուեց ու բարձրացաւ, գետի յատակն էլ խորացաւ շարունակ վարարուն ջրի հոսքով:

Մենք առաջին բնակիչներն էրանք, որ տան հիմք դրինք տափարակ դաշտում Թեհրանի մայրաքաղաքի կենտրոնից շատ հեռու: Հետզհետէ թաղը զարգացաւ եւ դարձաւ այսօրուայ Թեհրանի կենտրոն՝ լաւ քաղաքամասերից բարձրադիր ճարտարապետական կառուցուածքով շէնքեր, քաղաքամասը «Սասուն» անունով կոչուեց, պաշտօնական անունը՝ Նարմաք-Փեղար Սանի:

Այն օրօք որ քաւորն ու մայրը եկան բնակուեցին մեր շէնքում, քաւորը չափահաս տարիքումն էր, աշխատում էր իր սեփական գործով կտուրների կարագատութեամբ, վարպետ արհեստաւոր էր: Քաւորը լաւ կագրուրուած եւ ոսկրոտ կազմուածք ունէր, միայն քաւորի քիթը գոնող չեջաքարի նման դրուած էր երեսի մէջտեղում, որը ոչ հաճելի տեսք էր տալիս դէմքին եւ չէր համապատասխանում իր մեծադիր նկարի հետ, որը կախուած էր սենեակի պատից, գեղեցկատեսիլ դէմքով, մի օր հետաքրքրութիւնից մղուած հարց տուի.

«Քաւոր ինչպէ՞ս է եղել քիթը այսպէս խոշոր է ու ծակ-ծակ՝ անդուրեկան տեսք է ստացել».

«Օ՛հ, ցաւալի պատմութիւն ունի, աշխատանքի ժամանակ ետացող կուպրը գետնից չուանով դէպի կտուրը քաշելիս թափուեց դէմքիս վրայ, ինչ սոսկալի աչրոց, հագիւ ինձ հասցրի ջրի մօտ: Բուժումը երկար տեւեց, երեսիս մորթին լաւացաւ, բայց քիթս հասցէս տգեղ մնաց որպէս տխուր իշատակ, այդ դէպքից յետոյ տեսողութիւնս նոյնպէս տկարացաւ կրելով թանձր ապակիներով ակնոց:

Քաւորի մօր անունը Սառան էր, բայց բոլորը իրեն կոչում էին քաւորմէր: Նա յաճախ գանգատոււմ էր հիւանդութիւնից՝ գլխացաւից, բայց այդ վիճակում տան գործերը եւ եփ ու թուխը ինքն էր կատարում, ընկճուած, տանջուած կին էր: Նրա մի աչքը տկար էր եւ չիմացայ ինչու այդպէս սպիտակած վիճակ ունէր: Դժբախտ կին էր ոչ բախտաւոր ամուսնու կողմից, քաւորը երբեք չխօսեց դրա մասին, մի տեսակ քաշուում էր, բայց այն ինչ կիսատ-պոատ լսէլ էի, մօր եւ հօր միջեւ խնդիրներ էին ծագել:

Քաւորի քաւորութիւնը սկսւում է մեր տնից: Նոր եղբայր ու թեւեմբ: Հայրս կնքահայրութեան յարմար թեկնածու է նկատուում պըն. Աբրահամին: Մկրտութեան արարողութիւնը տէր Ահա-

րոն քահանայի միջոցով կատարուում է մեր բնակարանում: Նորամանուկ եղբայրս մկրտոււմ է Նորիկ անունով: Այդ օրուանից պըն. Աբրահամը դառնում է մեր ընտանիքի կնքահայր- քաւորը եւ տիկ. Սառանը՝ քաւորմէր, նրանք հօրս կոչում էին Սանահէր, իսկ մօրս՝ Սանամէր:

Քաւոր Ապրամը մի քանի ընտանիքների եւս քաւոր է դառնում եւ այսպէս թաղում յորջորջուում է՝ Քաւոր Ապրամ:

Մեր բնակարանը ամէն մի քանի տարին մի անգամ մեր հայրը նորոգութիւններ էր մտցնում, երբ տնտեսած դրամ էր ունենում: Ջրի խողովակաշարութեան համար բաւական փոփոխութիւններ կատարուեց, շէնքի մէջ բաղնիս եւ առանձին խոհանոց կառուցուեց, քանի որ ես ամուսնանալու վրայ էի եւ յարմարութիւն պէտք էր մեզ:

Քաւորմէր Սառան շատ սիրալիր էր մեր բոլորիս հետ, անգամներ իր եփած կերակուրը քաւորի հետ մէկ սեղանի նստած վայելում էինք, հաճելի էր նրանց մօտ նստելը եւ ժամեր անցկացնելը, այսպէս էր երեւում որ բոլորս մէկ ընտանիքի անդամներ ենք: Երբեմն հայրս դասերի համար ինձ յանդիմանում եւ երբեմն էլ ծեծում էր, քաւորը եթէ տանը լինէր անմիջապէս իրեն հասցնում էր եւ չէր թողնում, պաշտպան էր կանգնում իմ կողմից խոստանալով՝ որ լաւ դաս կը սովորեմ:

Ողորմած հոգի հայրս մեր ուսման նկատմամբ հոգատար էր, ինքը գիւղում վարժապետ էր եղել եւ քահանայի որդի:

Իրանահայ ընտանիքներում շատ կարեւորութիւն էր տրուում ուսման եւ հայեցի դաստիարակութեան:

Մեր էն օրերին միթէ կարելի էր հօր երեսին մի խօսք ասել կամ չենթարկուել, սա գալիս էր խոր յարգանքից ծնողի հանդէպ: Մեր ներկայ օրերին դժբախտաբար տարբեր է, մանաւանդ այստեղ Ամերիկայում:

Նկատելով եղած բնակարանը մեզ համար նեղ է, քանի որ արդէն հայր էի դարձել եւ ունէի իմ անդրանիկ գաւակը՝ Այլինին: Ինձանից փոքր եղբայրս՝ Օննիկը, ամուսնացել էր եւ ապրում էր վարձով, յարմար տեսանք, որ ներկայ տան վրայ երկու յարկ աւելացնեք, սակայն սարքի արտօնութեան համար մեզանից պահանջեցին բակի ներքեւ սենեակները փլցնենք: Մտածեցինք քաւորին ինչ անենք, արդէն քաւորմէրն էլ մահացել էր եւ քաւորը մնացել էր առանձին: Դիմեցինք քաւորին, որ մի ուրիշ տեղ տուն վարձի, նա նեղացած ասաց.

«Ես ուրիշ տեղ չեմ կարող ապրել, այստեղից գնացողը չեմ: Քաւորին չստիպեցինք նկատելով երեսուն տարի հարագատօրէն միասին էինք ապրում եւ որեւէ անհանգստութիւն եւ դժուարութիւն չէր առաջացել մեր միջեւ, ուստի որոշեցինք վերելում մի սենեակ կառուցել իր համար: Այս մեր որոշումով նա շատ ուրախացաւ:

Մեր ընտանեկան կազմի միանաւան աշխատանքով կառուցուեց մեր երեք յարկանի շէնքը: Մեր շէնքի կառուցման որմնադիրն ու խորհրդատու եղաւ հօրս ամենափոքր եղբայր՝ Սաուդ հօրեղբայրը: Նա սկզբից եւեթ միւսեւ շէնքի աւարտը սրտցաւօրէն աշխատեց որպէս իր սեփականու-

թիւնը համարելով: Ծէնքի կտուրի եւ այլ տեղերի կարագատութեան գործերը քաւորն արեց ինքնամբով եւ հոգատարութեամբ:

Ծէնքը ուրախութեամբ աւարտուեց, առաջին յարկը յատկացուեց մեր ծնողին, երկրորդ յարկը՝ Օննիկին եւ ընտանիքին, երրորդ յարկը՝ ինձ, վերելի մէկ սենեակը յարմարութիւնով՝ քաւորին:

Քաւորը իր սենեակից շատ գոհ էր, խաղաղ ու հանգիստ ապրում էր:

Քաւորմօր մահից յետոյ քաւորին ստիպում էինք ամուսնանալ, սակայն մնում էր լուռ եւ չէր պատասխանում: Նկատելի էր, որ մի կարեւոր հարց զաղտնի է պահում եւ չի ուզում կիսուել:

Ծատ յաճախ բարձրանում էի քաւորի մօտ իր սենեակը, շէնքի տանիքը հարթ էր, այնտեղից մեր շուրջը պարզօրէն նկատելի էր, էն հեռուները հիւսիսային եւ հարաւային կողմերի բարձրադիր սարերն էին մեր աչքի առջեւ, գիշերն էլ երկնակամարը իր կէտին տալով կարագատական աստղերով: Այն օրերին մեր շէնքից բարձր շէնքեր քիչ կային, նորահիմն քաղաքամաս էր: Քաւորի մօտ նարդի էի խաղում եւ գրուցում էինք կամ իր յաճախողների համար կատարած աշխատանքի հաշիւն էի գրի առնում: Օրերից մի օր էլ երբ սենեակում նստած նարդի էինք խաղում ինքնաբերաբար առիթ ստեղծուեց իմանալու քաւորի շամուսնանալու գաղտնիքը.

«Քաւոր, մօրդ մահից յետոյ դու դարձել ես մենակ ու առանձին, արի ու ամուսնացիր, դժուար կը լինի ամուրի վիճակում:

Միասին մի երկու բաժակ օդի էինք խմել եւ տրամադրուել, քաւորը վերջապէս բացուեց ասելով.

«Միտե՛ք Ռուբին, ես հիասթափուած եմ կին ասած բառից, մի անգամ ամուսնացայ բաւական է, մտքիցս հանել եմ կին բառը, թող հէնց այսպէս մնայ, ինչ կար անցել է, իմ կեանքս էլ անցել է, էլ նոր ամուսնանալուս ժամանակը չի:

Իմ ուշադրութիւնը կենտրոնացաւ՝ «Մի անգամ ամուսնացայ, բաւական է», նախադասութեան վրայ եւ շարունակեցի հարց ու փորձս.

«Քաւոր, ինչպէս թէ նախկինում ամուսնացել ես, բա ի՞նչ պատահեց, ի՞նչ եղաւ կիւնդ, ո՞ւր գնաց:

«Նա չուգեց մօրս հետ միասին ապրել, յետոյ իրեն ուրիշ տղամարդու հետ յարաբերութեան մէջ գտայ, ձեռք բռնեցի, տարայ առաջնորդարան եւ ազատուեցի ձեռքից, ինչպէս կարելի էր հիւանդ մօրս լքել, ո՞ւմ յոյսին:

«Ուրեմն այսպէս, չմտածուած ամուսնութեան հետեւանք, ամուսնութեան կարեւոր ազդակներից սէրն է, որի հետ միասին տրամաբանութիւնը:

«Էն ժամանակ որ ամուսնացայ գեղեցիկ ներկայանալի երիտասարդ էի, լաւ գործ եւ եկամուտ ունէի, քիթս էլ այս վիճակի չէր: Ժամանակը անզգայ սահում էր առաջ առանց ծերանալու՝ ծերութեան նշաններ թողնելով մարդուն:

Օրերի առաջանալուն հետ շէնքի բնակիչները տարով մեծանում էին, հայրս մահացաւ 17 Մայիսի 1994 թ. ինստուն մէկ տարեկան հասակում: Հօրս կեանքը իմաստա-

**ԳԱԼ ՏԱՐԻ՝ ՎԱՆ (9)
ՊԱՏԱՌԻԿՆԵՐ՝ ԵՐԱԶԱՅԻՆ ԱՐԵՒՄՏԱՐԱՅԱՍՏԱՆԵՆ
ՊԵՐՆԵՏԻՔ ԵՒ ՈՒՐՖԱ**



ՎԱՐՐԳԵՍ ԳՈՒՐՈՒՆԵԱՆ

Յուլիս 10-ին հասանք Պէրէձիք:
Եփրատ գետի եզերքին շինուած այս քաղաքը երկար պատմութիւն ունի:

Ճամբուն վրայ հանդիպեցանք բազմաթիւ քարիւղատար «քամին» ներու որոնք թրքական նաւթահորերէն քարիւղը կը փոխադրէին դէպի Պաթմանի եւ Սղերթի գտարանները (կրնայ ըլլալ որ ծայրայեղ իսլամիստներու կողմէ տած քարիւղներն ալ մաս կը կազմէին այդ կարաւաններուն): Պէրէձիքը շինուած է խաչակիրներու վերակառուցած բերդին բլրան կողքին, գետեզերքին: Մինչեւ 1950-ական թուականներուն, քաղաքացիներէն շատեր կը զբաղէին ճամբորդները մասնաւոր նաւերով Եփրատ գետին մէկ ափէն միւսը տանելու շահաբեր գործով: Երբ 1950-ական թուականներուն կառավարութիւնը կամուրջ մը շինեց, այս նաւավարներուն գործը փչացաւ: Նաւավարները երբ տեսան որ իրենց բողոքներն ու խնդրանքները կ'անտեսուին կառավարութեան կողմէ, թուրք ճարտարապետը կը սպաննեն եւ մարմինը կամուրջէն վար կը նետեն... Թրքավայել լուծում:

Բազմաթիւ ժողովուրդներ կոխկրտած են այս վայրերը: Սուսներացիներէն ետք Ուրարտացիները, ապա Հիթիթները, Յոյները, Հռոմէացիները, Ասորիները, Պարսիկները եւ Հայերը: Հայկական Կիրիկեան իշխանութենէն ետք Արաբներն ու Սելճուկները չէին բաւեր, մէջ մըն ալ ձէնկիզ խանի վոսմակները, խաբեբայ խաչակիրները, Սալահատինը եւ վերջապէս Օսմանցի թուրքերը եկան տիրելու այս հողերուն: Արաբները, Յոյներուն նման, Օսմանցի թուրքերը կը գործածէին որպէս վարձկան զինուորներ, քանի որ թուրքերը ահաւոր ճիւղերներ էին, կարճ աղեղներով սարսափելի կռուողներ:

1915-ի Չարդերու ժամանակ, թուրք կառավարութիւնը հազարաւոր հայեր խեղճամահ ըրաւ Պէրէձիքի մօտ, Եփրատի ջրերուն մէջ: Հարիւրաւոր հայ աղջիկներ, որպէսզի չենթարկուէին թուրք խուժանին խէնէշ ախորժակներուն եւ արիւնարբու բնազդներուն, ինքզինքնին նետեցին Եփրատի ջրերուն մէջ, մահը գերա-

դասելով թուրքերուն անասական կիրքերէն եւ գազանային խժողովութիւններէն:

Եփրատ գետի եզերքին կայնած, կճրտող ակունքերով հոսող ջրերը կը դիտէի: Ինչ ճակատագիր Աստուած իմ: Այս գետը հոսող գերեզմանը եղաւ հազարաւոր անմեղ հայերու, եւ հիմա, ես հոս կեցած՝ չեմ գիտեր հիւանդ մարդուած գեղեցիկ տեսարաններուն վրայ, թէ անիծեմ հայոց կոյր Աստուածը որ օգնութեան չհասաւ այդ անմեղ ու դեռատի աղջիկներուն: Ինչ էր յանցանքը այդ գեղեցիկ աղջիկներուն: Արդեօք իմ կայնած տեղս սրբազործուած էր անմեղ աղջիկներուն ոտքի հետքերով: Քանիներ արդեօք այս վայրէջն ջրերը նետուեցան:

1900 թուականին 7000 հայեր կ'ապրէին հոս: Այսօր՝ 7 հատ անգամ չգտանք:

Այս օրերուն Պէրէձիքը նշանաւոր է իր մասնաւոր թուջնաբուծարանով: Արդարեւ, հսկայական «բնական» վանդակի մը մէջ 500-600 " Bold Ibis" թռչուններ կը բուծանուին զանոնք բնաջնջուած կամ կորուստէ փրկելու համար: Ինչ հեղինակը, թուրքը զբօսաշրջիկներուն կը ներկայանայ որպէս « մտահոգուող» պետութիւն քանի մը հատ շատ տգեղ թռչուններու պահպանիչն ու փրկարարը, մինչ անդին միլիոնաւոր մարդիկ կը ջարդէ, առանց թոյլի խղճահարութեան:

Պէրէձիքի բերդը նորոգութեան մէջ էր: Քաղաքը շատ արդիական է, բարձրարդի շէնքերով, մաքուր փողոցներով: Երջանը հարուստ է մանաւանդ պիստակներով: Հողը՝ կարմրորակ-սրճագոյն էր: Ինչ բերրի հող:

Կոտրուած տրամադրութեամբ Պէրէձիքէն ճամբայ կ'ըլլենք դէպի Ուրֆա:

5500 տարիներ առաջ, Հուրրիները հաստատած են այս քաղաքը: Պէրէձիքի նման բազմաթիւ ժողովուրդներ եկած ու անցած են այս շրջանէն: Մեծն Ալեքսանդր այս քաղաքը անուանեց Եդեսիա, ապա թուրքերը գայն վերանուանեցին Ուրֆա, իսկ 1920-ին Ֆրանսացիներուն դէմ կռուելուն համար անուանուեցաւ «Սանլի Ուրֆա»: Ուրֆան «Պանծալի Ուրֆա»։ Ուրֆան եղած է Նեստորական շարժումի կեդրոններէն մէկը եւ նաեւ խաչակիրներու պետութեան մայրա-

քաղաքը (1097-1144):
Ք.Ա. 132 թուականին Արամէացիները հոս թագաւորութիւն մը հիմնեցին եւ քաղաքը վերակոչեցին Օրհայի: Հայկական հին անունը Ուռհա է: Հայոց Տրզրան Բ. թագաւորը Ք. Ա. 95 թուականին Հայաստանին միացուց այս քաղաքը որ շուտով վերածուեցաւ շրջանի մշակութային մեծ կեդրոններէն մէկուն: Հայերէն եւ Պարթեւներէն ետք Հռոմէացիները գրաւեցին այս քաղաքը: Ք. Ե. 200 թուականին Եդեսիացիները Քրիստոնէութիւնը ընդունեցին որպէս պաշտօնական կրօնք: 944-1098 բիւզանդացիները, հայերը, արաբները եւ թուրքերը պատերազմեցան Եդեսիոյ համար, երբ վերջապէս Առաջին Խաչակրութեան ժամանակ (1144) Պոլոնիոյ Քոնի Պոլսոսինը լատինական իր իշխանութիւնը հաստատեց հոս: 1500-ական թուականներուն Օսմանցի Սուլթան Սէլիմը (Selim the Grim) գրաւեց այս շրջանները եւ 1637-ին, Եդեսիան միացաւ Օսմանեան կայսրութեան:
Ինչպիսի տեսանք, Հայերը շատ կանուխէն կապեր հաստատած էին Եդեսիոյ հետ: Քաղաքի Աբգար Թագաւորը, որ հայ էր, պատգամաւորներ դրկած էր Յիսուսի մօտ որպէսզի Եդեսիա գայ, զինք բուժէ եւ հոն հաստատուելով շարունակէ իր առաքելութիւնը ապահով միջավայրի մէջ: Թաղէսու եւ Բարթողիմէոս առաքելները հոն երթալով, քրիստոնեայ մկրտած էին

մեր նահատակներուն: Մզկիթին մէջ ծալլապատիկ նստած թուրքերը զարմանքով մեզ կը դիտէին:
Գիտէք անշուշտ որ 1890-ական թուականներու Համիտեան Չարդերու ժամանակ հարիւրաւոր հայեր Սբ. Աստուածածին եկեղեցին ապաստանեցան այն երջանիկ յոյսով որ Փրկչին Մայրը պիտի փրկէր զիրենք: Թուրքերը առօք- փառօք եկեղեցի մտնելով, խորանին առջեւ նահատակեցին ողջ ժողովուրդը եւ ապա սկսան եկեղեցին կողոպտել: Սբ. Աստուածածին եկեղեցին Արքեպիսկոպոսանիստ եկեղեցի էր, յարակից վարժարանով, ուր Չարդերէն առաջ 1140 աշակերտներ կ'ուսանէին:
Այցելեցինք նաեւ Բողոքականներու եկեղեցին, որ դարձեալ մզկիթի վերածուած էր: Բողոքականներու բողոքականութիւնն անգամ չկրցաւ զիրենք Չարդէն ազատել եւ պահպանել իրենց ժողովատեղին: Արդեօք Բողոքականները բողոքեցին առ Աստուած այս սարսափելի կոտորածներուն դէմ՝ չեմ գիտեր: Հաւանաբար ըսին՝ «այս է Աստուծոյ կամքը»...
1915-ի աքտորներու եւ Չարդերու ժամանակ, Ուրֆացիները գիտցան արժանավայել կերպով պաշտպանուիլ Մկրտիչ Եօթնեղբայրեանի առաջնորդութեամբ: 18,000 հաշուող թրքական բանակն



Աբգար Թագաւորը, սակայն իր յաջորդ Սանատրուկ Թագաւորը ետ հեթանոսութեան երթալով ոչ միայն սպանեց Թաղէսու առաքելը, այլ եւ իր աղջիկը՝ իշխանուհի Սանուխտը:
Սբ. Մեսրոպ Մաշտոցն ալ 5-րդ դարուն Եդեսիա երթալով փորձեց հայերէն գիրերը գտնել կամ վերահանարել:
19-րդ դարու վերջաւորութեան, ըստ Օրմանեան Պատրիարքին, 25,800 հայեր կ'ապրէին Եդեսիոյ Թեմին մէջ (1000 կաթոլիկներն ու 800 բողոքականներն ալ հաշուելով): Ուրիշներ կը հաշուարկեն որ հայերու թիւը 1914-ին 35,000 էր:
Ուրֆայի ամենամեծ եկեղեցին, կառուցուած 1847-ին, Սբ. Աստուածածին եկեղեցին է, այժմ Սալահատին էյեուպի Մզկիթը: Այս հսկայական եկեղեցիին մէջ չէինք կրնար չաղօթել: Անգամ մը եւս « Հայր Մեր»ն ու «Սուրբ Սուրբ»ը խնկարկուեցաւ առ Աստուած, միշտ այն յոյսով որ Աստուած հաւանաբար այս անգամ լսէ մեր աղօթքները, բայց ինչ օգուտ

ու պաշարպօղութենքը եւ զինամթերքի առատութիւնը չկրցան ընկճել մեր սքանչելի մարտիկներուն կամքը, սակայն մթերքներու եւ զինամթերքի սպառումը պատճառ եղաւ որ հայեր հերոսաբար նահատակուին կամ գաղթեն դէպի Սուրիա, Լիբանան եւ այլուր:
Ուրֆայի մէջ այցելեցինք Աբրահամի Աւագանը: Կ'աւանդուի որ Աբրահամ հոս ծնած էր եւ ապագային ալ հոս պահուրտած էր Աստուածանցիներու վրէժխնդիր թագաւորի հալածանքներէն փախչելով: Հրեաներու Եհովա Աստուածը պահեց եւ փրկեց Աբրահամին, մինչ հայերու կոտորածին...: Աւագանին մէջի ձուկերը կերակրելու համար եզերքի փերեզակները կուտեր կը ծախէին: Շատ հաճելի էր այդ ձուկերը կերակրելը, կ'արժէր տեսնել անոնց խմբային յարձակումը կուտերուն վրայ:
Ուրֆա երթալ եւ Ուրֆայի քեյպպը չուտել աններելի յանցանք էր: Հակառակ որ Ռամատանի մէջ էին թուրքերը, մեր քեյպպները եփուեցան եւ մենք ախորժակով ճաշակեցինք:

ԻՆՉՊԻՍԻ՞ ԵՐԱԶՆԵՐԸ ԿՐՆԱՆ ՄԵՋ ԵՐՋԱՆԻԿ ԴԱՐՁՆԵԼ

ԶԱՅՐՈՅԹԻՆ ԱՌՆՉՈՒԱԾ ԳՆՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Յուսախաբու թիւերը հոգեբանական իրավիճակ մըն է, զոր անկարելի է առնառազ մէկ անգամ չդիմադրուել մեր կեանքի ընթացքին: Ամենէն փոքր կացութիւններն անգամ կրնան մեզ յուսախաբ դարձնել: Ընդհանրապէս մարդիկ յուսախաբ կը դառնան երբ դուրս մնան աշխատանքէն, մերժուին իրենց նախընտրած համալսարանէն, անհաճոյ ժամանակ անցնեն իրենց ընկերներուն հետ, չկարենան գնել իրենց նախասիրած իրերը, եւ այլն:

Սակայն վերջերս, գիտնականներ յայտնաբերած են յուսախաբութեան նոր աղբիւր մը, որ աւելի հաւանական է քան վերոյիշեալները:

2014 թուականին, երկու հազար անձերու մասնակցութեամբ հետազոտութիւնը առիթ տուած է գիտնականներուն պարզելու համար թէ միջին հաշուով իւրաքանչիւր անհատ 16 երազներ կը փափաքի իրականացնել տուեալ ժամանակամիջոցի ընթացքին: Այս երազներու օրինակներ են՝ հեռաւոր երկրի մէջ ամառնային արձակուրդը վայելել, երաժշտական գործիք նուագել, նոր տուն գնել, եւ այլն: Հակառակ, որ երազներ ունենալը բաւական արկածախնդրական եւ հետաքրքրական է, ան կրնայ նաեւ ունենալ ժխտական հետեւանքներ: Հոգեբանները դիտել կու տան թէ մեր ամենէն տարօրինակ եւ արկածախնդրական երազները կրնան մեզ յուսախաբ դարձնել: Աւելին՝ այս երազները կրնան նաեւ մեզ մեկուսացնել մեր միջավայրէն:

Անցեալ տարուան ընթացքին, Psychological Science ամսագրին մէջ հրատարակուած ուսումնասիրութեան մը համաձայն՝ արկածախնդրական երազները կրնան ներկայիս հաճոյք պատճառել մեզի, սակայն երկար ժամանակի վրայ անոնք կրնան վերածուիլ դժբախտութեան: Ուսումնասիրութեան հեղինակները՝ Քուինի, Ճիլ-պերթ եւ Ուիլյամս կը բացատրեն թէ երջանկութեան նպաստող երազները անոնք են, որոնք կը զարգացնեն ընկերներուն հետ կապերը: Հետեւեալ 4 կէտերը կը նպաս-

տեն երջանկութիւն յառաջացնող երազներու ձեռք բերումին:

1- Ըստ հոգեբաններու մարդիկ պէտք է ջանան երազել այն երազներու մասին, որոնք կարելի է իրականացնել հաւաքական ջանքերով: Մարդ արարածի էութիւնը կ'ամբողջանայ իր միջավայրին հետ կապերուն շնորհիւ, նոյնպէս երազները կ'իրականան, երբ անոնք ընդգրկեն ընկերները եւ ընտանիքի անդամները:

2- Կարեւոր է ի մտի ունենալ թէ երազներու պարագային քանակի վրայ կեդրոնացումը կրնայ յուսախաբ դարձնել մեզ:

Կարելի է երջանիկ ըլլալ մի քանի երազներու իրագործումով, քան թէ բազմաթիւ կէս կատար երազներու իրականացման ուղղութեամբ աշխատանքով: Երազները պայման չէ, որ չափազանց «մեծ» ըլլան, անոնք կրնան փոքր ըլլալ, սակայն մեծ ուրախութիւն պատճառել մեզի:

3- Երազներու եւ նպատակներու մշակման ընթացքին անհրաժեշտ է նկատի ունենալ անհատին կարողութիւնները: Այլ խօսքով՝ երազները պէտք է հասանելի ըլլան: Վերացական եւ անհասանելի նպատակները դժուար է իրականացնել: Աւելին՝ անոնք կրնան չափազանց ճնշուածութիւն յառաջացնել եւ ի վերջոյ պատճառ դառնալ յուսախաբութեան:

4- Ըստ մասնագէտներու, թելադրելի է ժամանակի ընթացքին վերանեստութեան ենթարկել մեր երազներն ու նպատակները: Կեանքը մեր ենթադրածէն աւելի երկար է եւ ժամանակի ընթացքին կարգ մը երազներ կրնան ժամանակավրէպ դառնալ:

Իւրաքանչիւրիս արդար իրաւունքն է երազել: Երազները մեզի կ'օգնեն ըլլալու լաւատես եւ յոյսով լի: Սակայն, ոչ իրապաշտ երազներու ուղղութեամբ աշխատանքը կրնայ մեզ դժբախտ դարձնել եւ վատնել մեր ներուժն ու ջանքերը: Նուազ արկածախնդրական, սակայն հասանելի նպատակներու իրականացումը կրնայ նպաստել գոհունակութեան եւ երջանկութեան:

ՆԱԽԱԳԱՀ ՀԱՍԹՈՐԹԸ ՊԷՏՔ Է ՀԱՐՑԱՔՆՆՈՒԻ

Մարումնական էջ 8-էն

նիքի առանձաշնորհման» օրէնքի պատրուակով:

Չարմանալի չէ, որ նախագահ Հասթըրթի այցերը Թուրքիա 2002 եւ 2004 թուականներուն ֆինանսաւորուած էին Թուրք-ամերիկեան գործարար խորհուրդին կողմէ: Ուստի, 2004 թ. Յուլիսին Հասթըրթը հանդէս եկաւ կոշտ յայտարարութեամբ՝ խոստանալով խափանել Հայոց Յեղասպանութեան ճանաչման հետագայ բոլոր բանաձեւերը. խոստում մը, որ ան պահեց մինչեւ Ներկայացուցիչներու տունէն իր հեռանալը 2007 թ. Նոյեմբերին...

Հետաքրքրական է, որ Հասթըրթի անձնական հարստութիւնը աճեցաւ 270 հազար տոլարէն մինչեւ 17 միլիոն տոլարի ֆոնդը: Երկու տասնամեակ ծառայելու ընթացքին, այն պարագային, երբ անոր աշխատավարձը կազմած է տարեկան 175 հազար տոլար... Ուրկէ՞ անոր այդ միլիոնները...

Ներկայացուցիչներու տունէն հեռանալէն վեց ամիս անց Հասթըրթը սկսաւ օգուտ քաղել ֆոնդի ներքին մէջ թրքական շահերուն ծառայելէն՝ միանալով Տիքչտայն Շափիրոյի ընկերութեան իբրեւ լոպիստ՝ ներկայացնելով թրքական կառավարութիւնը, ի թիւս այլ յաճախորդներու: Ան համատեղ աշխատեցաւ Ներկայացուցիչներու տան մեծամասնութեան նախկին ղեկավար Տիք Կեփարտի հետ, երբեմն միասին ճանապարհորդելով Թուրքիա եւ միլիոնաւոր տոլարներ կիսուելով շահաւէտ լոպիստական վճարումներէն: Նախորդ շաբաթ, դաշնակցային մեղադրանքէն անմիջապէս ետք, Հասթըրթը հեռացաւ լոպիստական ընկերութիւնէն:

Այժմ պէտք է լիարժէք հետաքննութիւն իրականացուի Հասթըրթի դէմ առաջադրուած բոլոր մեղադրանքներով, որոնք շատոնց անտեսուած էին: Ամերիկեան հասարակութիւնը պէտք է իմանայ, թէ արդեօք ան կաշառուած է, կամ աւելի վատ՝ շան-

Չարմանալի է, որ ինչպէս գրեթէ բոլոր զգացումները, մեր առօրեայ կեանքի հաւատարիմ ընկերակիցներէն մէկն է: Չարմանալի է, որ անպայման իր հետքերը կը ձգէ մեր առողջութեան եւ տրամադրութեան վրայ: Այս բոլորին կողքին, զայրոյթը կրնայ ազդել մեր վարմունքին վրայ, նոյնիսկ ամենէն տարօրինակ եւ հետաքրքրական ձեւերով:

1- Չարմանալի կրնայ փոփոխութեան ենթարկել կարմիր գոյնի ըմբռնումը: Emotion ամսագրին մէջ 2013 թուականին հրատարակուած ամերիկեան հետազոտութեան մը համաձայն՝ կարմիր գոյնը մեծապէս առնչուած է զայրոյթի եւ ջղայնութեան հետ: Աւելին՝ կարմիր գոյնը կրնայ յառաջացնել ջղայնութեան եւ զայրոյթի զգացումներ, նոյնիսկ այն կացութիւններու պարագային, ուր կարելի է կանխարգիլել այս զգացումները: Հետաքրքրական փորձարկումի մը ժամանակ, մասնակիցները բարձր հակում ունէին ջղայնութեամբ նշելու այն մարդոց դէմքերը, որոնք կանգնած էին կարմիր պատի դիմաց:

2- Չարմանալի կրնայ ուղղուած ըլլալ Աստուծոյ: Թէեւ ընդհանրապէս չի խօսուիլ այս մասին, մարդիկ յաճախ զայրոյթ կը զգան Աստուծոյ հանդէպ: Այս ձեւի զայրոյթը կը յառաջանայ, երբ մարդիկ համոզուած ըլլան թէ իրենք աւելին կ'արժեն քան ինչ, որ կեանքը կը պարգեւէ իրենց: Աստուծոյ նկատմամբ զայրոյթը յատ-

կապէս սովորական երեւոյթ է հաւատացեալներու մօտ, որոնք համոզուած են թէ Աստուծոյ կամքով է, որ կ'ընթանայ իրենց կեանքը:

3- Չարմանալի կրնայ ազդել մեր քաղաքական ուղղուածութեան վրայ: Journal of Politics ամսագրին մէջ հրատարակուած հետազոտութեան համաձայն՝ Ֆէյսպուք օգտագործող մարդիկ հակամէտ են կարգալու այն քաղաքական յօդուածները, որոնք զայրոյթ կը պարունակեն: Այլ խօսքով, քաղաքական ծիրին մէջ մարդիկ կը փնտռեն այն լուրերը կամ տեղեկութիւնները, որոնք կրնան զայրոյթ պատճառել:

4- Չէնքի եւ զայրոյթի միջեւ գոյութիւն ունի հետաքրքրական հոգեբանական կապ մը: 2010 թուականին ամերիկացի գիտնականներու կողմէ կատարուած փորձարկում մը պարզած է, թէ զայրոյթի ժամանակ մարդիկ գէնքի նմանող իրերը կ'ըմբռնեն որպէս գէնք, նոյնիսկ այնպիսի վայրերու մէջ ուր անկարելի է գէնքի գոյութիւնը:

5- Չարմանալի կրնայ մեզ մղել նորարարութեան եւ արդիւնաւէտութեան: Հոգեբաններ պարզած են թէ ջղայնութիւնը եւ զայրոյթը կ'օգնեն, որ աւելի աշխոյժ դառնանք եւ յաւելեալ ջանք թափենք տուեալ աշխատանքի ուղղութեամբ: Չարմանալի նաեւ կ'օգնէ որ սրբազրենք մեր սխալները, որպէսզի կանխարգիլենք նոյնանման կացութեան կրկնութիւնը:

ՔԱԻՈՐ ԱՊՐԱՍԸ (Աբրահամ)

Մարումնական էջ 16-էն

ւորող պոէմա եւ նուիրել «Հայրական» խորագրով:

Յուլիսեան տաք օրեր էին, քաւորի առողջական վիճակը գովելի չէր, գնում էր բժշկի եւ դեղեր էր առնում: Հետզհետէ նիհարում եւ հիւստում էր, իրեն ինամուռ եւ հասնում էինք, նաեւ իր քեռու աղջիկը օգտակար էր լինում:

Բժիշկ էինք կանչում տանը, սակայն բուժումները օգտակար չէղան: Նա մատնուեց անզգայ վիճակի, մահու հրեշտակը խղճաց քաւորին, չթողեց երկար տառապի եւ տասնհինգ օրերի ընթացքում հոգին աւանդեց: Եթէ չսխալուեմ նրա մահը տեղի ունեցաւ Յուլիսի վերջը 1996 թ.:

Կազմակերպուեց յուղարկաւորութիւն-թաղում:

Քաւորի թարմ շիրիմի վրայ լուսինէն՝ ամենափոքր աղջիկս, կարդաց իմ գրութիւնը, որից մի հատուած բերում եմ այստեղ՝ Բնութիւնը գեղեցկութիւնների ամբողջութիւն է: Աստուծոյ արարչագործութեան մէջ մարդ - արարածը ամենակատարեալն է իր իւրաքանչիւր յատկանիշներով, նմանում է ծաղկաստանի մէկ ծաղիկին, ուր գտնուում են տարբեր տեսակի, գոյնի եւ բուրմունքի ծաղիկներ: Ծաղիկների ժողովածուն կոչոււմ է՝ ծաղկաստան, իսկ մարդ-արարածներինը՝ մարդկութիւն:

Բոլոր արարածները հաւասար են ծնւում, սակայն կեանքի պայմանները, միջավայրը եւ տարբեր ազդակներ առաջացնում են անհավասարութիւն: Հողեղէն արա-

րածը նմանում է ծառի, որի քաղցրահամ եւ առատ բերքը պարտական է հմուտ ու սրտցաւ պարտիզպանի, սակայն պատահականութեան թողնուած ծառը դառնում է բախտի ճակատագրին ենթակայ:

Քաւոր Ապրամը չունեցաւ հոգատար ձեռքերի պարտիզպանը, նա դպրոցի երես էր տեսել, սակայն ապրելով առողջ միջավայրում կարողացաւ շիտակ ընտրել իր կեանքի ուղին, արհեստ սովորեց, իր եւ մօր գոյութիւնը լաւապէս ապահովեց իր սեփական ուժերին հիմնուած:

Նա եղբայր ու քոյր չունեցաւ, ժառանգ չունեցաւ, որ սգան իր մահը: Թող անիծեալ լինի այն կնոջ արմատը, որ ամուսնանալուց յետոյ անհնազանդութիւն է անում, դաւաճանում եւ քայքայում է թէ իր եւ թէ ամուսնու կեանքը:

Անհոգ ու անտեսուած մեծացած քաւորը քայքայեց ազնիւ եւ բարոյական կեանքի ուղիներով եւ այդպէս էլ վերջ գտաւ նրա կեանքը: Նա փնտրող արհեստաւոր էր, ապրեց որպէս արժանապատիւ մարդէակ թողնելով բարի անուն յիշատակներով անմոռանալի, նա ոչ փառքի ձգտեց ոչ էլ գանձի, ձեռբաց էր եւ օգտակար, յարգելի մէկն եղաւ՝ բարի արարքներով: Ահա խոնարհ մի հայ, որ համեստ եւ բարեպաշտ ապրելակերպ ունեցաւ: Առածն ասում է՝ ինչ որ ցանես այն էլ կը հնձես, թոյլ տուէք աւելացնեմ՝ ինչ որ ջանում ես, քիչ թէ շատ վերադարձնում ես: Ինչ որ տուել էին քաւորին, դեռ աւելին վերադարձրեց իր մարդկային ապրելակերպով:

Թաթի ենթարկուած է թրքական կազմակերպութիւններու կողմէ, երբ Ներկայացուցիչներու տան

նախագահ էր, որ երրորդ հօգորագոյն պաշտօնն է Ուաշինգթոնի մէջ, նախագահէն եւ փոխնախա-

ՎԱՐԱՆ ԹՈՎՄԱՍԵԱՆ

Երկար ժամանակ չի անցել, այն անմոռաց օրից, երբ Արթուրը, Մարինէն եւ Անուշը, բնութեան մի չքնադ անկիւնում, հարազատների ու մտերմիմների ընկերակցութեամբ նշում էին իրենց ծնողների՝ Վահանի եւ Անահիտի ոսկէ հարսանիքը: Բոլորիս յիշողութիւններում սպաւորուած է, պաշտելի ծնողների առջեւ խոնարհման, նրանց մեծարելու եւ գնահատելու այդ անկրկնելի երեկոն, որից շատ բան սովորեցին բոլոր ներկայ գաւակները:

Ինչպիսի խորին ակնածանքի եւ ծնողին երջանկացնելու արարողութեան մենք ներկայ եղանք, երբ պարոն Վահանը մանկան պէս հրճուած էր ու կարծես ամբողջ աշխարհը իրենն էր այդ երեկոյ: Երգում էր ազգային խորատու երգեր, խօսում, կատակում, ծիծաղում, բոլորին ուզում էր երջանիկ տեսնել, օրհնում եւ աղօթք էր մրմնջում իր պաշտելի երեխաների ու թոռների համար...:

Որքան լուսաւոր յուշեր մնացին 2013 թուականի, Օգոստոսի 18ի այդ օրուանից...

Վարդերի մէջ իմ բալիկ,
Դու ինձ մոռացիր,
Բայց թէ փուշը բեգ խայթէ,
Կանչիր, ես կը գամ:

Արեւի տակ, լոյսի մէջ դու ինձ մոռացիր,
Բայց թէ մթնի բոց մարբէն, կանչիր ես կը գամ:

Ուր էլ լինեմ, կոուի մէջ կամ թէ հողի տակ,
Երբ էլ ցաւի մէջ ընկնես՝ ինձ կանչիր, կը գամ:

Յովհաննէս Ծիրազ

Երազի պէս անցաւ մի ամբողջ կեանք: Կեանք, որ սկսուել էր 1936 թուականի Օգոստոսի 6ին, Յարութիւն եւ Անահիտ թովմասեանների համեստ ընտանիքում, Սիրիայի՝ գեղատեսիլ Հալէպ քաղաքում: Վահանի պապը՝ Վահան Տէր Վահանեանը, Քրիստի եկեղեցու աւագ քահանան էր եղել, որի անունով էլ ծնողները որոշեցին կնքել Վահանին, իրենց առնակին: Վահան թովմասեան: Յետոյ աշխարհ եկան Սիրանը, թովմասն ու Միսաքը: Նրանք, հօրեղբայրը՝ թովմաս թովմասեանը, Հնչակեան կուսակցութեան հիմնադիրներից էր եւ 20 կախաղանների հերոս գործերից մէկը: Նրա թանկագին յիշատակին էլ հայրը միւս օրը կոչեց թովմաս: Ահա այսպիսի ազնիւ ու հայրենասէր միջավարում էր հասակ առնում Վահանը, շատ բան սովորելով իր նախնիների հերոսական կեանքից: Ձեւաւորում էր մի հրաշալի երիտասարդ, ուսումնաստեւնչ, հայրենասէր, ազգասէր: Եւ բնական էր, որ այսպիսի ընտանիքի համար հայրենիքը վեր էր ամէն ինչից: Ու 1946 թուականին թովմասեան ընտանիքը ներգաղթում է Հայաստան եւ հաստատուում Արթիկ քաղաքում, որտեղ էլ Վահանը յաճախում է դպրոց եւ աւարտում ոսկէ մետալով:

1954 թուականին նա ընդունւում է Երեւանի Կարլ Մարքսի անուան պոլիտեխնիքական համալսարան եւ 1959ին գերագանց աւարտում ուսումը:

Անմիջապէս հրաւիրւում է Երեւանի կաբելի գործարան, որտեղ 3 ամիս աշխատելուց յետոյ, բացառիկ աշխատասիրութեան եւ ընդունակութիւնների շնորհիւ նրան նշանակում են արտադրութեան պետ: Նրա ղեկավարած արտադրամասում աւելի քան 600



բանուոր էր աշխատում, որոնց Վահանը բազում գիտելիքներ էր փոխանցում եւ դա համարուում էր գործարանի լաւագոյն արտադրամասերից մէկը:

Վահան թովմասեանը սիրուած գնահատուած ղեկավար էր եւ իր վաստակի դիմաց արժանանում է տասնեակ տարբեր կարգերի պատուագրերի ու շքանշանների: 30 տարի նա աշխատեց այստեղ, լինելով լաւագոյն օրինակ, իրենից յետոյ եկող շատ երիտասարդների համար: 1963 թուականին կեանքը նրա համար գեղեցիկ անակնկալ պատրաստեց եւ նա հանդիպեց իր լաւագոյն կէսին, Անահիտ Սինանեանին, Հաջի Ներսէսի եւ Ալիս Սինանեանի սքանչելի դստերը:

Չանցած 2 ամիս նրանք ամուսնացան, կազմելով մի օրինակելի եւ բացառիկ ընտանիք: Նրանք երջանկացան 3 գաւակներով՝ Մարինէն, Անուշ, Արթիւր որոնց նուիրուեցին ամբողջ էութեամբ, տալով լաւագոյնը որ կարող էին, սէր, կեանք, առողջութիւն, այն ամէնը ինչ նուիրում է լաւ ծնողը իր գաւակներին, որպէս Աստծոյ լաւագոյն պարգեւ:

1988 թուականին Վահան թովմասեանի ընտանիքը տեղափոխուեց Ամերիկայի Միացեալ Նահանգներ եւ հաստատուեց Լոս Անճելոսում: Եւ չնայած բոլոր դժուարութիւններին, Վահանը կարողացաւ այստեղ էլ պահպանել ընտանիքի խաղաղ ու բարեկեցիկ կեանքը, եւ յարգուած ու սիրուած մնաց բոլոր կողմից: Նա սիրում էր կեանքը, իրեն շրջապատող մարդկանց: Նրանց հիւրընկալ տունը միշտ էլ հարուստ էր այցելուներով, հարազատներով, ընկերներով:

Այս համերաշխ գոյգը հաճելի էր բոլորին: Մարդիկ գնահատում էին Վահանին ու Անահիտին, իրենց մարդասիրութեան, մտերմիկ բնավորութեան եւ ուրախ սրտերի համար: Նրանց համար ապրել, նշանակում էր նուիրուել եւ գոհաբերուել դիմացինին:

Ապրել, ապրել, այնպէս ապրել,

Որ ուրիշի խիճում խիճաս, Որ ուրիշի ցնձուքի նման իմնդ էլ ցնձաս, իմնդ էլ թնդաս...

Տրուես նրանց լոյսի նման, եւ չխաբես յոյսի նման...

Պարոյր Սեւակ

Եւ բնական է, որ այսպիսի ծնողների գաւակները նոյնպէս դարձան հասարակութեանը պիտանի եւ հարազատին ու ընկերողը հաճելի մարդիկ: Վահանը արժանացաւ եւ թոռնիկների Ալիսիս, Սոֆիս, Ռայլըրտ, Տիգրան, որոնք եղան պապիկի կեանքի ամենամեծ ուրա-

ՀՈԳԵՐԱՆԳԻՍ



ԿՈՐԻԻՆ ԱՐ.Ք. ՊԱՊԵԱՆ

Հոգելոյս Կորին Ար.Ք. Պապեանի վախճանման քառասունքին առիթով, հոգեհանգստեան յատուկ արարողութիւն պիտի կատարուի Կիրակի, Յունիս 28, 2015ին, էնսիմոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մէջ, 5300 White Oak Ave., յաւարտ Ս. Պատարագի:

Սգակիրներ՝

Գալուստ եւ Յասմիկ Պապեան եւ գաւակները
Գրիգոր եւ Մարո Քէլէշեան եւ գաւակները
Տոբթ. Մհեր եւ Նինա Պապեան եւ գաւակները
Եւ համայն Պապեան, Պարսոմեան, Քէլէշեան, Մոմճեան, Աւագեան, Սերոբեան, Նիկոսեան եւ Սթանիշ ընտանիքները, հարազատներն ու բարեկամները

Հոգեհանգստեան պաշտօնէն ետք հոգեճաշ պիտի մատուցուի նոյն եկեղեցւոյ «Տիգրանեան» սրահին մէջ:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Հոգելոյս Կորին Ար.Ք. Պապեանի վախճանման առիթով, Պապեան, Քէլէշեան եւ Մոմճեան ընտանիքները, խորին շնորհակալութիւն կը յայտնեն Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեանց Միաբանութեանց, Թեմակալ Առաջնորդներուն, քաղաքական, ազգային, մշակութային, հայրենասիրական ու բարեգործական կազմակերպութեանց ու միութեանց եւ բոլոր անոնց, որոնք անձամբ, գրութեամբ, ծաղկեպսակով կամ նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց սուգին:

խութիւնը եւ դա նրա համար կեանքի աղբիւր էր: Աստծոյ ամէն առաւօտ, սրբապետերի առաջ նա աղօթում էր գաւակների ու թոռների համար, օրհնելով ընդունում ու ճանապարհուած ամէնքին:

Հայր... Բարութեան ու սիրոյ անմար աղբիւր...

Դժուարութեան պահին մեր տան ամրոց ու լեռ...

Հայր... Անգին ու միշտ ներող պաշտելի անուն: Մեր օճախի աննահանջ պահպան ու սիւն:

Հայր... Փառք Աստծոյ, որ նա եղաւ երջանիկ հայր ու ծնող: Նրա ամենափոքր ցանկութիւնն անգամ կատարում էր սիրոյ ու ջերմութեամբ կնոջ ու գաւակների կողմից: Արքաներին վալել յարգանք նա տեսաւ իր ընտանիքից եւ ծառայեց ու նուիրուեց նրանց մինչեւ վերջ, ամբողջ հոգով ու սրտով, որպէս օրինակելի հայր, ամուսին ու պապիկ: Երբ որդին՝ Արթուրը, 2000 թուականին հիմնեց Future Auto հաստատութիւնը եւ այն շարժողութեամբ պսակուեց, հայրը աշխարհի ամենաերջանիկ մարդն էր եւ ամէն օր օրհնում էր իր սիրատուն գաւակին: Որդին էլ հօր նման հայրենասէր ու բարերար եղաւ եւ յարգուեց ու գնահատուեց շրջապատի կողմից:

Այսպէս, խաղաղ ու երջանիկ ապրում էր այս ընտանիքը, մինչեւ ապրիլեան այն շարագոյժ առաւօտը, երբ յանկարծ Վահանը վատ գգաց, նախորդ օրուայ՝ Ապրիլի 24ին ունե-

ցած ծանր ապրումներից յետոյ:

Եւ այնկոծուեց ամբողջ ընտանիքը ու շունչը պահած, զինուորի նման կանգնեց նրա կողքին զիջել թէ ցերեկ, անելով հնարաւոր ու անհնար ամէն բան այդ թանկագին կեանքը փրկելու համար:

Բայց աւաղ, ճակատագիրը այլ բան էր նախատեսել: Վրայ հասաւ 2015ի Մայիսի 20ը եւ նրա աշխարհն ու կեանքը սիրող, կնոջը, գաւակներին ու թոռներին այնքան նուիրուած սիրտը կանգ առաւ, անհուն ցաւի մէջ թողնելով նրանց, ում երբեք չպիտի ցանկանար ցաւ պատճառել:

Հեռաւոր ժպտերես ու կատակասէր, մարդասէր ու հիւրասէր, ազգասէր ու առաքինի, բարի ու գոհաբերուող, աստուածապաշտ հայրն ու ամուսինը: Ահա թէ ինչ են գրում ընկերները Հայաստանից: Մարդ, որ ամբողջութեամբ սէր էր ու բարութիւն: Իսկ սէրն ու բարութիւնը կը մեռնի... Սէրն ու բարութիւնը չի մեռնի... Այլ կը ճամբորդի սրտէ-սիրտ, հոգուց հոգի...

Չար մարդը կը գայ ու կը գնա'...

Բարի մարդը կ'ապրի եւ միշտ կը յիշուի: Նրա յիշատակը պսակուած կը լինի աննման ու անմոռաց յուշողութիւններով:

Նա կը վերադառնայ իր հարազատների ժպտների մէջ, իր կեանքի գեղեցիկ ու անմոռաց յուշերով կը զարդարի այն տունը, որի պահպան հրեշտակը եղաւ թէ այս հողի վրայ եւ թէ երկնային այն կը ճախրի Վահան թովմասեանի բարի ու հրեշտակային հոգին:

Ջնչակեան Քսան Կախաղաններու 100-Ամեակը

